Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ԱՐՇԱԼՈՒՅՍ ԿԱՄՈՒՐՋԻՆ

280
907-66

280
907-ՍԵ
206
Մ-59
23 SEP 2009

„ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ԽՆԴՐՈՒ

ԾՈՒՐՔԸ

Գրեց

ՄԵՍՐՈՊ ՔԱՀԱՆԱՅ ՄԵԼԻՍԱՆ

1005
20924
Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Публичная Библиотека
7/XI-1922
Ереван, Мясницкая
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ԹԻՖԼԻՍ
Տպարան Մ. Վարդանեանցի
Типографія М. Вартанянца, Вельям. ул. д. № 7.
1901

2784

26.06.2013

Дозволено Цензурою. Тифлисъ 7-го Февр. 1901 г.

ԶՕՆ

ԱՌ ՅՈՎՍԷՓ ԱՒԱԳ ՔԱՀԱՆԱՅ ՄԵԼԵԱՆ

ՍԻՐԵԼԻ ՀԱՅՐ.

Քառասուն և հինգ տարի քո վարած ու պաշտած եկեղեցական և ազգային անբասիր ծառայութեանդ համար նուիրում այս փոքրիկ աշխատութիւնս։

Խոնարհ որդիդ՝

ՄԵՍՐՈՊ ՔԱՀԱՆԱՅ.

ԱՌԱՋԱԲԱՆԻ ՏԵՂ

Քահանայական դասակարգի բարտքման խնդիրը սկսեց առանձնապէս զբաղեցնել մեզ այն ժամանակից, երբ թեմական տեսչական պաշտօնս մօտեցրեց Երեւանի ու Թիֆլիզի հայաշատ թեմերի քահանաների հետ։

Միջոց ունենալով, իբրեւ նրանց կարգակից — ատիճանակից քահանայ ու ընկեր, շատ մօտից ծանօթանալու նրանց վիճակին, նիստ ու կացին ու ձգտումներին, որոշած էինք յատուկ մի աշխատութեամբ հանդէս հանել հայ ժամանակակից քահանային իրեն շրջապատող պարագաներով. սակայն վիճակագրական կարեւոր տեղեկութիւնների պակասումը, եւ ընտանեկան դրութեանս երերուն պայմանները — տեսչական պաշտօնի բարձվելուց յետոյ — արգելք հանդիսացան նպատակիս իրագործմանը։

Այսօր առանձին հետաքրքրութեամբ կարդալով սրբազան Արիստակէսի «Քահանայական Խնդիր» վերնագրով աշխատութիւնը, չկարողացանք լռեցնել այն ձայնը, որ խօսեց մեր մէջ այդ խնդրի նկատմամբ, եւ հէնց խնդրի կենդանի, առօրեայ նշանակութիւնը

վստահութիւն ներշնչեց գրի վերածելու առ այժմ սոյն մեր թռուցիկ դիտողութիւնները, թողնելով ապագային մեզ զբաղեցնող հարցի մասին մեր ծրագրած աշխատութեան լոյս հանելը:

Ուստի ընթերցողների ուշադրութեանն ու հարցասիրութեանը ներկայացնելով «Քահանայական Խընդրի» նկատմամբ մեր կարծիքները, խնդրում ենք ի նկատի ունենալ յետագայ երեք պարագաները.

Ա. Զգալով ու խոստովանելով հանդերձ, որ խիստ անհաճոյ է հանրական նշանակութիւն ունեցող հարցերի ուսումնասիրութեան փորձերն, ինչպէս է ներկայումս մեր առաջ դրված խնդիրը, կապել կենդանի անձնաւորութիւնների հետ եւ մանաւանդ կշռադատութեան մէջ դնել նրանց անձնական ու գործնական վերաբերմունքները, յայտնում ենք եւ այն, որ հնարաւորութիւն չունեցանք սոյն գործում այդպիսի անհաճոյ դրութիւնից ազատ մնալու. որովհետեւ ինքը՝ գերապատիւ հեղինակը հէնց թէ իր եւ թէ ուրիշ անձաւորութիւնների հետ անբաժան կապել է քահանայական խնդիրը, կարծես, նախամտածած եւ նպատակաւոր ծրագրով:

Այս պատճառով եւ հարկադրված եղանք Տէր Արիստակէս եպիսկոպոսի բացած ճանապարհով ընթանալու. նրա ձեռք առած չափերով չափելու նաեւ իր անձնական վերաբերմունքներն ու գործ դրած միջոցները քահանայական դատակարգը բարոյելու առթիւ:

Բ. Որքան եւ ցանկացանք՝ չկարողացանք գրքի մէջ շօշափված խնդիրները որոշ բաժանմունքների

վերածել այնպէս, որ տեղի չունենային նման մտքերի աւելորդ կրկնութիւններ. պատճառը՝ որոնելու է մեր քննութեան առարկայ դարձած աշխատութեան կազմութեան մէջ, ուր դիտողութիւնները, խորհրդածութիւնները չեն բաժանված որոշ գլխների, նայած իմաստներին, այլ տարածված, շաղ անցած են, նայած ընդմունքին ու պատմուածքին, որ տարված է ժամանակագրական կարգով, սկսած հեղինակի պաշտօնի մտնելու օրերից մինչեւ վերջին տարիներս.—եւ՝

Գ. Նայել ենք խնդիրների վրայ կանոնական տեսակէտից, չառնելով ի նկատի նոյն իսկ մեր ներքին կարծիքները կանոնի ժամանակակից թէ հնացած լինելու մասին, որ տեղ կունենայ յաջորդ մեր աշխատութեան մէջ:

«ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ԽՆԴՐԻ» ՁՈՒՐՔԸ

Ա.

«Որուամ շատ տուաւ, շատ խնդրեսցի ի նմանէ, եւ որուամ բազում առանդեցաւ, առաւել եւս պահանջեսցեն ի նմանէ»:

Ղ.—Լ. ԺԲ, 48։

«Խօսեցարուք զճշմարտութիւն իւրաքանչիւր ընդ ընկերի իւրում. զի եմք միմեանց անդամք»:

Պ.Ղ. — Եփ. Դ. 25,

Քրիստոնեայ հոգևորականի կենդանի օրինակը մեր Փրկիչ Յիսուս Քրիստոսն էր, որ երկիր իջաւ աշխարհը փրկելու, այլ ոչ աշխարհը դատելու համար։ Նա իր անհուն մարդասիրական դաղափարներով, կարօտաւոր մարդուն օգնութեան հասնելու անդադրում գործառնութիւններով, իր ներողամիտ, հեզ, սիրալիր վարմունքներով ընորոշեց թէ ինչպէս պիտի լինի Աստուծոյ տան պաշտօնեայն, մարդկային ազգի փրկութեան սուրբ գործին սպասաւորողը, մարդու և Աստուծոյ մէջ միջնորդը, հովիւը-հոգևորականը։

Քրիստոսից յետոյ ս. աւետարանի քարոզիչ ու տարածող և քրիստոնէական եկեղեցու կազմակերպող առաքեալները թէ իրենց անհատական կեանքով իրենց Մեծ Վարդապետի ցոյց տված ճանապարհով ընթացան և թէ նոյն հոգին, նոյն կերպարանքն ու տիպը տվեցին նոր կազմվող քրիստոնեայ եկեղեցիներին։

Առաքեալներից իւրաքանչիւր մէկը գործում էր, աշխատում էր ընդհանուր եղբայրութեան, նորածնունդ քրիստոնեայ ընտանիքի հոգեկան թէ բարոյական, նոյն իսկ և՝ որքան անհրաժեշտ էր՝ նիւթական կեանքի համար. իր կարգին՝ քրիստոնեայ ընտանիքն էլ հոգում, խնամում էր առաքեալին, իր հոգևոր հովին։ Քրիստոնեայ վարդապետը, գործիչը. հովիւը քրիստոնեայ ընտանիքի—եկեղեցու համար էր։ Թէ մէկի և թէ միւսի ձգտումները, շահերը, նպատակը անբաժան միմեանցից՝ հաւասարապէս ծառայում էին ընդհանուրի բարեկեցութեան ու պայծառութեան սուրբ գործին։ Եւ այս եկեղեցու, համայնքի գոյութեան, պահպանութեան, յառաջադիմութեան ու բարեկեցութեան բոլորատեսակ խնդիրները, կարիքներն ու հոգալիքները ընդհանուր եղբայրութեան—եկեղեցու մտածողութեան, կարգադրութեան և հոգատարութեան ենթակայ էին։

Այսպիսով՝ քրիստոնեայ ժողովրդի հովիւը, առաջնորդը որքան աւելի ուղիղ ըմբռնել է Քրիստոսի քարոզած վարդապետութիւնները, որքան Նրա նման նախ առնում է և ապա ուսուցանում, որքան աւելի է սիրտը անկեղծ սիրով դէպի տանջվող մարդկութիւնը և նետվող է գործի, ուր պահանջ է ներկայանում, որքան աւելի համբերութեամբ տանում է իր խաչը դէպի Գողգոթա, այնքան աւելի մօտ է Քրիստոսին և Նրա առաքեալներին, այնքան աւելի իրօք և՛ հաւատացող, և՛ հետևող է նրանց և աւելի արժանաւոր աշակերտ է Երկնային Վարդապետի, լինելով ընդ նմին և արժանաւոր պաշտօնեայ առաքելահիմն կենդանի եկեղեցու—ժողովրդի։

Այս տեսութեամբ՝ որքան հոգևորականը Փրկչի ցոյց տված, գծած, բացած ճանապարհից չեղվի, հեռանայ՝ այնքան աւելի անարժան պաշտօնեայ է նա. իսկ եկեղեցիներից, որը որքան հեռանայ առաքելադիր կանոններից, հանրական—համայնական ոգուց ու սահմանադրութիւնից, այնքան աւելի խորդ, անհարազատ, անհամապատասխան կհանդիսանայ։

Ժամանակի ընթացքում, երբ ընդարձակ ծաւալով տարածվեց ս աւետարանը, այլ և այլ ժողովրդապետներ, անհատներ ու ազգեր իրենց անձնական դիտումների, ցեղական առանձնայատկութիւնների ու ձգտումների և քաղաքական բերմունքների ու նրպատակների ազդեցութեան տակ, զանազան կերպ հասկացան, մեկնեցին ս. աւետարանի վարդապետութիւնները, խօսքերը, հոգու և մարդկային ազգի փրկութեան դաղափարներն ու միջոցները։ Մինը արքայութեան բանալին առաւ իր ձեռքը և այդ ձեռքից կախված հրատարակեց արքայութեան դուռը սրա կամ նրա առաջ բանալու իրաւունքը. միւսն այդ բանալին իւրաքանչիւր մի հաւատացեալի անձնական քրիստոսաւանդ առաքինութիւնների մէջ ամփոփված հրատարակեց ու սորվեցրեց։ Մինն իրեն՝ Յիսուսի ու ա-

առաքեալների յաջորդ ու փոխանորդ հրատարակեց և իրեն վերապահեց ս. աւետարանի անսխալ մեկնելու և ուսուցանելու իրաւունքը. — ուստի և պահանջեց իր եկեղեցուց իր անսխալականութեան առաջ կոյր և անպայման հնազանդութիւն, միւսը մի մահկանացուի մէջ՝ անսխալականութեան գաղափարը մերժելով, մերժեց աւետարանական հաւասարութեան աշխարհում մահկանացուի մէկին անսխալ պետ ճանաչելը և այդ տվեց Յիսուսի անունով ժողոված ս. աւետարանով վարդապետութեանը հաւասարապէս աշակերտած ժողովին, և այս ժողովականութեան — հանրական իրաւունքի վեհապետութիւնն արդար ճանաչեց։

Մենք հայերս պարծենում ենք նրանով, որ քրիստոնէութեան լոյսը ընդունեցինք հէնց Իրեն այդ կենարար լոյսի բուն Աղբիւրից, որ մեր ազգային եկեղեցին կազմակերպեցինք ճիշդ այն հիմունքների վրայ, ինչ որ ցոյց տվին Յիսուսի Քրիստոսի Թադէոս ու Բարդուղիմէոս սրբազան առաքեալները, և որ մեր եկեղեցին ձիգ դարերի ընթացքում մնացել է հաւատարիմ առաքելադիր հիմունքներին, աւետարանական հարազատ հոգուն։

Եւ արդարև՝ մեր եկեղեցին եղել է ժողովրդական։ Մեր եկեղեցու բոլոր պաշտօնեաները ընտրվելուս են եղել ժողովրդից։ Եկեղեցու թէ վարդապետութեան և թէ վարչութեան վերաբերեալ բոլորատեսակ խնդիրները քննվել ու վճռվել են ընդհանուր ժողովների մէջ։

Մեր եկեղեցականութիւնը, մեր հոգևորականները բնաւ չեն ձգտել իշխանապետութեան, չեն ծառայ-

ցրել եկեղեցին իրենց սին փառամոլութեանը. նրանք պարզ, համեստ լինելու հետ, չեն շատացել լոկ քարոզներով. ցուցմունքներ անելով. այլ և պատրաստ են եղել իրենց անձը բերել զոհ իրենց դաւանած սկզբունքների և սիրած ազգի համար։

Պատմական ժամանակի ընթացքում հայ հոգևորականը իր ժողովրդի, իր զաւակների բաղդից ու վիճակից բնաւ չէ բաժանել իր բաղդն ու վիճակը։ Նա կրել տարել է բռնակալի ծանր շղթաները, նա հիւծվել — մաշվել է մութ ու խոնաւ բանտերում։ Նա իբրև իսկական որդեսէր ծնող իր կուրծքը դէմ է տվել թշնամու հարուածներին։ Նա միախառնել է իր արիւնը իր ժողովրդի արեան հետ։

Հայ պատմական հոգևորականը չէ ունեցել իր ժողովրդից, իր եկեղեցուց անջատ, բաժան, առանձին կեանք — առանձին ես։

Սրա մէջ պէտք է որոնել հայ պատմական ժողովրդի խորին սէրն ու յարգանքը դէպի իր հոգևորականութիւնը։

Սակայն հարկ չկայ չխոստովանելու, որ մի ժամանակից ի վեր ինչ որ նոր հովեր են սկսել փչել. հովեր՝ հայ ժողովրդին հայ հոգևորականից պաղեցնող, բաժանող — իրարից հեռացնող. հովեր՝ հայ հոգևորականին պատմական պաշտելի յատկութիւններից սառցնող։

Առաջնակարգ կարևորութիւն է ներկայացնում այս նոր փչող հովերի ուսումնասիրութիւնը։ Ով է մեղաւորը։ Դարի ոգին, ժողովուրդը թէ՞ հոգևորականութիւնը, զաւակը թէ՞ հայրը։ Այս թէ այն չդի-

տենք, բայց տուժում է եկեղեցին, քայքայվում է ամբողջութիւնը։

Անտարակոյս՝ այս նոր հովերի պատճառները շատ են։ Մեր ուժերից վեր է մտնել պատճառների խոր ուսումնասիրութեան մէջ։ Արժէ որ մեր մամուլը, առաւել կարող մտածողներն ու հրապարակախօսները նիւթ չինեն լուրջ ուսումնասիրութեան ու քննադատութեան։

Առ այժմ թոյլ ենք տալիս մեզ, իբրև անհատական մի կարծիք, ասելու, որ այս հովերը սկսել են փչել այն օրից, երբ մի կողմից մեր եկեղեցու վարիչները, շնորհիւ քաղաքական բերմունքների, դիւրութիւն են ստացել իրենց ենը բաժանելու ժողովրդից, առաձին շահ ու կեանք, պայման ու վիճակ ստեղծելու, իսկ միւս կողմից՝ երբ մեր ժողովուրդը, շնորհիւ նոյնպիսի բերմունքների, անտարբեր է դարձել դէպի իր պարտաւորութիւններն ու իրաւունքները իր եկեղեցու վերաբերութեամբ։

Այն օրից, երբ մեր կուսակրօն հոգևորականը դադարեց ժողովրդից ընտրվելու, ժողովրդից կախումն ունենալու, ժողովրդի առաջ հաշուետու լինելու պայմաններից, այն օրից էլ — կարծում ենք — սկսեց փչել միմեանցից մեզ սառցնող հովը։

Այսօր մեր կուսակրօնութիւնը ժողովրդից իսպառ անկախ դառնալու ճանապարհի վրայ է դուրս եկել։

Այսօր թէ վարդապետութիւնը և թէ եպիսկոպոսութիւնը տրվում են այնպիսիներին, որոնց ընտրութեան մէջ չէ մասնակցում ժողովուրդը։

Այսօր վիճակի յաջորդ, թեմի առաջնորդ կարգվում են անձինք, որոնց պաշտօնի չէ հրաւիրել վիճակը,

թեմը։ Կուսակրօնութեան ուխտը կայանում էր իր տոհմից ու ընտանիքից՝ օծման ու ձեռնադրութեան միջոցով՝ կտրվելու և իրեն ընտրող ու հրաւիրող ժողովրդին ու վիճակին իրեն տոհմ ու ընտանիք ճանաչելու — ընդունելու և այս նոր տոհմին ու ընտանիքին իր ամբողջ էութեամբ ծառայելու վսեմ վերածննդեան մէջ։

Այսօր այս ուխտը աղարտվել — մոռացվել է. այսօր ստանում են լոկ օծումն, ձեռնադրութիւն, աստիճան, մնալով առանց թեմի, առանց վիճակի և կրելով իրենց նոյնմարտիրոսեան, Կիրակոսեան — մարմնաւոր տոհմական ազգանունը։

Մեր եկեկեցու հայրապետն է, որ այսօր ընտրվում է եկեղեցուց, ազգից, բայց նա ընտրվում է ոչ ժողովրդի ընտրութեամբ վիճակի, թեմի փոխանորդ ու առաջնորդ եղած ու ձեռնադրվածներից, ինչպէս հնումը։

Կուսակրօն հոգևորականութեան այս նոր ճանապարհի վրայ դուրս գալն սկսվել է մեր եկեղեցական գործավարութեան համար պետական հաստատութեամբ մեզ տված կանոնադրութեան — մեր կարծիքով — ոչ ուղիղ գործադրութիւնից։

Այս մասին յետոյ։

Եւ ահա մեր կուսակրօն հոգևորականութեան այս նոր ճանապարհի վրայ կանգնած է այսօր ամուսնաւոր հոգևորականը — քահանան, որ տակաւին ընտրվում է ժողովրդից, որ ժողովրդի սպասաւորութեանն է հրաւիրվում ժողովրդի - ի ծխընտրութեամբ եւ հրաւէրով և այս ընտրութիւնն ու հրաւէրը հաստատվում է եպիսկոպոսի ձեռնադրութեամբ և օծումով։

Ուշադրության արժանի հանգամանք է. այսպիսի պարագաների դասաւորության շնորհիւ ժողովրդից հեռացող, ժողովրդից ընտրվելու պայմանից արդէն դուրս եկած և կղերականության ճամբան կամացուկ բռնած կուսակրօնի շահերին կարող է գալ ժողովրդից ընտրվող՝ լաւ, գիտուն, շիտակ բնաւորության տէր քահանան։

Արդեօք այսօրվայ մեր կուսան և ամուսնաւոր հոգևորականության ձգտումները, շահերը, նպատակները և գործելու եղանակները կարող են ներդաշնակաւորվիլն կազմել առանց ներքին պայքարի, առանց իրար վնասելու։

Ուստի, մեր համոզմունքով, ամեն մի նոր միջոց, որ առաջարկվում է յանուն քահանայական դասի բարւոքման, պէտք է խիստ զգուշաւոր քննության ենթարկվի։ Ժողովրդին հարազատը — մօտիկը ամուսնաւոր հոգևորականությունն է մնացել շնորհիւ այն հանգամանքի, որ նա այսօր էլ ընտրվում է ժողովրդից, որ իր եկամուտն այսօր էլ ստանում է ժողովրդից և հէնց իր հոգևոր պաշտօններն էլ կատարում է ժողովրդի մէջ, ժողովրդի հետ և ժողովրդի համար։

Քահանայական դասակարգի այս ժողովրդական պայմանները և մանաւանդ ժողովրդի ձեռքից կուսակրօնների ժողովրդական իրաւունքների օր օրի վրայ նուազացնելու այս անցողական շրջանը և՛ս առաւել նշանաւոր գործօն են դարձնում քահանային։ Հետևապէս աւելի լուրջ ուշադրության, աւելի շրջանկատ քննադատության և աւելի եռանդուն հոգատարության արժանի խնդիր է և պիտի համարվի մեր ամբողջ

ժողովրդի, մանաւանդ սրա բանիմաց ու սրտացաւ գաւակների համար։

Այո, պէտք է և անհրաժեշտ է բարձրացնել քահանայի մտաւոր, բարոյական ու նիւթական վիճակը. միայն այնպէս, որ քահանան մնայ ժողովրդից ընտրված, ժողովրդի հետ ու ժողովրդի համար։

Բ.
Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
S.S.S.R. Публичная Библиотека
7/XI-1922
именна. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
1005

Անշուշտ քահանայական դասակարգին դեռ ևս խիստ կարևոր պաշտօն ու դեր վերագրելու մէջ պէտք է որոնել այն հարցասիրությունը, որ գործ է դնում մեր ժողովուրդը, մեր մամուլը, մեր հոգևոր իշխանությունը քահանաների գործառնությունների, նրանց ուսման, բարոյականության ու նիւթական ապահովության նկատմամբ։

Մեր ալդի ինքնահանձնաչության նշանների հետ միասին դրեթէ երևան է եկել քահանայական խնդիրը նորագոյն հասկացողությամբ։ Մամուլի մէջ անվերջ կերպով լոյս են հանվում յօդուածներ, լուրեր, կարդադրություններ է որ իբրև բողոք, է որ իբրև քննադատություն, է որ իբրև նկարագրություն քահանաների արարքների, նրանց վիճակի և կացության վերաբերությամբ։ Սակայն այս ամենն, ինչպէս լրագրական լուրեր, կամ մէկը միւսի հետ կապ չունեցող, շաղ անցած յօդուածներ, մասնակի բնաւորությունն

կրող ու ժամանակաւոր կարգադրութիւններ՝ կորչում, մոռացվում էին, ծառայելով յարուցված, բայց չլուծված խնդրի կարևորութիւնն ու թարմութիւնը պահելու նպաստելուն։

Ուստի և քահանայական խնդրի ուսումնասիրութեանը նուիրված մի ամփոփ, աւելի մնայուն պայմանների մէջ դրված աշխատութեան կարևորութիւնը վաղուց զգալի էր դարձել։ Այս իսկ պատճառով մեծ անհամբերութեամբ, սպասում էինք Սեղրակեան Արիստակէս եպիսկոպոսի «Քահանայական Խնդիր» վերնագրով աշխատութեան լոյս տեսնելուն, որի մասին շատ վաղուց լուր կար հրատարակված մամուլի մէջ։

Վերջապէս լոյս տեսաւ այն վաստակը տպագրված անցած թուականի մէջ Մոսկվայում, Օ. Օ. Հերբէկի տպարանում։

Գիրքը բաղկացած է 220 պատկառելի երեսներից, որոնցից 60 երեսը բռնում է սինոդին տրված սրբազան հեղինակի մի յայտարարութիւնը, 20 երես նոյն սինոդին ներկայացրած նրա միւս գրութիւնը— զեկուցումը, 10-ից աւելի երեսներ Արշէն Երէցի քարոզը և իր «Ո՛վ հաւատաց»ը։

Եւ իսկապէս քահանայական խնդիր ասվածը սինոդին տրված այդ երկու ընդարձակ գրութիւններն են. մնացածները դիտողութիւններ, ծանօթութիւններ ու լուսաբանութիւններ են։

Շմանելով մանրամասնութիւնների մէջ, թեթև կերպով կխօսենք «Քահանայական Խնդրի» գրվելու և լոյս հանվելու շարժառիթների ու նպատակի և կրօնականութեան հոտեր փչող քանի մի ոճերի ու դարձ-

վածների մասին։ Ապա կանցնենք գրքի մէջ պարունակող այն նոր խնդիրներին ու առաջարկութիւններին, որ այսօր միայն յարուցանում է Սրբազանը, այլ իր պաշտօնավարութեան մէջ դեռ գործնական կերպով փորձել ու կատարել չէ ինքը։ Յետոյ կփորձենք ներկայացնելու թէ ինքը՝ գերապատիւ հեղինակը քահանայական դասակարգը լաւացնելու համար իբրև յաջորդ, փոխանորդ, առաջնորդ և սինոդի անդամ ինչ ու ինչ միջոցներ է գործ դրել կամ ցանկացել գործ դնելու, որքան լաւացնող են եղել նրանք, որքան նա արդարանում է իրեն կարդացված յանդիմանութիւններից։ Կողագծենք Արշէն Երէցի քարոզի ու «Ով հաւատաց»ի էութիւնը. կաշխատենք լուսաւորել դիւղը գնացող ու չգնացող ուսեալների խնդիրը, սինոդի արած կարգադրութեան որքան նրպատակայարմար լինելը և թէ որքան յուսալի է սպասել կուսակրօններից, առաջնորդներից՝ քահանաների իսկապէս լաւացնելը։

Գ.

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ ԳՐԱԴԱՐԱՆ

«Քահանայական Խնդիր»ը լոյս է տեսել—գրում է սրբազան հեղինակը—նրա համար, որ՝ «ընթերցողներին միջոց տուած լինի աւելի ճիշտ հասկացողութիւն կազմելու այն անհամաձայնութիւնների մասին, որոնք տեղի ունեցած են հոգևոր բարձրագոյն իշխանութեան ներկայացուցիչների և իր մէջ տասնեակ տա-

ջինների ընթացքում. միևնոյն ժամանակ այդ միջոցով առիթ տուած լինի լաւապէս պարզելու մօտիկ անցեալում Մայր Աթոռի մէջ և նրա շուրջը կատարուած մի շարք անցքերի իսկական շարժառիթներն ու բնաւորութիւնը» *)

Այսպիսով՝ «Քահանայական Խնդիր»ը՝ ըստ մեզ՝ մի անձնական հրապարակական հաշուետուութիւն է «այն բոլորի, ինչ որ մեր (սրբազան Արիստակէսի) պարտքը թելադրել է մեզ (սրբազանին) անել» *)։

Հրապարակական հաշուետուութիւն, բայց ոչ այն դրդիչներից շարժված, որոնք հասարակական գործիչին իր սպասաւորութիւնը դէպի ժողովուրդն օգտաւէտ անելու մտքով մղում են դէպի հրապարակական քննադատութիւնն ու դատաստանը։

Ո՛չ, այսպիսի դրդիչներ մենք չենք նշմարում նոր լոյս հանված գրքի մէջ, չնայած մեր անչափ հաւատաւորութեանը և լաւակամ տրամադրութեանը դէպի սրբազան հեղինակը։

Մեզ վրայ ճնշող ազդեցութիւն է թողնում այն աչքի ընկնող գիծը, որ Արիստակէս եպիսկոպոսի պարտքը նրա բոլոր գործունէութեան ընթացքում թելադրել է նրան աւելի իր պաշտօնակիցների դատաւորը լինելու, սրանց գործունէութեան սև կողմերի պաշտօնական նկարագրողը լինելու, քան թէ թելադրել է նրան իր աշխարհի, իր եկեղեցու, իր վիճակի, իր ժողովրդի փրկութեան համար գործ շինելու, ճիգ ու ջանք թափելու, անձն ու կեանք դնելու։

*) «Քահ. Խն». եր. 2։

Արիստակէս եպիսկոպոսի և մեր հոգևոր բարձրագոյն իշխանութեան ներկայացուցիչների մէջ եղած անհամաձայնութիւնները, և մօտիկ անցեալում Մայր Աթոռի մէջ և նրա շուրջը կատարված մի շարք անցքերն այնքան բռնազբօսիկ կերպով կապված են «Քահանայական խնդրի» հետ, որ մեզ իրաւունք են տալի ասելու թէ «Քահանայական Խնդիրը» լոկ անուն ու պատրուակ է, այլ հեղինակը ցանկութիւն է ունեցել հէնց այն անհամաձայնութիւններն ու անցքերը հրատարակելու, ինչպէս և վկայում են վերը բերած հէնց իր խօսքերը։

Իսկական դիրքը կազմող յայտարարութիւնները, գործերից դուրս բերված քաղվածներն ու տեղեկութիւնները հրապարակ են եկել կամ իր՝ հեղինակի՝ սխալ արածները ուրիշի համանման սխալներով արդարացնելու և կամ ուրիշ բարձրաստիճանների ու վեհափառութիւնների ազգին հասցրած վնասները ստորագծելու նպատակով։

Գրքի մէջ 60 երես տեղ բռնող յայտարարութիւնը ծայրէ ի ծայր պարունակում է ամբողջ գործողութիւններ, առնված գլխաւորապէս կամ բացառապէս, Մակար կաթողիկոսի Թիֆլիսի առաջնորդական գործունէութիւնից, որոնք ցոյց են տալի թէ նա՝ Մակար արքեպիսկոպոսը՝ ինչպէս է հասկացել առաջնորդութիւնը, ինչպէս է գործադրել իր իրաւունքները և ինչպէս անպատիժ է մնացել։

Անցեալին դիմելու, հին հին գործերի խաղաղութիւնը վրդովելու քայլն Արիստակէս սրբազանի մէջ առաջացել է ոչ թէ քահանայական խնդրի վրայ

պատմական լոյս ձգելու ցանկութիւնից, այլ իրեն արված պաշտօնական նկատողութեան հանդէպ իրեն պաշտպանելու, իր անձն արդարացնելու և դիմացիններին, մանաւանդ Մակար կաթուղիկոսին խայթելու, սևացնելու ցանկութիւնից։

Արիստակէս եպիսկոպոս իր այս քայլով ներկայանում է մեր առաջ մի մարդ, որ իր առաւելութիւնները որոնում է ուրիշների ունեցած պակասութիւններից իրենում քիչ լինելու մէջ. իսկ իրեն արդարացնելու հիմունք ընդունում է այն, որ իր գործած սխալները, կանոն չպահելը հետևողութիւն կամ նմանութիւն է իրենից առաջ եղած առաջնորդի գործածներին։

Բերենք օրինակներ։

Ա. Սինոդը՝ Մակար կաթուղիկոսի կոնդակի համեմատ՝ խիստ նկատողութիւն է կարդում Թիֆլիսի առաջնորդ Արիստակէս եպիսկոպոսին որա գործած՝ «կանոնազանցութեան և ինքնորոյն ներդործութեանց» համար։

Արիստակէս սրբազանն իր վիրաւորված ինքնասիրութեանը յաղուրդ տալու մտքով դիմում է անցած դնացած ժամանակներին և, կոնսիստորիայի գործերից քաղելով, հանդէս է դնում իրեն նկատողութիւն անող սինոդի ու կաթուղիկոսի առաջ ահագին թուով կատարված, բայց նկատողութեան չենթարկված այնպիսի գործեր, որպիսիների համար խիստ նկատողութեան է արժանանում ինքը Սեղրականը։ Բայց միթէ արդարանում է մի մարդ նրանով, որ սխալներ գործելում հետևել է ուրիշի սխալներին։

Միթէ մէկի յանցագործութիւնը իրաւունք է տալի մի ուրիշին ևս յանցագործ լինելու։

Կամ առաջնորդ Մակարը, երբ իրրև առաջնորդ եղել է, դիցուք, կանոնազանց, զանցառու, ինքնագլուխ, և չէ յանդիմանվել, ի կարդ հրաւիրվել ժամանակի հայրապետից, ինքը դառնալով կաթուղիկոս, միթէ զրկվում է իրաւունքից կանոնազանց, զանցառու, ինքնագլուխ պաշտօնեաներին ի կարդ, ի զգուշութիւն հրաւիրելու։

Միթէ կաթուղիկոսական գահը բարձրացող անձը չի նկատի, չի յանդիմանի վիճակաւոր առաջնորդին, յաջորդին, վարդապետին այնպիսի յանցանքների համար, որ ինքը կարող է գործած լինել իր առաջնորդ, յաջորդ, վարդապետ եղած ժամանակներում։

Ուրեմն այս տեսութեամբ, եթէ Արիստակէս եպիսկոպոս կաթուղիկոս դառնայ, զրկված պիտի լինի իրաւունքից զգուշացնելու, պատժելու այն վարդապետին, որին իրրև հայրապետ, իշխանաւոր դատառ կուղարկի պաշտօնով, և այս վարդապետը սուտ ու մուտ պատրուակներ առաջ բերելով, կփախչի պաշտօնատեղից—կրկնում ենք - և այսպիսի պաշտօնից փախուստ տուող, սուտ խօսող վարդապետին Արիստակէս կաթուղիկոսը չպիտի պատժի այն պատճառով, որ ինքն էլ այդպէս է եղել վարվելուս իր երիտասարդ վարդապետ ժամանակ։

Եւ վերջապէս սկզբունքի տէր, չիտակ, խելահաս մարդիկ միթէ երբ և իցէ կհետևեն անսկզբունք, անդոյն ու երկչոտ գործիչներին, կամ միթէ կներեն իրենց արդարացնելու նրանով, թէ՝ «երբ որ

և է իշխանութիւն մէկին մեղադրում է զանցառութեան մէջ, մեղադրում է աչքի առաջ ունենալով այն օրէնքները, որոնք զոնէ ուրիշներն երբ և իցէ անխախտ պահել են» *)։

Բ. Արիստակէս եպիսկոպոսին կաթուղիկոսն ու սինոդը նկատում են, որ նա նոր պսակված, մեղրալուսնի առաջին միայն 7 օրը վայելած երիտասարդին տարել քահանայ է ձեռնադրել։

Նա՝ սրբազան Սեդրակեանն՝ իրեն արդարացնում է նախ՝ նրանով թէ՝ «*յեկեղեցական կանոնս զոմ արդեօք արգելումն ձեռնադրութեան նոր ամուսնացելոյ, զոնէ իմ չիք հանդիպեալ*» *), և մի առանձին ծանօթութեամբ էլ շեշտում է, որ ի հարկէ արգելող կանոն չկայ, և ապա նրանով, թէ իրենից առաջ եղած վիճակաւոր առաջնորդ Մակարն ևս այդպէս է վարվել իր քրոջ որդուն ձեռնադրելուս։

Վերջին պատճառաբանութիւնը որքան ծիծաղելի է, իբրև արդարացնող հիմունք, այնքան պարզ է, որ դուրս է բերված կաթուղիկոս Մակարին շանթելու նպատակով։ Իսկ առաջին կէտը՝ չքմեղ լինելու սուտ պատրուակ է։

Եթէ սարկաւագի համար առաքեալը պահանջ է դնում. «սարկաւագք լինիցին միոյ կնոջ արք, որք որդւոց իւրեանց բարւոք վերակացու լեալ իցեն և տանց իւրեանց» **), միթէ քահանայուի վերաբերմամբ նոյն պահանջը կարևոր չէ, քանի որ ընծայացուն առաջ պիտի սարկաւագութիւն ստանայ և ապա քահանայութիւն։

Գ. Կաթուղիկոսն ու սինոդը խիստ նկատողութիւն են անում Արիստակէս եպիսկոպոսին, որ սա՝ առանց սինոդից կանխապէս լուծումն ստանալու՝ ձեռնադրութիւններ է անում։

Սա գրում է. «Մենք ընդդէմ չենք եղել իշխանութեան կարգադրութեանը քահանայացուների հրամանով ձեռնադրելու մասին, այլ երբ մեր առաջարկվածներից շատերը մերժուել են. իսկ մերժածները ձեռնադրուել—*մենք էլ հարկադրուած ենք եղել երբեմն վարուելու նախնաւանդ եկեղեցական կանոններով, որպէս զի կարողութեան չափ հատուցած լինինք մեր առաջնորդական պարտքը դէպի հօտը*» *)—կարդա, «որպէս զի հատուցած լինինք մեր անձնական պարտքը դէպի սինոդը, կաթուղիկոսը կամ ձեռնադրվող անձը», ինչպէս և խոստովանում է ինքը, գրելով գրքի 39-րդ երեսում. «սակայն երբ հարկ ենք համարել գործելը խափանող *աններելի* միջամտութիւնների դէմ ազդու բողոք տուած լինել, չենք անտեսել մեր օրինական իրաւունքը։ Այսպիսի բողոքի նշանակութիւն ունեցող ձեռնադրութիւններ էին մինը՝ 1885 թուին կատարածն և միւսը՝ 1887 թուին»։

Բայց ինչ ասել է առաջնորդ, որ *երբեմն* է մտածում հատուցանելու իր առաջնորդական պարտքը դէպի հօտը։ Եւ միթէ այսպիսի առաջնորդներից մինը պիտի ինքն իրեն հանդիսացնէր Արիստակէս եպիսկոպոս Սեդրակեանը։

*) «Քահ. Խնդ». եր. 42։

**) Պօղ. առ Տիմ. ա. Գ. 12։

*) «Քահ. Խնդ.» եր. 42—43.—ընդգծումը մերն է

Անկախ այս ամենից, մեր կարծիքով, այսօր քահանայի ձեռնադրութեան խնդրում, ոչ մի վիճակաւոր առաջնորդ իրաւունք չպիտի ունենայ նախնաւանդ մեր եկեղեցական կանոններով, *թէկուզ երբեմն*, վարվելու, քանի որ նա՝ այսօրվայ վիճակաւոր առաջնորդը՝ մեր եկեղեցու նախնաւանդ կանոններով թեմից ընտրված ու թեմացիների խնդրքով ձեռնադրված վիճակաւոր եպիսկոպոսը չէ, այլ դրսից կարգված— թեմի կարիքներին ու պիտոյքներին անծանօթ մի պաշտօնեայ։

Հին ու նոր վիճակաւորների կարգվելու և ձեռնադրվելու այս տարբերութիւնը պէտք է որ տարբերութիւն մտցնէ և նրանց իրաւունքների մէջ։

Դ.

«Մեր նպատակն էր—գրում է սրբազան Արիստակէս—*ապացուցանել* թէ հայ ժողովրդի մէջ նկատուող կրօնական զգացմունքի թուլութիւնն ու կրօնափոխական շարժումներն *արժանաւոր հովիւների* պակասութեան հետևանք են. իսկ այս վերջինները *մեր* անպարտաճանաչութեան և զանցառութեան» *)։

Քանի որ գրքի վերնագիրը «Քահանայական Խնդիր» է, քանի որ նրա մէջ առաջ բերված բոլոր գրքրութիւնները պատում են քահանաների ու քահանայացուների շուրջը, հովիւներ ասելով պէտք է քահանաներ հասկանալ, իսկ «մեր» ասելով՝ կուսակրօն հոգևորականութեան բարձր ներկայացուցիչները, որոնց ձեռքումն է քահանաների ձեռնադրութեան իրաւունքը։

Բայց ինչ հասկանանք «արժանաւոր» խօսքով, որ մի առաձգական ընդհանուր նշանակութիւն ունեցող միտք է բովանդակում։ Ի՞նչ կնշանակէ արժանաւոր, ուսեալ թէ հաւատաւոր, գիտուն թէ բարեբարոյ։

Օրինակ՝ Մխիթար Սեբաստացին արժանաւոր էր թէ անարժան։

Սակայն քանի որ խօսքը - վէճը գիտուն ու տգէտի, ուսեալի և անուսի մասին է, ուստի և «արժանաւոր» բառի իմաստն աւելի հովուի ուսման, գիտութեան կողմը պէտք է թեքել։

«Դրէպէր»ի սրբազան թարգմանիչը, կարծում ենք, շատ կտրուկ և պատասխանատու վճիռ է արձակում ժողովրդի կրօնական զգացմունքների թուլութիւնն ու կրօնափոխական շարժումները վերագրելով, այն էլ «*միմիայն* *), արժանաւոր հովիւների պակասութեանը։

Ճշմարիտ է, արժանաւոր հովիւների պակասութիւնը կարող է պատճառներից մինը լինել, բայց ոչ երբէք ամբողջը կամ «*միմիայն*»ը։

Նախ՝ գրքի մէջ ոչինչ դէպքեր, վիճակագրական թիւեր չկան կրօնափոխութիւնների մասին, որ ապացուցանէին սրբազանի վճիռը։

---

*) «Քահ. Խնդ.» եր. 213,

*) «Քահ. Խնդ». եր. 193։

Մեզ թւում է, որ քահանայական խնդրի առթիւ Մակար կաթուղիկոսի և ժամանակակից եպիսկոպոսների պակասաւոր արարքների համար այնքան սիրով աննպաստ տեղեկութիւններ ժողովողը պէտք է որ այսպիսի կարևոր եզրակացութեան բերող փաստերևս անշուշտ հաւաքէր պատմութիւնից կամ նորագոյն ժամանակներից։ Այլապէս՝ մենք տրամադիր ենք ընդունելու, որ այդպիսի ծանր մեղադրանք միմիայն քահանաների վրայ դրվելու նպատակն այն է, որ դրանով ազգի առաջ աւելի ծանր յանցաւորներ հանդիսացնի դրքի մէջ յիշատակված այն բոլոր բարձրաստիճան կուսակրօններին, որոնք իրեն պէս չեն վերաբերվել դէպի քահանայական ձեռնադրութիւնը։

Երկրորդ՝ մեր ժամանակի կրօնափոխութեան դէպքերը պատում են աւելի տնտեսական խնդիրների շուրջը. իսկ պատմական ժամանակի ընթացքում կրօնափոխական շարժումների գլուխ անցածները այնքան տգէտ, անուս հովիւներից չեն եղել, որքան ժամանակի գիտուն, կամքի տէր, փառամոլ կուսակրօններից։ Նոյն իսկ Տաճկահայաստանի նորագոյն մարտիրոսագրութեան շրջանում սուլթանին ուղերձներ ստորագրողները բարձրաստիճան արժանաւորներից էին։

Երրորդ՝ բայց միթէ նոյն իսկ արժանաւոր քահանաների, հոգևորականների կրօնական զգացմունքներն ևս ենթակայ չեն տիեզերքը կառավարող օրէնքներին, ժամանակի հոգու հզօր ազդեցութեանը։

Միթէ քրիստոնեայ քաղաքակիրթ պետութիւնների անտարբերութիւնը դէպի բռնակալի արիւնոտ

սուրը, որն օրը ցերեկով մորթոտում է իր անմեղ հրպատակներին քրիստոնեայ լինելու պատճառով, միթէ քաղաքակիրթ քրիստոնեայ աշխարհի ուրիշ ազգերին ջնջելու գնով ոսկի հանքերին ու բնակավայրերին տէր դառնալու անիրաւ վարմունքը, միթէ քրիստոնեայ քաղաքակիրթ ազգերի միսիոնարների՝ հացը հաւատափոխութեան գնով քաղցածին տալու օրինակները, միթէ դարիս զաւակների՝ ուսեալի թէ գեղջուկի, գիտունի թէ տգէտի, բարձր հոգևորականի թէ աշխարհականի ակներև ձգտումները դէպի նիւթապաշտութիւնը կարող են մնալ առանց ազդեցութեան մարդկային ընդհանուր մեծ ընտանիքի անդամ թէկուզ ուսեալ հովիւների վերաբերութեամբ։

Եւ վերջապէս միթէ քահանան—հովիւը միայնակ կարող է դէմ դնել դարի հոսանքին, կարող է թումբ կանգնացնել գործարանական ու առևտրաշահ քաղաքների, մեքենագիտութեան ու ազատ քննադատութեան հոսանքների առաջ, որ այնքան ուժգնութեամբ ազատ ու լայն բացված ճանապարհների՝ երկաթուղիների, շոգենաւերի, հեռագիրների, տասնեակ հազարաւոր բանուորների, լրագրների և այլ հարիւրաւոր գործօնների միջոցով ողողում են վանքերն ու անապատները, շէներն ու գիւղերը, աւաններն ու քաղաքները և այնքան ամուր կերպով բաղխում են մարդկանց սրտերն ու մտքերը։

Միթէ արժանաւոր քահանան կարող է և պաշտօն ունի կանգնացնելու գիտութեան և արուեստի յառաջախաղացութիւնը, մարդկային մտքի հետախուզիչ ոգին, հասարակութեան թափանցող դիտողու-

թիւնը, որոնք պատառելով խորհրդաւորութեան վարագոյրները, մտնում են մինչև սրբութեան սրբոցը։

Պաշտօնական յայտարարութեան մէջ, մամուլի տպագրութեան միջոցով գաղ մեղադրել քահանաներին այն բանի մէջ, որ նրանք են պատճառ՝ «այսչափ յաճախ կրօնափոխութեանց», որ «քանտք ամենուրեք լցեալ ծփան հայ արգելականօք ըմբռնելովք 'ի յափշտակութեան, ի գողութեան, ի մարդասպանութեան, ի պէս պէս օրէնսընդդէմ կեղծիս և յանլուր յանցանս, մինչդեռ քան և քան հինգ ամօք յառաջ հազուագիւտ երևոյթ էր տեսանել զհայ բանտարկեալս» *), պէտք է ունենալ անպայման և բացառիկ մեծ հաւատ թէ դէպի հայ քահանայական դասի ամենակարողութիւնը և թէ դէպի հայ ժողովրդի ստրկամիտ կրօնամոլութիւնը կամ պանդխտութեան, օտարութեան չդիմող յատկութիւնը...

Սրբազանի վերն առաջ բերած խօսքերը պարունակող յայտարարութիւնը գրված է 1889 թուին։ Եթէ 20—25 տարի յետ գնանք՝ կվերադառնանք 60-ական թուականներին. այսինքն այն ժամանակներին, երբ, ինչպէս մէջ է բերում Արիստակէս եպիսկոպոս՝ «Միքայէլ Նալբանդեանց գրէր առ տ. Մատթէոս կաթուղիկոս—ի մեզ առ ամենայն կացութիւն անպիտան պիտանի համարի ի հոգևորականութիւն» **)։

Բացի սրանից 28-րդ ծանօթութեամբ, սրբազան Արիստակէսը գրում է. «Ոչ իշխեմ և ոչ ցանկամ յիրաւունս ապազայ պատմաբանի միջամտիլ վասն ցու-

*) «Քահ. Խնդ.» եր. 83։

**) Նոյն տեղ եր. 84.

ցանելոյ աստէն, թէ որչափ բազմացան տրտունջք և անբաւականութիւնք յազգի վասն ձեռնադրութեանց անպատրաստ, անկիրթ քահանայից անհամար բազմութեամբ ի 1868—1882 ամս, և որչափ գործ բարոյական և մտաւոր յառաջադիմութեան ժողովրդեանն զյետադարձ կալաւ ընթացս ի վնաս և ի հարուած եկեղեցւոյ յերեսաց այսպիսեաց քահանայից, զոր բուժել և ոչ հարիւր ամք զօրեսցեն» *)։

Աւելի հին ժամանակամիջոցի համար նոյն սրբազանը մէջ է բերում Կովկասի կուսակալ կոմս Պասկևիչի խօսքերը, որ գրել էր նա նախարարին 1828 թուին. «Եկեղեցական ստորին պաշտօնեայք առ հասարակ ընկղմուած են խորին տգիտութեան մէջ և նոցա թիւն այնքան բազմացել է, որ ծանրաբեռնում է ժողովրդին» **)։

Արդ՝ ինչպէս է որ հովիւները 20—25 և աւելի ու շատ աւելի առաջ եղել են անպիտան, անպատրաստ, անկիրթ, խորին տգիտութեան մէջ ընկղմված, «գործ բարոյական դաստիարակութեան» սրանց պատճառով՝ կալած է եղել «զյետադարձ ընթացս», բայց և այնպէս հազուագիւտ երևոյթ է եղել հայ բանտարկեալ տեսնելը...

Եթէ հովիւների անպիտանութիւնը, անպատրաստութիւնը, անկրթութիւնը, խորին տգիտութիւնն աւելի լաւ միջոցներ են ժողովրդին բարոյականութեան ու հաւատաւորութեան մէջ պահելու հանար, այլ ևս

*) «Քահ. Խնդ.». եր. 70,

**) Նոյն տեղ եր. 18։

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ինչ աւելորդ աշխատանք է ուսեալ քահանայացուների առթիւ։

Կրօնական թուլութեան պատճառներն ուրիշ տեղեր, տնտեսական ու կենցաղավարական ուրիշ շատ ու շատ բազմազան պարագաների մէջ որոնելու է, այլ ոչ միայն հովիւների անարժանութեան մէջ ..

Ե.

Երկտողիս առաջին գլխում խօսելով կուսակրօն և ամուսնաւոր հոգևորականութեան մասին, այն միտքը յայտնեցինք, որ կուսակրօնները խզել են եկեղեցուց, ժողովրդից ընտրվելու կապը և բռնել են եկեղեցու վրայ անկոպար իշխանաւոր դառնալու ճամբան, և որ այս ճամբի վրայ կանգնած է ժողովրդից ընտրվող ժողովրդական հոգևորականը—քահանան։

Այսօր սրա շուրջն է պտտում մեր եկեղեցու ժողովրդական հոգին։

Եթէ մեր կուսակրօնութիւնը յետ չդարձաւ ընթանալու մեր ազգային եկեղեցու ընտրական ճանապարհով, այլ ընդհակառակը՝ եթէ կարողացաւ հետզհետէ կտրել ժողովրդից ընտրվելու կապը և՝ քահանայի վերաբերութեամբ, այնպէս որ ընտրութիւն ասված գործողութիւն կատարողը լինի կոնսիստորը, առաջնորդը կամ սրա ներկայացուցիչը *իրենց միջոցներով*—այնուհետև մնաս բարև մեր եկեղեցու ժողովրդականութիւն, առաքելականութիւն, մնաս բարև

ժողովրդական հոգևորականութիւն։ Սրա տեղը կբռնի կղերականութիւնը իր կաշկանդող, իր խաւար ձգտումներով ու հոգով։

Բայց ինչ է կղերականութիւնը, որն այնքան խոտելի է եղել մեր ժողովրդի հոգուն և այժմ էլ խոտելի է ոչ միայն մեր ժողովրդին, այլ և ամբողջ քաղաքակիրթ աշխարհին։

Հոգևորականների այն ձգտումը, որով աշխատում են եկեղեցական իշխանութեան իրաւունքն ու նշանակութիւնը բարձրացնել ժողովրդի իրաւունքներն ու նշանակութիւնը չեզոքացնելու, ոչնչացնելու գնով անուանվում է կղերական ձգտում, և տանում է այս ճամբան հոգևորականութեանը դէպի կղերականութիւնը։

Քրիստոսահիմն առաքելական եկեղեցին հոգևորականին թէ աշխարհականին ճանաչում է հաւասար եղբայրներ ի Յիսուս, միմեանց անդամներ, անդամներ եկեղեցու՝ հաւատացեալների ժողովի։ Այսպիսի եկեղեցու պայծառութեան, կարգաւորութեան բոլոր խընդիրները ենթակայ են ընդհանուր եղբայրական ժողովի վճռահատութեան։

Այս ժողովը աւետարանական սիրոյ պայմաններում պիտի սահմանէ կարգեր, լուծէ տարակուսական խնդիրներ և ընտրութեամբ հրաւիրէ եկեղեցու—եղբայրութեան այլ և այլ պէտքերը, սպասաւորութիւնները լրացնող ու կատարող պաշտօնեաներ։

Այս պաշտօնեաները չեն եկեղեցուն հրամաններ տուողներ, իշխանաւորներ, այլ եկեղեցու՝ ժողովականների որոշումների կատարողներ, սրբագործողներ, ընդ

նմին մնալով և նոյն եկեղեցուն, ազգային ժողովներին, ժողովրդին հաշուետուներ։

Եկեղեցու այսպիսի դրութիւնը հաստատութիւն ու պայծառութիւն է գտնում այն ընդհանուր ձրգտման մէջ, որ եկեղեցու բոլոր անդամները՝ հոգևորական թէ աշխարհական, քաղաքացի թէ գիւղացի, այր թէ կին ամենքը լինին Քրիստոսի աշակերտներ, տեղեակ Նրա սուրբ վարդապետութիւններին և տոգորված Նրա հոգով։

Իսկ կղերականութիւնը։

Կղերականութիւնը չէ ճանաչում աշխարհականի իրաւունքը եկեղեցական գործերում, նայում է աշխարհականի վրայ իբրև իր հոգևոր հլու հպատակի, ծառայի կամ միշտ երեխայ աշակերտի վրայ, որը միայն մինուիրական պարտականութիւն ունի-կոյր հնազանդութիւն։

Կղերականութեան հաստատութիւնն ու շահերը այնքան աւելի ապահովուած են, հաստատուն են, որքան հպատակվող ժողովուրդն աւելի տգէտ, մոլեռանդ, անպայման անձնատուր լինող է իրեն առաջնորդող ղեկավարող, ձեռքից բռնած ոլոր մոլոր ճանապարհով տանող կղերին։

Ահա երկուսի տարբերութիւնը։

Այժմ նայենք այս տեսութեամբ թէ մեր հոգևորականութեան մէջ ինչ ինչ նշաններ ու քայլեր են նկատվում դէպի կղերականութիւնը տանող։

Առաջնորդների, փոխանորդների թէ պաշտօնի մտնելու և թէ աստիճանների տիրանալու մէջ այլ ևս չեն հարցնում թեմի, վիճակի ընտրութիւնն ու վկայութիւնը։

Մեր առաջնորդները, փոխանորդները այլևս չեն հովանաւորում և կարգաւորում ծխական ընդհանուր ժողովները քահանայացուի ընտրութեան ու եկեղեցական այլ և այլ խնդիրների նկատմամբ, այլ ձրգտում են անձնական իշխանութեամբ կամ ձևական ստորագրութիւնների միջոցով տալ կատարել իրենց ցուցումներն ու ցանկութիւնները։

Չեն հարցնում նրանք այլ ևս ժողովրդի—ծխականի կամքը և եկեղեցուց եկեղեցի, ծխից ծուխ, գիւղից քաղաք են փոխադրում քահանաներին։

Դժուարանում են ընդունել երեսփոխանին իբրև ընտրեալ ներկայացուցիչ ժողովրդի կողմից և աշխատում են դարձնել իրենց անմիջական ստորադրեալ. աշխատում են վերացնել նրանց պատասխանատուութիւնն իրենց ժողովրդի առաջ և դարձնել իրենց հրահանգներով կառավարվող և միայն իրենց առաջ պատասխանատու պաշտօնեաներ։

Ակներևակի կերպով զօրացնում են, խստացնում են աստիճանաւորութեան, իշխանաւորութեան սիստեմը հրամայական ոճեր գործադրելով, սպառնացող դարձուածներ շռայլելով, զգուշացումների տարափներ*) տեղալով իրենց պաշտօնական գրութիւնների մէջ, մոռացութեան տալով օրհնութիւնների, հայրա-

---

*) Ծան. «Թեմ. առաջնորդները... գործադրում են քրիստոնէութեան իսկական հոգուն համապատասխանող, մեղմ, խրատական ու համոզիչ միջոցներ։ Նրանք պարտաւոր են, որքան հնար է, փախուստ տալ այն ամենից, ինչ որ կրում է աւելորդ խստութեան կերպարանք»։ Положеніе 972 յօդ. հրատ. 1857 թ՝

կան մեղոյշ խրատների, սիրալիր յորդորների, աւետարանական սիրոյ և եղբայրութեան*) հոգին արտայայտող ոճերը, յորդորականները։

Նոյն իսկ Արիստակէս եպիսկոպոսի «Քահանայական Խնդիր» գրքի մէջ և պաշտօնական թղթերում գործ դրված, օրինակ, այսպիսի դարձուածները՝ «ի բերել ժամանակին ձեռնադրել եւ տալ ողորմելի ժողովրդոց **), «Հարկաւոր էր գաւառներից Թիֆլիզ բերածներին կրկին գաւառ վերադարձնել ***)», «Հետզհետէ բացուող տեղերի համար ընտրել եւ կարգել կոչման համապատասխանողներին ****), «Ի տեղի սոցա հրաւիրել եւ կարգել զարժանաւորս», ճշմարիտ է պարունակում են իրենց մէջ ժողովրդի համար սրբատաց հոգատարութիւն, բայց ինչ որ իշխանական իրաւունքով ու միջոցներով։

«Քահանայական Խնդիր» գրքից դուրս, կարդացինք յայտարարութիւններ «Մշակ» լրագրի մէջ, որով Ստրախանի Հայոց կոնսիստորիան, անշուշտ ոչ առանց կանխահաճ թոյլտուութեան թեմական առաջնորդի, ծանուցանում է, որ Ստրախանի թեմի համար հարկաւոր են քահանայացուներ և որ ցանկացողները թող ուղարկեն կոնսիստորիա իրենց վկայագիրները։

Սա աչքի ընկնելու չափ մի նորութիւն է։

Քահանայացուների ընտրութեան խնդրում կոնսիստորիան ստանձնում է մի տեսակ միջնորդի պաշտօն ծխական ժողովրդի ու ձեռնադրող հոգևոր իշխանութեան առաջ։ Շատ պարզ է, որ ում առաջուց ընտրի ու հաւանի կոնսիստորիան, նրա քահանայանալու խնդիրն էլ պիտի առաջ տանի։

Մի բոպէ ենթադրենք ու հաւատանք, որ Ստրախանի կոնսիստորիան ի չարը չի գործ դնիլ իր ստանձնած նոր դերը քահանայացուների խնդրում, քանի որ նրա ղեկավարն է Արիստակէս եպիսկոպոսը և որ Ստրախանի թեմի հայ ծխականներն էլ է որ անտարբերութիւնից դէպի իրենց իրաւունքների պաշտպանութիւնը, է որ հաւատաւորութիւնից ու յարգանքներից դէպի իրենց այժմեան առաջնորդը, ոչինչ հակառակութիւն չեն ցոյց տալ և կոնսիստորիայի ընտրած ու առաջարկած թեկնածուին կընտրեն ծխական քահանայ։ Բայց չէ՞ որ այս օրինակը ուղղակի լայն ճանապարհ է բաց անում քահանայացուների ընտրութիւնը ժողովրդից խլելու և կոնսիստորիաների ու առաջնորդների ձեռքը ձգելու — կեդրոնացնելու։ Իսկ սա մեր կարծիքով, շատ աւելի մեծ չարիքների աղբիւր կարող է լինել, քան թէ մինչև

*) Ծան. «Անոնք (երէցները) այնպէս պատկառելի էին և եպիսկոպոսներն ալ այնպէս հեզ էին, որ դժուարաւ կրնար մարդ դուրսը ճանչնալ թէ եպիսկոպոսը ո՞րն է, երէցը ո՞րն է։ Նամանաւանդ երիցունք եպիսկոպոսաց վրայ տեսակ մը իշխանութիւն ունէին, միշտ անոր վարդապետութեան և բարուց տեսուչ ըլլալով... Երբ որ եպիսկոպոսը համարձակէր առաքելական աւանդութեանց դէմ բան մը ընելու կամ սովրեցնելու, չէին լռեր անոր աւագերիցունք և սարկաւագունք և սիրողաբար ազդարարութիւն կընէին անոր և երբ մտիկ չընէր՝ հայրապետներու կրողքէին, և եթէ՝ կամբաստանէին զինքը եկեղեցական ժողովքի»։ Ֆիննական Կրօնագիտութիւն. Ս. Ք. Տէր-Սարգսեանց։

**) «Քահ. Խնդ.» եր. 6։

***) Նոյն տեղ եր. 29։

****) Նոյն տեղ եր. 35։

այժմ մեր սրբազանների ու վեհափառների—ըստ Արիստակէս եպիսկոպոսի—թէկուզ կաշառներով կատարած ձեռնադրութիւնների գումարը միասին առած։

Զ.

Արիստակէս սրբազանն իր գրքում անց է կացնում այն միտքը, թէ մեր քահանայական դասակարգն այսօր աւելի վատթար վիճակի մէջ է քան թէ առաջ և քան թէ ուրիշ ազգերի մէջ։

«Իրաւ է այդպիսի տխուր փաստեր (քահանաների տգիտութեան, անարժանութեան, անբարոյականութեան և այլն) պակաս չեն և կաթոլիկ ու օրթոդոքս եկեղեցիների տարեգրութիւնների մէջ, բայց նրանցում այդ բոլորն արդէն անցած գնացած չարիքներ ու զեղծումներ են, մինչդեռ մեզանում ոչ միայն դեռ պահպանում են իրանց մեծավնաս գոյութիւնն, այլ մինչև անգամ հետզհետէ աւելի լայն ծաւալ և անփոխարինելի սովորութեան վաւերականութիւնն են առնում»*)։

Որ հարբան, թղթախաղ, պոռնիկ, արծաթասէր քահանաները այսօր և՛ կաթոլիկ, և՛ օրթոդոքս եկեղեցիներն ևս ունեն - այդ մեզանից ամեն մինը գիտէ և իր աչքերով տեսնում է։ Նոյն ինքը, սրբազան հեղի-

---

*) «Քահ. Խնդ». եր. 16

նակը հերքում է իր այս տեսութիւնն իր գրքի 216 երեսում զետեղած հետևեալ ծանօթութեամբ. «Ինչ պայմաններ, որ մեզանում պատճառ են եղել եկեղեցական բարեզարգուրեան և եկեղեցականների բարեբաւութեան անկման, նոյնպիսի անկման պատճառ են եղել և Հելլենական (ինչու չասել օրթոդոքս) եկեղեցու և եկեղեցականների համար... 1897 թուին Ամէնքի համալսարանի աստուածաբանութեան յայտնի պրոֆէսոր Դիոմիտ - Կիրիակը՝ ասում էր—«Եկեղեցականների մեծ մասը տգէտ է... հոգևորականներից 90 տոկոսը մինչև իսկ ժողովրդական դպրոցի կրթութիւն չունի... Հոգևորականութիւնն իւր աղքատութեան և տգիտութեան պատճառով ոչ մի ազդեցութիւն չունի...Համայնքները զուրկ հոգևոր կրթութիւնից և հմուտ առաջնորդներից՝ թաղուած են կրօնական տգիտութեան մէջ...»

Պնդել թէ մեր ներկայ հոգևորականութիւնը կամ այժմեան մեր քահանաները մեծ տգէտներ, վատաբարոյ, անարժան են, քան թէ առաջ՝ «եթէ յառաջին ժամանակս տգէտք և անուսմունք էին քահանայք, գոնէ բարեբարոյ գնացիւք, ջերմեռանդ Աստուածպաշտութեամբ և հօտասիրութեամբ իւրեանց պատկառելի, հետևաբար և ազդեցիկ *) էին յաչս և ի վարս ժողովրդեան, իսկ այժմ տգիտութեանն մեծի յաւե-

---

*) Ծան. Աստուածաբանութեան յայտնի պրոֆէսոր Կիրիակն ասում է. «հոգևորականութիւնը տգիտութեան պատճառով ոչ մի ազդեցութիւն չունի», իսկ սրբազան Արիստակէս նրա խօսքերը հաւանելու չափ մէջ բերելով հանդերձ, պնդում է թէ հին քահանաները տգէտ, անուսմունք էին, բայց ազդեցիկ...

լան ի վերայ յոռի բարք, թուլութիւն և պղերգութիւն ի պաշտօնի, շահամոլութիւն, աւելորդապահանջ» *), և այլն, կարծում ենք, աւելի սխալ գործած կլինենք, քան եթէ ասենք, թէ ընդհանուր առմամբ՝ այսօր մեր քահանաների մէջ միջնակարգ կրթութիւն առած, ուսման տէր անձինք թւով այնքան կարող են լինել, որքան մեր անցեալ պատմական շրջանի որ և իցէ ժամանակամիջոցում չի եղել։ Բայց եթէ դարձեալ տժգոհ ենք, եթէ հասարակութիւնը բողոքաւոր է, պատճառը որոնելու է այլ պարագաների մէջ։ Այժմ հասարակութիւնն աւելի աչքաբաց է դարձել, մամուլն իր արդասեան աչքերով թափանցում է մինչև խորը, քննադատութիւնը բարձրացնում է հոգևորականի փիլոնը, շուրջառը, քարշում է խորհրդաւորութեան վարագոյրը, բաց է անում ծածկութիւնը, դէմ յանդիման է դնում նրա՝ իբրև հոգևորականի կոչումը, պաշտօնը, քարոզը և իբրև հոգեղէնի՝ կատարած իսկական գործերը...

Եթէ սոյն հայեացքներով նայելու լինենք և շատերի կողմից գովված ու փառաբանված մեր անցած գնացած դարերի քահանաների ու հոգևոր հայրերի վրայ, անտարակոյս՝ ոչ մի առանձին տարբերութիւն ի վնաս այժմեանի չենք գտնիլ։

Լուսաւորչեան տոհմի, այդ բարձր, ազնուական, անկարօտ տան տված մի շարք ընտիր հայրապետներից զատ, մեր պատմութիւնը չի տալիս մեզ մի այլ տոհմ, այլ տուն, դպրոց, որ մի քանի ուրիշ լաւ հայրապետներ պարգևած լինէր ազգին միմեանց յաջորդաբար։

*) «Քահ. Խնդ». եր. 84։

Նոյն իսկ մեր հոգևորականութեան այն ոսկէ ժամանակում, երբ մի քանի տասնեակ բարձր կրթութիւն ստացած հայրենասէր, հաւատաւոր, գիտուն, մաքրակենցաղ հոգևորականներ զարդ ու փառք էին կազմում հայրենիքի ու եկեղեցու, հարիւրաւոր ու թերևս հազարաւորները հիմք էին ծառայում պատմահայր Խորենացուն գրելու. «վարդապետք տխմարք և ընդ ինքնահաճք, անձամբ առեալ պատիւ և ոչ յԱստուծոյ կոչեցեալ, արծաթով ընտրեալք և ոչ Հոգւով, ոսկեսէրք, նախանձոտք, թողեալ զհեզութիւն և գայլք եղեալ՝ զիւրեանց հօտս գիշատելով։ Կրօնաւորք կեղծաւորք... վիճակաւորք հպարտք, դատասացք, զրաբանք, ծոյլք, ատեցողք արուեստից և վարդապետական բանից, սիրողք վաճառաց և կատակերգութեանց»։

Եւ բազմաթիւ վատերի մէջ ամեն ժամանակ եղել են և լաւերը, սրտացաւները, ժողովրդասէրները սրբանք միշտ բողոքել են իրենց դասակիցների վատթարութիւնների դէմ, դեղ ու դարման, միջոցներ են ցոյց տվել, յորդորներ են կարդացել ճիշտ այնպէս, ինչպէս մեր օրերում Խրիմեան Հայրիկ, Մուրադեան Մելքիսեդեկ, Իզմիրլեան Մատթէոս, Սեդրակեան Արիստակէս և այլն, և այլն։

Նոյն իսկ Արիստակէս սրբազանից քահանաների վերաբերմամբ վատ կաթուղիկոսներ ճանաչված՝ Ներսէս, Մատթէոս, Գէորգ, Մակար իրենց ընդհանրական կոնդակների, կարգադրութիւնների մէջ երևում են համակրողներ մեր եկեղեցական ընտիր կարգերի, հոգատարներ եկեղեցականների բարոյական ու մտաւոր զարգացման։ Այս ամենի վկաներն ու ապացոյց-

ներն են դպրոցական հաստատութիւններին ուժ տալ և առաջ տանելը։ Բայց որ այդ ընդհանրական, այդ հրապարակի վրայ դրված կարգադրութիւնների տակ միաժամանակ կատարվել են խաթրապահութիւններ, խնամութիւններ, գիջողութիւններ, խոտորումներ— շատ հին, ժառանգական, հանրական մարդկային հիւանդութիւն է, որ ամեն դարում և ամեն ազգի մէջ արդելք է եղել և պիտի լինի մասնաւոր առմամբ։

Սակայն ցաւում ենք, որ բոլոր այն հարցերի մասին, որոնք վերաբերում են քահանայական իսկական խնդիրների լուսաբանութեան -- չկան ուսումնասիրութիւններ, չկան վիճակագրական տեղեկութիւններ սրբազան Արիստակէսի դրքի մէջ։

Բոլոր այն մերկացումները, որոնք դրեթէ ամբողջ գիրքն են կազմում, առաջադրված խնդրի նկատմամբ առանձին արժէքաւոր բաներ չեն։

Նրանք, այո, մեծ դին, մեծ արժէք կարող են ունենալ այն վաղճանված թէ կենդանի բարձրաստիճան հոգևոր անձնաւորութիւնների անհատական արժանիքների գնահատութեան համար, որոնց վերաբերում են, բայց քահանայական խնդրի համար շատ աւելի մեծ արժէք ու դին կունենային, օրինակ՝ եթէ մէջ բերված լինէին վիճակագրական թուեր, թէ արդեօք՝ «յոռի բարք, թուլութիւն, պղերգութիւն ի պաշտօնի, շահամոլութիւն, աւելորդապահանջ» յատկութիւնները որպիսի քահանաների մէջ աւելի նկատված են. միջնակարգ ուսում ունեցողների, թերուսների թէ հարցաքննութեամբ քահանայացողների մէջ, բացարձակ քուէարկութեամբ թէ դաղտնածածուկ ընտրվածների, քաղաքների թէ գիւղերի, համեմատաբար շատ ծուխ ունեցողների թէ աղքատների մէջ, և վերջապէս թէ այդ և համանման յատկութիւնները մեր ժամանակի դպրոցական կրթութիւնը որքան կարողանում է մաշել, ջնջել։

«Քահանայական Խնդրի» մէջ քահանայական խընդրի մշակման նկատմամբ պէտք է ուսումնասիրված, առանձին կերպով հարցասիրված լինէին. — Ա. Գիտուն (որ չունենք), ճեմարանաւարտ, դպրոցաւարտ քահանաները կեանքի մէջ արդարացնում են արդեօք նրանց ընտրողների ու ձեռնադրողների յոյսերը և որքան տոկոսով։ Բ. Ի՞նչպիսի նոր հոսանք, ուղղութիւն են առաջ բերել ժողովրդի մէջ։ Գ. Ի՞նչպիսի պահանջներ ունին նրանք, և ինչ չափով ժողովուրդը համակիր է կամ գոհացնում է նրանց։ Դ. Ունին արդեօք իրենց աւարտման վկայականի հետ և որոշ հաւատալիքներ ու հաստատուն սկզբունքներ և մնում են արդեօք հաւատարիմ այդ սկզբունքներին կեանքի ձախող ու տատանող պարագաներում։ Ե. Կարողանում են արդեօք սրտով սիրել իրենց ընտրող ժողովրդին ու սիրվել ժողովրդից, թէ քահանայ դառնալուց յետոյ զզջում են և կամ ամեն կերպ աշխատում են այլ իւղոտ պատառ ձեռք բերելու ետևից լինել և յարմար ժամին՝ ձգել ծուխն ու այլ տեղ փախչել։ Զ. Ի՞նչպէս են պահում իրենց դէպի իրենց պաշտօնակիցները, ծխականները. իշխանաւորները և այլն և այլն։

Մենք սպասում էինք և ցանկանում այսպիսի կամ սրանց նման խնդիրների ուսումնասիրութիւններ տեսնել Արիստակէս եպիսկոպոսի «Քահանայական

Խնդիր» վերնագիրը կրող աշխատասիրութեան մէջ. Արիստակէս եպիսկոպոսի, որ այնքան քաջամարտիկի բուռն ցանկութեամբ լցված ի կերպով դէպի քահանաների բարւոքման հարցը, հանդէս եկաւ ու կռիւ հրատարակեց. սակայն շեշտում ենք, փոխանակ մշակված, հարցասիրված այսպիսի խնդիրների, հանդէս են դրված լոկ անձնական հաշիւներ, կարծիքներ, մեղադրականներ, շատ տեղեր միմեանց հակասող ազատ դատողութիւններ և միայն մի երկու նոր համակրելի առաջարկութիւններ, ինչպէս քահանաների կրկնամուսնութիւնն ու նրանց մշտական ռոճիկ սահմանելը։

Է.

«Խօսելով քահանայական դասակարգի բարեւութեան պայմանների մասին՝ կամենում էինք եկեղեցու լրութեան ուշադրութեանը ներկայացնել և մի կէտ, որ ոչ սակաւ կարևորութիւն ունի այդ պաշտօնին նուիրուել կամեցողների համար—քահանայից կրկնամուսնութեան խնդիրը. *սակայն ստիպուած եղանք այդ ուրիշ անգամի թողնել*» *)։

Ոչ միայն այդ պաշտօնին նուիրվել կամեցողների, այլ և արդէն նուիրված, բայց այրիացած քահանաների համար ևս ահագին նշանակութիւն ունեցող կէտ է այդ։

*) «Քահ. Խնդ». եր. 219.

Պատմական ձիգ դարերի ընթացքում անվերջ կոտորածների, աւերումների ու սոսկալի հարուածների միջից մեր ազգութիւնը մինչև այսօր անմեռ պահող—պահպանողը եղել է մեր ընտանիքը։ Այսօր ևս եթէ ունինք մի կռուան, որ ամենից հաստատունը պիտի ընդունենք ու ճանաչենք մեր ազգութիւնն անկորուստ պահելու համար—դա՝ անտարակոյս՝ նոյն ընտանիքն է։ Ուստի և ամենայն բան, որ պիտի ծառայի ու նպաստի մաքուր ընտանեւորութեան պահելուն ու պահպանելուն՝ պէտք է տալ։

Մեր եկեղեցական կանոններով՝ «քահանայ ամուսնով իւրով ընդունելի է*)։» Սա նշանաւոր կէտ է։ Ժողովրդի մէջ ապրող, ծխականների տունն ազատ ելու մուտ անող հոգևոր պաշտօնեան *ամուսնով միայն ընդունելի է*։ Անամուսին հոգևորականը՝ կուսակրօն կամ այրիացած՝ զրկված են իրաւունքից աշխարհի, ժողովրդի մէջ քահանայութիւն անելու։ Մեր եկեղեցու ս. հայրերը նզովում են քահանայական արարողութիւններ կատարող թէ կուսան հոգևորականին կամ այրի քահանային և թէ նրանց ընդունող ծխականներին. «քահանայ կուսան (կուսակրօն կամ այրի) եթէ յաշխարհի քահանայութիւն առնիցէ, նաև որք ընդունին նզովեալ եղիցին **)»։ «Քահանայի վաթսուն ամենից ի վեր թէ մեռցի կինն՝ կացցէ յեկեղեցւոջ, ապա եթէ ի մանկութեան հանդիպեսցի, պարտ է երթալ ի վանս և անդ լինել մինչև ի վաղ-

*) Կանոն Ն. Կէսարիոյ։

**) Գ. Բարսղի՝ ճխզ—Կիւրղի ա.

ճան, իսկ եթէ կացցէ յաշխարհի քահանայ, նզովեալ եղիցի և որք ընդունին ժողովուրդք» *)։

Ժողովրդական հոգևոր պաշտօնէին ժողովուրդն ընդունում է ամուսնով. երբ ամուսինը մեռաւ քահանայի վաթսուն տարեկանից պակաս հասակում, պէտք է նա՝ քահանան թողնի աշխարհը, ժողովուրդը, եկեղեցին և քաշվի վանք. այլապէս նզովքի է ենթարկում եկեղեցին թէ այրիացած ջահել քահանային, որ կմնայ աշխարհի մէջ ու քահանայութիւն կանի, և թէ ժողովրդին, որ նրան տուն կընդունի, քահանայ կճանաչի։ Բայց այսօր մեր այրիացած քահանաները վանք չեն գնում, և մեր ժողովուրդն էլ ընդունում է նրանց։ Սակայն հազար ու մի տեսակ բամբասանքներ անջրպետ են կանգնում քահանայի ու ծխականի տան սրտաբաց, անկեղծ յարաբերութիւնների մէջ։ Այրի քահանան դեռահաս որդիք ունի. ո՞ւմ յուսով թողնի նրանց։ Ի՞նչ է ասում քրիստոնէութիւնը— մարդասիրութիւնը. թողնել իւր զաւակներին բախտի բերմունքին ու գնալ հեռանալ վանքերը, թէ՞ միջոց տալ նրան իր ընտանեկան կեանքը շարունակելու անբամբաս պայմաններով։

Եթէ ընդունենք, որ աշխարհը չէնացնող անդրանիկ պատուէրը, որ տվեց Աստուած նախամարդկանց, «աճեցէք ու բազմացէք»ն է, եթէ ի նկատի առնենք,

*) Գ. Բարզի ճխդ և Կիւրղի։

«Վասն որոյ կանոնք է ս. հայրապետացն, թէ կուսակրօն քահանայ՝ թէ առաջնորդ լիցի ժողովրդեան, անիծեալ է ինքն և ժողովուրդն իւր»։ Մայր Մաշտոց։

որ ինչպէս հին կեանքի մէջ, այսպէս և այսօր, անզաւակութիւնը աւելի քան թէ ոչ ցանկալի վիճակ է եղել և է, եթէ աչքի առաջ ունենանք, որ ժողովրդական եկեղեցին քահանային ամուսնով է ընդունում, և այս ամենի վրայ, եթէ աւելացնենք, որ ամուսնութիւնը եկեղեցու եօթը սուրբ խորհուրդներից մէկն է և կրկնելի է համարվում, շատ դիւրին կլինի եզրակացնելը, որ արդէն մի անգամ պսակված ին կրկին անգամ պսակվելու դիւրութիւն տալը մի առանձին դժուարութիւն չլինելու հետ, ժողովրդի համար մի շատ խորդ նորութիւն ևս չի լինիլ. մանաւանդ եթէ ի նկատի առնենք մեր կեանքի մէջ գրեթէ ամեն տեղ գտնուող այն հանգամանքը, որ ժողովուրդը չտեսնելու չափ ներում է ջահէլ այրի քահանաներին կամ իբրև աղախնու, կամ իբրև որդիների դայեակի, կամ իբրև հեռու – մօտիկ մի ազգական կնոջ հետ կենակցելը։ Ո՛չ այսչափ։ Ժողովուրդը մի քանի տեղ աւելին է անում. ուղղակի բռնում է մի այրի կնոջ*) ձեռքից և լոյս ցերեկով տալիս է այրիացած քահանային հետը կենակցելու։ Եւ այս անում է ժողովուր-

*) Մեզ թւում է, որ ս. գրքում ևս բաւական որոշ ցուցմունք կայ քահանաների երկրորդ անգամ ամուսնանալու առթիւ. ,,Խօսեցաւ Տէր ընդ Մովսէսի և ասէ. Խօսեաց ընդ որդիսդ Ահարոնի ընդ քահանայս և ասասցես ցդոսա—զի մի՛ պղծիցին յոգի ազգի իւրեանց, կամ յընտանի կամ ի դրացի իւրեանց... Եւ մի պղծեսցին վայրապար ի ժողովրդեան իւրում ի պղծութեան իւրեանց... Նա կին կոյս յազգէ իւրմէ առնուցու։ Զայրի և զհանեալ և զպոռնիկ մի՛ առնուցու. այլ կոյս յազգէ իւրմէ առնուցու կին»։ Ղևտ. իա։

դը շատ գործնական տեսակէտով։ Արդ աւելի լաւ չի՞ լինիլ փոխանակ գայթակղեցուցիչ և վատօրինակ պայմանների մէջ պահելու քահանային, հրաման տալ նրան երկրորդ անգամ ամուսնանալու։

Մեր ժողովուրդը դէպի ընտանեկան յարկի մաքրութիւնը հին ժամանակներից սկսած խիստ պահանջող է եղել. այս պահանջը դէպի ժողովրդի մէջ ազատ դուրս ու ներս անող ամուսնաւոր հոգևորականի անձն ու ընտանիքը աւելի խիստ է եղել և շատ հասկանալի պատճառով։ ,,Քահանայ ի շնութեան գտեալ, կամ ի գողութեան, կամ ի սուտ վկայութեան և կամ յայլ պղծութեան նզովեալ եղիցի և յ. դրամ տուգանս տայցէ յեկեղեցին և զերկոսին ջիլն կտրեսցին և զաղուեսադրօշմ դիցեն ի ճակատն և ժե ամ բարեւոքապէս ապաշխարեալ՝ հաղորդեսցի ի ձեռաց այլոց. բայց անհնարէ նմա քահանայանալ մինչև ի վախճան, որ յանդգնեալ քահանայութիւն արասցէ, նզովեալ եղիցի նա և ժողովուրդն *)։

Արդ ո՞րն է աւելի խելացի ու լաւ.տեսնել ջահէլ այրի քահանաներին դրված շնութեան և այլ պղծութեան պարագաների մէջ և կամաւ աչքեր գոցելով անցնել. թէ՞ դիւրութիւն տալ նրանց պատուաւոր վիճակի մէջ լինելու։

Ո՞րն է աւելի լաւ – թողնել աշխարհի կեանքի

*) Թադ. ժբ., Նիկ. ժդ. ժ., ժգ., ժթ., Լուսաւորչի Գ. Բարեղի, Ներս. Շնորհ. և այլն։

հետ շփվող ջահէլ այրի քահանային ջեռացող պայմանների մէջ, թէ՞ միջոց տալ խաղաղ սրտով ու մաքուր խղճով իր պաշտօնը պաշտելու։

Քանի որ զաւակների խնամատարութեան ու կրթութեան խնդիրը լիակատար արդարութեամբ թոյլ չի տալ այրի քահանային վանքեր քաշվելու, քանի որ այրի քահանայի շնութեան ու պղծութեան մէջ դրված լինելը չտեսնելու համար աչքեր գոցելը միշտ չէ ազատում ոչ ժողովրդին գայթակղվելուց, ոչ քահանային բաց ճակատով ժողովրդի մէջ երևալուց և ոչ հոգևոր իշխանութեանը անախորժ դատեր անելու ստիպեցուցիչ հարկից, մեր կարծիքով, ամենից դիւրինը և նպատակայարմարը կլինի քահանաներին կրկին անգամ թոյլ տալ ամուսնանալու։ Երանի՞ թոյլատուութիւն լինէր և կուսակրօնութեան իսկական կոչումն չունեցողներին ևս ամուսնանալու, որով և հետզհետէ միջոց տրվէր կուսակրօնական անբնական կենցաղավարութեան ճահիճները մաքրելու,

Լաւ ընտանիքների պահպանութիւնը եւ բազմացնելը ամենառաջնակարգ պայմանն է ազգային կեանքի յարատեւելու։ Ուստի և ազգն ու հոգևոր իշխանութիւնը պէտք է թանդ գնահատեն ինտելիգենտ, քահանայ մարդու ընտանիքի օրինաւոր գոյութեան խնդիրը։

Արիստակէս եպիսկոպոսը թէև ոչինչ չի խօսում քահանաների կրկնամուսնութեան մասին, այլ միայն եկեղեցու լրութեան ուշադրութեանն է ներկայացնում այդ խնդիրը, բայց պարզ երևում է, որ ինքը ևս տրամադիր է ջահէլ այրի քահանաներին թոյլ տալու երկ-

ղորդ անգամ ամուսնանալու, որպիսի առաջարկութիւնն արդարև արժանի է մամուլի, ազգի լրութեան և մեր հոգևոր Դլխի ուշադիր քննադատութեանը։

Սրբազանի յարուցած խնդիրը թէպէտ հին է, Կ. Պոլսի մամուլի ու երեսփոխանական ժողովների իսկ ուշադրութեան արժանացած, բայց և այնպէս այսօր էլ նոր է և չլուծված և կրկին գնահատութեան արժանի է հանդիսանում, երբ, թէկուզ անցողակի կերպով, դրվում է այն մի ցարձրատիճան եկեղեցականի կողմից։

Ը.

Արժէքաւոր տողեր են գրքի մէջ սրբազանի դիտողութիւնները քահանաներին հաստատուն ռոճիկ տալու խնդրի վերաբերութեամբ։

Թէպէտ և մեր թեմական առաջնորդներից և ոչ մէկը, նոյն իսկ և ինքը՝ դերապատիւ Սեղրակեանը տակաւին փորձ չեն արել այս խնդիրը պաշտօնական դարձնելու, բայց հէնց այն հանդամանքը, որ մեզանում, հոգևոր իշխանութեան ներկայացուցիչներից ոչ միայն ոչ ոք չէ դիմադրում (և ինչպէս դիմադրեն, քանի որ իրենք ամենքն վաղուց արդէն ռոճիկներ են ստանում), այլ ընդհակառակը՝ Սեղրակեան եպիսկոպոս հրապարակով զովում ու պաշտպանում է, իսկ միւսները միջոց են տալի հասկացող ծխականներին

ի կատար ածելու գործնական կեանքի մէջ, խրախուսված Վեհափառ Հայրապետի համակրանքով վերաբերվելուց դէպի Բաթումի տված առաջին օրինակը, պերճախօս կերպով հաստատում են, որ խնդիրը հասունացած և դրական մտքով լուծվելուն հասած է։

Քահանաներին վարձատրելու «ներկայ եղանակի հետ — գրում է սրբազան հեղինակը — կապուած են այնպիսի անախորժ երևոյթներ և սովորութիւններ, որոնց բարձումը ցանկալի և օգտակար է... Կամաւոր տուրքերի վերայ հաստատուած վարձատրութիւնը քահանային զրկում է ինքնուրոյն, անկախ բնաւորութիւնից և անաչառութիւնից. նա աշխատում է ամեն կերպ հարուստին հաճոյանալ. նորա հոգևոր օրէնքները կատարել անթերի կարգապաշտութիւնով և ծանր երդեցողութիւնով. նորա տունն և ազգականների գերեզմաններն ամենից վաղ օրհնել, մինչդեռ աղքատն այդպիսի ուշադրութիւնից զուրկ է. նա աշխատում է հարուստի կամքը, երբեմն քմահաճոյքն իսկ կատարել... Երբ վարձատրութիւնը ծուխ ունենալուց է կախուած, շատ սակաւները կարող են ազատ մնալ աւելի շատ ստանալու դայթակղութիւնից և չդիմել ստոր և աններելի միջոցների, հարուստ ծխականներ ձեռք բերելու համար. այդ է պատճառն, որ լինում են դէպքեր, երբ մի քահանայ կամենում է միանուագ թեթև գնով վաճառել *) ընկերակցին 50 տուն այնպիսի ծխական-

*) Ճիշտ այնպէս, ինչպէս ոչխարատէրերը վաճառում են իրենց ոչխարները. իսկ որ այդ աղքատներին գին տվող — առնող քահանան առնում է, որ իր հերթին եղած չեղած բուրդը խուզի, կաշիները քերթի՝ դրան ևս կասկած չկայ...

ներ, որոնցից կամ ոչինչ չի ստանում, կամ ստացածը տնօրինէքի գնալ գալու նեղութիւնը չարժի. իսկ նորա փոխարէն եռանդուն աշխատանք և խարդախութիւն գործ դնել հարուստ ծխեր ստանալու. այդ է նոյնպէս պատճառն, որ նոր եկած մի օտարականի բնակարան կամ խանութ ամենից վաղ գտնելու և վաղ մտնելու ցանկութիւնը դիմել է տալիս ամեն անարդ միջոցների։ Այս և սորա նման պատճառներն են, որ գլխաւորապէս յառաջացնում են քահանաների միմեանց հետ ունեցած գժտութիւնները, թշնամութիւնները, կռիւներն և գանգատներն, որոնց շնորհիւ և ժողովրդի մէջ անպակաս են լինում կուսակցական խռովութիւններ և բողոքարկութիւններ... Եւ ոչ մի պատճառ կայ, որ քիչ թէ շատ դժուարացնէր քահանաներին ռոճիկ սահմանելն։ Եթէ մեզանում պաշտօն ունեցող (աւելացնենք և չունեցող) եպիսկոպոսներն և վարդապետներն առաջուայ հոգևոր տուրքերով ապրելու փոխարէն այժմ կարող են ռոճիկ ստանալ *), ինչու՞ մի և նոյնը չսահմանել և քահանաների համար։ Ժամանակն արդէն դրել է մեր առաջն այդ հասունացած պահանջն, և պէտք է փութալ կատարել։ Պէտք է արժանաւոր քահանաներ ունենալու հետ միաժամանակ վճռել և ռոճկի խնդիրն և երկուսն էլ հայ հասարակութեան իրաւունք և պարտք ճանաչելուց է կախուած. այնուհետև գործադրութիւնը շատ հեշտ է. Բաթումի հայ

*) Ներողութիւն խնդրելով, պիտի յայտնենք, որ ռոճիկով չբաւականանալով, շարունակում են և կողմնակի աղբիւրներից առնելը։

հասարակութիւնն արդէն նախաձեռնութեան օրինակը տուել է»։

Քահանաներին մշտական ռոճիկ սահմանելու խնդրի մասին սրբազան Ըրիստակէսի վերոդրեալ դիտողութիւնները թէպէտ և անպայման ուղիղ են ու արձակած վճիռներն այնքան դրական, որ մեզ անչափ ուրախութիւն ու գոհութիւն պատճառելու հետ մնում է ցանկալ, որ մեր հասարակութեան բանիմաց դասակարգն աճապարի օր առաջ ի կատար ածելու այն, բայց և այնպէս ի նկատի առնելով, որ յարուցված խնդրի կատարման առթիւ շատ տեղեր արգելքների և դիմադրութիւնների են հանդիպում, կուզէինք մի քանի խօսք ասել այդ մասին, մանաւանդ որ առաջին փորձը մեզանով է եղել և որ մեզ են դիմում շատ տեղերից է որ մեր կանոնագրութեան պատճէնը խնդրելով, է որ այլ և այլ խորհուրդներ հարցնելով։

Ոմանք ասում են, որ քահանային ռոճիկ տալը ազատելով ժողովրդի իրաւասութեան տակից, կդնի նրան այն դանձարանի իշխանութեան տակ, որից կստանայ իր ռոճիկը. հետևապէս քահանան կդառնայ ժողովրդին մի ոչ հաւատարիմ պաշտօնեայ, կամ՝ ասում են նրանք, քահանային ռոճիկ սահմանելով, մենք դարձնում ենք նրան մի տեսակ պաշտօնեայ և միջոց ենք տալի անփոյթ վերաբերմունք ունենալու դէպի իր պաշտօնը։

Մենք, որ մինչև մեր ոսկորների ծուծը տոգորված ենք այն գաղափարով, որ քահանան պիտի լինի միշտ ժողովրդից ընտրված, ժողովրդից կախում ու-

նեցող, ժողովրդի առաջ պատասխանատու, ոչ մի ժամանակ մեզ չէինք ներել դնել քահանային ժողովրդից անկախ հանդիսանալու պայմանների մէջ։

Բաթումում քահանան իր ռոճիկը ստանում է դարձեալ նոյն իր ժողովրդից և նոյն այն սովորական աղբիւրներից, որից և ստանում են ամեն տեղ, միայն տարբերութիւնը կայանում է նրա մէջ, որ փոխանակ որ և իցէ օրէնք կատարելու համար դրամն ուղղակի քահանան ստանայ օրէնք կատարել տվողի ձեռքից, ստանում է եկեղեցին *) և փոխանակ սակարկութիւնների, առուտրի մէջ մտնելու, եկեղեցին ծխի կողմից արդէն սահմանած—որոշած քանակութիւնն է առնում։ Սրանով քահանան ազատվում է նախ՝ իր կատարած օրէնքների, իր կարդացած օրհնութիւնների, իր խօսեցած մխիթարութիւնների համար նոյն ժամայն դրամով վարձատրվելու անախորժ, անվայել, անպատիւ կացութիւնից և երկրորդ՝ իւրաքանչիւր մի անհատից նիւթականապէս կախում ունենալու ստորացուցիչ դրութիւնից։

Սրանով մի կողմից քահանայի ու իր ժողովրդականի մէջ հաստատվում է այնպիսի յարաբերութիւն,

*) Ծուրս քահանայից յեկեղեցիս պարտ է տանել, և ոչ ի տուն միոյ ուրուք քահանայի» Մխ. մ. Ներս։ ա. ժգ.

«Ժողովրդականք զտուրս իւրեանց անխափան հատուսցեն յեկեղեցին յօժարութեամբ, և ըստ դասուց բաժին արասցեն»։ Լուս. ժա. Ներս. ա։ Սի. մ։

Լաւ միտ առնել պէտք է. ժողովրդականք տուրքերը եկեղեցուն պիտի տան, եկեղեցի պիտի տաննեն և դասակարգութեան համեմատ էլ բաժին բաժին, մաս մաս պիտի անեն։

որ ոչինչ առընչութիւն չունի դրամի հետ, հետևապէս քահանան դառնում է արդարև իր հոգևոր զաւակներին օրհնող, նրանց համար աղօթող մի հայր, միւս կողմից եկեղեցին ստանալով այդ դրամները, իրաւամբ հանդիսանում է մի հասարակական համայնական սուրբ հիմնարկութիւն, որ պիտի պահվի, պահպանվի նոյն հասարակութեան, համայնքի անդամների ընձեռնած միջոցներով։

Քահանան իրրև այդ սուրբ տան սրբազնագործ պաշտօնեայ - սպասաւոր պիտի ստանայ և նրանից իր վարձը, որով քահանան դարձեալ մնում է ժողովրդից կախում ունեցող, ժողովրդից իր սնունդը ստացող, բայց ոչ անմիջապէս ամեն մի անհատից, այլ ծխական ժողովից – եկեղեցուց, որի առաջ և՛ հաշուետու է իր բոլոր գործած թերութիւնների, զանցառութիւնների համար։

Այսպիսով քահանան աւելի զգաստ կլինի իր պարտաւորութիւնների կատարելու մէջ, քանի որ դատաւորը մի երկու պատահական կամ մասնաւոր ասող ու խօսողներ չեն, այլ մի պատկառելի ժողով, որի անդամներն անձամբ տեսած, գիտակ ու քաջածանօթ են այն դատին ու խնդրին, որի համար և ժողով են կազմել, և քանի որ այսպիսի ժողովի վճիռը կտրական նշանակութիւն կունենայ քահանայի վիճակի նկատմամբ։ Այս պայմաններում քահանան ամեն սրտացաւութեամբ կջանայ հարստացնել ոչ թէ իր գրպանը, ինչպէս մինչև այժմ, այլ եկեղեցու զանձարանը, եկեղեցին, որի հարստանալով՝ կարող է սպասել և իր բարեխիղճ պաշ-

տօնավարութեան համար մաքուր վարձատրութիւն։

Եւ եկեղեցու գանձարանը—հարստութիւնը ժողովրդինն է և ոչ ուրիշինը։

Ոմանք գտնում են, որ օրէնք, ծէս կատարել տալու համար չի կարելի պարտաւորական հարկ, տուրք նշանակել ծխականների վրայ։ Սա լոկ խօսքեր են։

Առաջինը՝ չկայ իրաւունք առանց պարտաւորութեան. ծխականի իրաւունք ունենալու համար պէտք է ծխական տուրք վճարել եկեղեցուն և երկրորդ՝ այս հասոյթը նոյնքան պարտաւորական է մնում եկեղեցուն տալը, որքան մինչև այժմ պարտաւորական էր քահանային տալը։

Ի՞նչ է արել մինչև այժմ այն լաւ քահանան, որ մէկի երեխային մկրտել է, պսակն օրհնել է, ննջեցեալը թաղել և այլն, բայց փող չէ ստացել։

Նա մի քանի անգամ մեղմիկ յիշեցրել է և ապա մոռացութեան տվել, տանելով իրեն հասած դրամական զրկանքը։ Զենք խօսում վատ քահանայի մասին, որ հայհոյելով, անիծելով ու խիստ պահանջելով՝ առնում է։

Այսպէս և եկեղեցին կանի. իր երեսփոխանի միջոցով կյիշեցնի կարգ չճանաչող, դրամ չվճարող ծխականին նրա պարտքը, կպահանջի, իսկ երբ պարտազանց ծխականը չի տալ—նա կլռի, կտանի իրեն հասած դրամական զրկանքը և տարվայ վերջը ծխականների ընդհանուր ժողովում, իր հաշուետուութեան ժամանակ կկարդայ բոլոր պարտազանց ծխականների անուանացուցակը, որոնք միջոց ունենալով հանդերձ,

վատաբար զլացել են պսակի, մկրտութեան, ննջեցեալի և այլ օրէնք կատարել տալու համար վճարելու եկեղեցու հասոյթը։

Երեսփոխանը կտպագրի հաշիւը և անուանացուցակը։ Եւ միթէ սրանից աւելի մեծ պատիժ կարող է լինել։

Եւ վերջապէս միթէ աւելի արդար ու խղճմտաւոր չէ, որ վատ մարդկանց պատճառած դրամական այսպիսի զրկանքները հասնեն հաստատութեանը, որ լիակատար իրաւունքով կարող է հաշիւ տալ իրեն պահող—պահպանող ծխականներին և որ կարող է լրացնել այդ զրկանքն այլ միջոցներով, քան թէ հասնեն այդպիսի զրկանքները լաւ քահանաներին, որ ամօթից հաշիւ չեն կարող տալ, այլ վերջի վերջոյ դառը փորձերից դաս առած՝ հարկադրված կլինին իրենց լաւութիւնը կամաց կամաց չափաւորելով, պնդերես և պահանջող դառնալու։

Գալով հասոյթի չափին՝ սա ևս որոշվում է ծխական ժողովի ձեռքով։

Ժողովն ի նկատի առնելով մի քանի տարվայ քահանայական եկամուտները, թէ իւրաքանչիւր ծխական ինչքան է տվել այլ և այլ ծէսերի կատարման ժամանակ, ըստ այնմ և կբաժանի մի քանի դասակարգերի և այդ սահմաններում կորոշի ամենապակաս գները, ազատելով անկարող ծխականներին վճարներ տալուց։

Եթէ գտնվում են մարդիկ, որոնք ասում են, թէ անորոշութիւնը, քէֆը, կամայականութիւնը աւելի լաւ է, քան թէ կարգաւորութիւնը, քահանային տալն

աւելի լաւ է, քան եկեղեցուն – պէտք է ջանալ նրանց համոզել. որովհետև այդպիսի խօսքեր միայն – կարծում ենք տգէտ, մտածելու անընդունակ, չարը բարուց չզանազանող մարդիկ կասեն. իսկ երբ հնար չլինի նրանց համոզելու, պէտք է ցաւելով նրանց վրայ, թողնել առանց ուշադրութեան և սկսել բարի գործը։

Հետզհետէ նրանք ևս մեծամասնութեան ու աւելի բանիմացների օրինակից խրատվելով, ամեն տարվայ հաշիւներից կարմրելով՝ կարգի տակ կմտնեն։

Իսկապէս սրանք շատ չնչին արգելքներ են գործը կարգաւորելու նկատմամբ։

Ոմանք չ՝զգալով իրենց ասածի անհեթեթութիւնը, գտնում են, որ օրէնքներ կատարելու համար որոշեալ հասոյթ նշանակելը կհակառակէր Հայաստանեայց եկեղեցու և նոյն իսկ աւետարանի ոգուն – մէջ բերելով ձրի առէք և ձրի տուէք գաղափարը։

Բայց մի՞թէ Հայաստանեայց եկեղեցու պաշտօնեաները երբ և ի՞նչ ձրի տվել, ձրի կատարել են, կամ ուրիշ խօսքերով՝ նրանք *երբ և ի՞նչ առանց հացի ապրե՞լ են։*

Հայաստանեայց եկեղեցու պաշտօնեաները այսօր էլ Աստուծոյ արքայութիւնը ձրի են քարոզում, հիւանդներին, բորոտներին, այլ և այլ դևեր արատներ ունեցողներին այսօր էլ խոստովանութեան, ս. հաղորդութեան, ս. գրքերի ընթերցանութեան ու խրատների միջոցով ձրի են բժշկում, սրբում, ուղղում. բայց թաղումներ կատարելու, մկրտութիւններ անելու, պսակ, տուն, գերեզման օրհնելու համար հոգևոր պաշտօնեաները միշտ ստացել են հասոյթներ *) և այն ոչ թէ յանուն այս կամ առաքեալի, այս կամ այն պաշտօնէի, այլ յանուն և ի պէտս քրիստոնեայ եղբայրութեան **,) ժողովի - եկեղեցու։

Եւ այս եղբայրութիւնն ունեցել է իր յատուկ վերակացուները – սարկաւագները, որոնք ստացել, ժողովել են ու որոշ ժամանակ բոլոր պաշտօնեաների ներկայութեամբ բաժանել են աւագ երէցների, քա-

---

*) Մեր եկեղեցական կանոնների մէջ այսպիսի վճարներն անուանվում են տուրք, հասք. իսկ այս բառերը կամաւորի միտք չեն պարունակում. բացի այն, որ նզովքներ են դրված, իբրև «աստուածամարտ»ների հաղորդութիւնից են զրկած այն անձերին, որոնք եկեղեցու, քահանայի հասոյթները կկտրեն, այլ նոյն իսկ և այն հասոյթների ամենապակաս չափը որոշված, սահմանված է. ուրեմն հնումը մեր եկեղեցական կանոններով տուրքերի քանակութիւնն էլ է եղել որոշված։ «Հասք ժողովրդոց առ քահանայս՝ դ. դրիւ ցորեան, զ. դրիւ գարի, ժզ. փաս քաղցու և գինի ըստ գոյին, բայց անընչից՝ կէսն (խեղճ աղքատներն էլ ազատ չեն եղել) և որոց այգի չգուցէ մի՞ առցեն, և որոց ոչխար իցէ ոչխար մի և գ. գզաթ բուրդ և որոց ձի գուցէ, յովանակ մի»։ Վ. ե. Մխ. ժզ։

«Կողոպուտ վաղճանեալ տանուտէարց՝ յաթոռոյ մինչև ցոչնակն և ցդրգալն և ի զդեստիցն մինչև ցգօտին և ցկօշիկն և զանկողինն ի վանս տացեն»։ բ. Սհ. ե։

**) Սափիրայի այրը՝ Անանիա, երբ քրիստոնեայ դարձաւ, իր ագարակը վաճառեց և ստացած գումարի մի մասը միայն տվեց առաքեալներին— եղբայրութեանը. – մնացածը պահեց։ Այս բանի համար Պետրոսից խիստ յանդիմանութիւն ստացաւ և մեռաւ։ Գործ. առ. ե. 1—10։

հանաների, սարկաւագների, դպիրների և մինչև իսկ այրիների ու եղբայրութեան աղքատ անդամների վրայ։ Այնպէս, որ այն տուրքը, որ այսօր սմանց բերանում կամաւոր անունն է կրում, իսկապէս չէ եղել կամաւոր. այդ տուրքի, հասոյթի քանակութիւնն էլ չէ եղել կամաւոր, — այլապէս ինչով կարող կլինէին կերակրվել, ապրել եկեղեցականները։

Իսկ եթէ այսօր ժողովը — եկեղեցին, որ առանձին առանձին վերցրած մի մի եղբայրութիւններ են որոշեալ ծխականներից բաղկացած, ընդհանուր համաձայնութեամբ վեր կենայ և մինչև այժմ քահանաներին կամաւորապէս տրված վճարների սահմաններում կարգեր սահմանի, որով և ազատի այլ և այլ տատանումներից ու անախորժութիւններից, ինչ մի առանձին դժուար, անիրագործելի և Հայաստանեայց եկեղեցու հոգուն հակառակ քայլ, արարմունք կլինի գործած։

Մեր կարծիքով, հէնց ս. Աւետարանի և Հայաստանեայց եկեղեցու վսեմ հոգուն հակառակն է անձի, պաշտօնէի ձեռքը ուղղակի դրամ դնելն իբր նրան հասանելի, որով և անձին, պաշտօնէին իբրև վարձաւոր ճանաչել - նայելը։

Բայց չէր լինի այսպէս, երբ նոյն հասոյթները, տուրքերը, դրամը տրվին եկեղեցուն, որպէս հասարակական հաստատութեան, որ կառուցվում, պահվում - պահպանվում է ժողովրդի, ծխի, հասարակութեան միջոցներով։

Ոմանք գտնում են, որ տգեղ է պահանջել, որ նախ դրամը — հասոյթը վճարվի եկեղեցուն, ապա

ստացված անդորրագիրը քահանային տալուց [illegible] կատարվի օրէնքը — ծէսը։

Մի հասոյթ, որ պիտի ուշ թէ շուտ վճարվի, [illegible] արժէ միթէ խօսք անդամ յարուցանել թէ որն է լա[illegible] առաջ վճարելը թէ յետոյ։

Ընդէ՞ր ննջեցեալի տէրը թաղումից առաջ պիտի այլ և այլ պատրաստութիւններ կանխիկ հոգայ, կամ առաջ պիտի ստանայ պատշաճաւոր իշխանութեան թոյլտուութիւնը, ապա թէ յուղարկաւորութիւնն սկսվի, ընդէ՞ր պսակի տէրը պիտի վճարի նախ ամուսնացաւը, ստանայ հրամանը և ապա թէ պսակի օրհնութիւնը կատարվի, և այս ամենը Հայաստանեայց եկեղեցու հոգուն հակառակ չի, որովհետև արդէն սովորել - ընտելացել են, իսկ որ այդ ամենի թւում եկեղեցու հասոյթը նախ վճարվի և ապա արարողութիւնը կատարվի, ինչ վնաս կլինի։

Այստեղ կայ յարմարութեան և մի փոքր էլ վստահութեան խնդիր։

Որ որոշ չափը և նախ վճարելը աւելի յարմարութիւն ունի եկեղեցու — հիմնարկութեան անվարձ պաշտօնեայ երեսփոխանի համար, քանի որ հարկ չի լինի սրան այլ ևս միջոցներ ձեռք առնելու, յիշեցնելու, մարդիկ ուղարկելու դրամներն ստանալու նպատակով — կարծում ենք պարզ է։

Որ մասնաւոր մարդը - ծխականը՝ պարտաւոր է վստահութեամբ, հաւատով վերաբերվելու դէպի եկեղեցին ի դէմս երեսփոխանի, եկեղեցու պաշտօնէի, քանի որ ամբողջ ծխի կողմից ընտրվածներն են նրանք, կարծում ենք, այս ևս պարզ է, և վերջապէս որ երբ

բանը մնայ յետոյի, յիրաւի, կարող է մոռացութեամբ, անհոգութեամբ և այլ պատճառով մնալ անվճար, այն ինչ հարկը, օրէնքը ոչ մի դէպքում չի կարող մնալ անկատար—այս էլ պարզ է ու պարզ։

Ուրեմն ինչու առաջ չվճարել։

Բացառիկ դէպքերի մասին խօսք լինել չի կարող—ինչպէս անակընկալ մկրտութիւնը և այլն։

Ոմանք գտնում են, որ ծխաբաժանութիւնը ամենից լաւ, պատուաւոր և հաստատուն միջոցն է քահանաների նիւթական դրութիւնն ապահովելու համար. այսպէս է ընդունելուս եղել և ինքը տէր Արիստակէս եպիսկոպոս մինչև որոշ ռոճկի խնդրի հրապարակ հանվելը - «ապահովութեան իրական միջոցը գիւղական քահանայի համար ևս լինելու էր բաւականաչափ ծուխ ունենալ»... «Այդքան (250) ծուխը թէ քաղաքի և թէ գիւղի քահանայի դրութիւնը բարւոքելու համար բաւական է» *)։

Եւ ապացոյց մեր ասածի, թէ այսպէս է մտածելուս եղել սրբազանը մինչև որոշ—հաստատուն ռոճկի խնդրի հրատարակվելը, օրինակ տալը, մենք մատնացոյց կանենք այն հանգամանքի վրայ, որ ոչ իր պաշտօնավարութեան ժամանակներում փորձեր է արել և ոչ իր առաջարկութիւնների մէջ առ սինոդ կամ կաթուղիկոս յիշատակել է այդ մասին։

Բայց թէ որքան անյարմար սիստեմ է ծխաբաժանութիւնը—շատ որոշ ու հաստատուն կերպով մեկ-

*) «Քահ. Խնդ.» եր. 215—216»

նում են ու պարզում սոյն գլխի սկզբում առաջ բերած նոյն սրբազան Արիստակէսի գնահատելի խօսքերը։

Մեզ մնում է աւելացնել, որ ծուխն այն հասկացողութեամբ, ինչպէս այսօր է հասկացվում, արդարև ս. աւետարանի և Հայաստանեայց եկեղեցու հոգուն խորդ է ու անպատշաճ։

Ծուխը քահանայինը չէ, այլ եկեղեցունը։

Նոր դարձուած, նոր երևոյթ է այս ինչ կամ այն ինչ քահանայի ծուխ ասելը.—այլ ուղիղը՝ մեր կարծիքով—այս ինչ կամ այն ինչ եկեղեցու ծուխ ասելն է։

Իւրաքանչիւր մի տաճար—եկեղեցի ունեցել է իր ծխական ժողովուրդը և իր միաբան քահանաները։ Սրանք հերթով կատարել են եկեղեցու ծխականների հոգևոր պէտքերը և կամ նայած քահանաների՝ ու ժողովրդականների բնակութեան յարմարութեանը՝*) թաղերով բաժանել են իրենց մէջ, որպէս զի պատահած օրէնքները, տնօրհնէքները, դիւրութեամբ կարողանան կատարել։

Եկամուտները սովորաբար հաւաքվելուս են եղել մի տեղ—մի գանձարան և ապա բաժանվել։

Այս դրութիւնը կամաց կամաց փոխվելով, ծուխը դարձել է մի տեսակ սեպհականութիւն. այսինքն՝ իւ-

*) «Ծուխ քահանայի ուրուք եթէ փոխեսցի թաղ ի թաղ այն երիցուն լեցի ծուխ, յոր թաղ բնակեսցի, զի մի է օրինակ ճոխութեան ընդ ամենայն տեղիս»։ Մխ. Ե.։ Խօսքը հովութեանն է վերաբերում, այլ ոչ հոգուն։ Եթէ ծուխը քահանայի սեպհականութիւն լինէր, որ թաղն էլ փոխվէր ծխականը, նրա տէր-քահանան էլ հետը կերթար, ինչպէս այսօր։

բաքանչիւր քահանայ իր գրպանն է դրել բոլոր այն եկամուտը, ինչ որ ստացել է իր հովութեանը սեպհականացրած ծխից. իսկ ծխի՝ սեպհականութիւն, սեպհական եկամտի աղբիւր դառնալը մոռացութեան է տվել բնակած տեղերի յարմարութեամբ տների բաժանվելուն և լայն ճանապարհ է բաց արել ճարպիկ, ուժեղ, լեզուանի և ամեն միջոց սուրբ համարող քահանաներին ծխերի թիւը կարելոյն չափ շատացնելու։

Նոյն իսկ ծխականներն էլ իրենց կարգին ձգտել են աւելի դիրք, կշիռ ունեցող քահանաների հովութիւնը, ծանօթութիւնը որոնելու, որով առաջացել է այն վրդովեցուցիչ կացութիւնը, որ այսօր բանական ժողովուրդն իբրև ոչխարների հօտ, իբրև եկամուտների աղբիւր դարձել է այս կամ այն քահանայի առանձին սեպհականութիւն։

Եւ մի և նոյն եկեղեցու ժողովուրդը այլ և այլ քահանաների վրայ բաժանվելով, կազմել են մէկը միւսից մի տեսակ անջատ, առանձին միութիւն այնպէս, որ երբ մի քահանայ վախճանվում է—նրա ծխականները առանձին քահանայ են ընտրում առանց հարցնելու եկեղեցու մնացած ժողովրդի համաձայնութիւնը, որով շատ անգամ այնպիսի մարդիկ են իբրև քահանայ ներս բերում, որ իրաւ անհաճոյ են լինում միւսներին։

Սրանով առաջանում է կռիւ, պառակտում, անվերջ անբաւականութիւններ քահանաների ու ծխականների մէջ։

Այն ինչ իւրաքանչիւր մի եկեղեցի իր բոլոր

ծխական ժողովրդով ու քահանաներով մի ընտանիք է և այն ինչ մեր եկեղեցական կանոնով քահանան պիտի ընտրվի բովանդակ ծխի—ժողովրդի համաձայնութեամբ։

Եւ ծխականութեան այսօրվայ այսպիսի կացութիւնը ոչ միայն ոչինչ վրդովեցուցիչ հանգամանք չէ ներկայացնում, այլ և գտնվում են մարդիկ, որոնք չեն վշտանում իրենց այս աստիճան ստորացած վիճակից, և դեռ չատագովելով, առաջարկում են ընդունել ծխաբաժանութեան սիստեմն իբրև ամենայարմար միջոցը քահանաների ապահովութեան...

Ոմանք ասում են, թէ մեր քաղաքում քահանաների թիւը շատ աւելի է, քան թէ պէտք է լինէր. ուստի և գտնում են, որ անհնարին է այդքանին ռոճիկ տալը։

Ճշմարիտ է. այս հանգամանքը բաւական գործը դժուարացնող է, այլ ոչ անհնարին դարձնող։

Անշուշտ ուր կան շատ թւով քահանաներ, այնտեղ քահանաները կունենան և քիչ ծխականներ—քիչ եկամուտներ։

Պէտք է եկեղեցու ծխական ժողովը որոշի, թէ իր եկեղեցին քանի տուն ժողովուրդ ունի, որքան քահանայական եկամուտ կարող է տալ տարեկան և որքան քահանայ է պէտք իրենց հովելու համար։ Ապա և եկեղեցու ծխական եկամուտը կբաժանի եղած քահանաների վրայ, սահմանելով, որ մի քահանայի վախճանվելով, երբ տեղ բացվի, նոր քահանայ չտան ձեռնադրելու, այլ պակասող քահանայի ռոճիկը բաժանեն մնացածների վրայ և այսպէս վարվեն այնքան,

մինչև որ քահանաների թիւը կանոնի պահանջված թիւի վրայ։

Ոմանք հոգևոր կեդրոնական իշխանութեան իրաւունքների պաշտպան հանդիսանալով, անկարգութիւն են համարում, երբ մի հասարակութիւն կարողանում է չարը բարուց, վատը լաւից զանազանելով, ուղղակի ձեռք պարկել ի կատար ածելու օգտաւէտ և օրինաւոր ճանաչված դրութիւնը, այլ առաջարկում են սպասել, որ կեդրոնական իշխանութիւնն ինքը կանոնները մշակի, ինքը ձեռներից հանդիսանայ, ինքը հրաման արձակի քահանաներին ռոճիկներ սահմանելու մասին։

Սակայն մեր հոգևոր իշխանութիւնը, եթէ կամենայ էլ, չի կարող այդպիսի մի ընդհանուր կարգադրութիւն անել, քանի որ մեր եկեղեցական գործերի համար մեզ տված կանոնադրութիւնը իւրաքանչիւր եկեղեցու ծխական ժողովի իրաւասութեանն է վերապահում իր եկեղեցու պաշտօնեաներին այս կամ այն ձևով ապրուստի միջոց տալը։

Օրէնսդրութեան ժա հատորի (1896 թ. հրատարակութիւն) 1247 յօդուածն ասում է. (հայ լուսաւորչեան եկեղեցու) «սրբազնագործ պաշտօնեաների ու սպասաւորների ստանալի հասոյթը կարող է լինել 3 տեսակ. 1. մշտական, որ որոշում սահմանում է ծուխը նրանց պաշտօնի մէջ մտնելուս, 2. տուրքեր, որ կըստանան նրանք հոգևոր պէտքեր կատարելու ժամանակ և 3. կամաւոր նուիրատուութիւններ»։

Ահա օրէնքը։

Եւ մեր հոգևոր իշխանութիւնն այս երեք տեսակի

տակ է դրել և ընդունել քահանաներին ու եկեղեցական սպասաւորներին նիւթականապէս բաւարարելու խնդիրը, թողնելով ծխականներին որոշելու, որը իրենց համար յարմար կգտնեն։

Հետևաբար ոչ մեր հոգևոր իշխանութեանը հարկ կայ միջամտելու և հարկադրելու ծխականներին անպատճառ իր կամեցած ձևն ընդունելու, և ոչ հարկ կայ ծխականներին նորանոր հարցումների ու հրահանգութիւնների սպասելու հոգևոր իշխանութիւնից։

Այո, միանգամայն համակրելի, օրինաւոր և արդար են սրբազան Արիստակէսի խօսքերը թէ՝ ժամանակն արդէն դրել է մեր առաջ այդ հասունացած պահանջը և հայ հասարակութեան իրաւունքն ու պտրտքն է ի կատար ածելը։

Թ.

Այժմ դառնանք գործնական աշխարհին և տեսնենք թէ Արիստակէս սրբազանն իբրև առաջնորդական փոխանորդ և իբրև յաջորդ ինչ միջոցներ, որքան ճիգ ու ջանք է գործ դրել լաւ քահանաներ տալու համար։

Սկսում է իր գործունէութիւնը 1867 թուից—22 տարեկան հասակից։

Առաջին անգամ իբրև թեմական առաջնորդի փոխանորդ այցելում է Նուխին և շրջակայքը և զարմանքով լսում է և տեսնում՝ «բազմաթիւ փաստեր քա-

հանայական դասակարգի աննեբելի վարմունքների և ստորացած ծաղրական դարձած դրութեան մասին։

«Ծանը է լինում մանաւանդ այն տպաւորութիւնը, որ ինչ որ թողեց մեզ վրայ ուտիաբնակ գիւղերի այցելութիւնը» *)։

Դրի է անցրել, նկարագրել է տեսածները, լսածները և յայտարարութեամբ դիմել է սինոդին ու միջնորդել. «առ ի զառաջս առնլոյ այսպիսի անկարգութեանց և ազատելոյ զժողովուրդս մեր և զեկեղեցի ի ձեռաց այսպիսի տգէտ, անբարեկարգ և անարժան եկեղեցականաց, պարտ է հոգալ և կրթել զքանի մի մանկունս յուսմունս ս. գրոց և քահանայական պարտաւորութեանց. և ի բերել ժամանակին՝ ձեռնադրել և տալ ողորմելի ժողովրդոց» **)։

Սինոդն ընդունում է այս միջնորդութիւնը. 4 երեխայ ուղարկում են.—«բայց Մայր Աթոռի Ժառանգաւորաց դպրոցից զուրս զալուց յետոյ նորանք փոխանակ իրանց հայրենական գիւղում քահանայ լինելու, մէկը քահանայացաւ Թիֆլիզում և միւսներն էլ ընտրեցին ուրիշ տեղեր և պարապմունքներ» **)։

Եւ սրանով երիտասարդ վարդապետը կատարած է համարում իր պարտքը. ժողովրդի թշուառութիւնը շօշափելի կերպով տեսնելուց յետոյ՝ «*կեցութեան դըժուարին պայմաններն ստիպեցին մեզ անառողջութիւն պատճառաբանելով*—գրում է սրբազան հեղինակը—*նոյն տարուայ հոկտեմբերին թողնել Շուշին...*» **)։

*) «Քահ. Խնդ. եր. 3։

**) Նոյն տեղ եր. 6, 7, 8

Որպիսի՞ սրտացաւ և արդիւնաւոր գործունէութիւն և՝ որ աւելի նկատելին է՝ որպիսի *սուտ* պատճառաբանութիւն գործից հեռանալու համար։

Նոյն ամսում նշանակվում է Տաթևի վանքի վանահայր և վիճակի փոխանորդ։ «Այնքան պիտանի—գրում է սրբազանը—գործունէութիւն և համբաւ ունեցած Տաթևի վանքը միանգամայն անզարդ, անփառունակ և ցաւալի վիճակի մէջ էր... հոգևոր իշխանութեան ներկայացուցիչներն այստեղ, մանաւանդ քահանայական ձեռնադրութեանց գործում, ոչինչ պակաս չէին թողել *ինչ որ կարող են անել շահասիրութիւնն եւ անպատկառութիւնը*» *)։

Երիտասարդ փոխանորդը յայտարարութիւն է գրում սինոդին և խնդրում է իրաւունք վանքում դպրոց բանալու։ Սինոդը պատասխանում է, որ Երևանի փոխ—թեմակալը՝ «ունի ընդ փոյթ ելանել յայցելութիւն վիճակին. ուստի և յանձնել Ձեզ ի գալն նորա այդը ի Տաթև խորհրդակցեալ ընդ նմա զկարևորացն դպրոցին և զեղանակէ վարչութեան նորա և զհետևութեանցն յայտնել սինոդիս առ ի տնօրինելոյ ըստ այնմ զպատշաճն» **)։

Սակայն ժամանակին «ներկայանալով նորան՝ (Երևանի փոխ - թեմակալին) կամեցանք խօսել և դպրոցի համար—գրում է հեղինակը—բայց նկատեցինք, որ դորա մասին նա ոչ ախորժակ ունէր լսելու և ոչ ժամանակ։ Կրկին դիմել սինոդին միտք չունէր մեզ յայտնի

*) «Քահ. Խնդ». եր. 7—8։

**) Նոյն տեղ եր. 9։

պատճառով. որպէս և միտք չ'ունէր այնուհետև մնալ Տաթևում, ամիսներով զրկուած պոստային հաղորդակցութիւնից եւ մտաւորական կանոնաւոր պարապմունքի յարմարութիւնից առանց մի բարոյական մխիթարութեան» *)։

Ինչպէս թէ կամեցանք խօսել։

Սինոդից Ձեզ պատուիրված էր խօսելու։

Ի՞նչպէս թէ նկատեցինք, որ ախորժակ չունէր լսելու։

Դուք պարտաւոր էիք աշխատել լսել, համոզել տալու նրան, իսկ հակառակ դէպքում բողոքելու։

Այս էր պահանջում եկեղեցու և ժողովրդի ցաւն ու շահը։

«Առանց մի բարոյական մխիթարութեանց»—ՏԷՐ Աստուած։

Եւ 22 տարեկան երիտասարդ, ժողովրդի մէջ նոր ոտք դրած, ասպարէզ իջած, ուսումնական վարդապետը, որ այնքան սրտառուչ կերպով նկարագրում էր ժողովրդի թշուառ կացութիւնը, տգէտ, անուս, անարժան քահանաների վարմունքները, որ այնքան ամուր շեշտում էր պիտանի գործունէութիւն և համբաւ ունեցած Տաթևի անդարդ, անփառունակ և ցաւալի վիճակը, այժմ ոչ մի բարոյական մխիթարութիւն չի գտնում ժողովրդին քարոզելում, խրատելում, տգէտ քահանային օգնութեան հասնելում-ժամասացութեան, ս. գրքերի ընթերցանութեան, եկեղեցական արարողութիւնների մէջ ցուցմունքներ անելում, վանքի հարուստ կալուածները կարգի դնելում, իր վիճակի հոգևոր կառավարութեան մէջ արդարադատութիւն, կանոնաւորութիւն մտցնելում, 4000 տան չափ գիւղացիների մէջ դպրոցներ բաց անելում...

Սա է եղել մեր Սեդրակեան վարդապետը։

Եւ Տաթևի վանքի մասին իր նոր գրքում յատուկ մի ծանօթութեամբ չէ մոռանում սրբազանը յիշեցնելու թէ այժմ էլ նոյն անդարդ, անփառունակ և ցաւալի վիճակումն է, երեսուն տարի անցնելուց յետոյ...

Ուրիշ ինչպէս կլինի, երբ լաւերը գործից փախչեն իր նման։

Երբ երիտասարդ վարդապետը «կեցութեան դժուարին պայմանները» տանել չէ կարողանում, երբ ժողովրդի մէջ գործելում «բարոյական մխիթարութիւն» չէ գտնում և մի քանի ամիս մնալուց յետոյ փախուստ է տալի գործից, նրա ուրիշին դատող ու սնացնող յայտարարութիւնները ժողովրդին «շրթամբք մեծարելու» և սիրտը ժողովրդից «հեռացեալ ի բաց» լինելու ապացոյցներ են դառնում։

Եւ այս հանգամանքը մեզ լիակատար իրաւունք է տալիս Տաթևից, ուրիշների հասցէին, սինոդն ուղղած Սեդրակեան վարդապետի յայտարարութիւնից առնելով, իրեն վերադարձնել սա սարսուռ պատճառող խօսքերը. «ո՜ հովիւ, որ զանձդ հոգաս և ոչ ըզխաշինս»։

«Այնքան պիտանի գործունէութիւն և համբաւ» ունեցած Տաթևից ևս հեռացաւ մի քանի ամսից յետոյ։

1876 թուին կրկին գալիս է Ղուշի փոփանորդա-

*) «Քահ Խնդ.» եր. 10։

կան պաշտօնով և այս անգամ մնում է 4 տարի, «տարաբաղդաբար—գրում է սրբազան հեղինակն ինքն իր համար—անկարող լինելով քահանայական դասակարգի բարելաւութեան նկատմամբ որ և է օգուտ բերելու» *)։ «Մի կողմից թեմի վանքերի լայնատարած կալուածների վիճելի գործերի և կառավարութեան մասին պահանջող բարդ հոգսերը, միւս կողմից փոխանորդական պարտաւորութեան հետ միաժամանակ և թեմական վերատեսչի պաշտօնի ծանրութիւնը **) խլում էին մեծ ուշադրութիւն և *ողոր ժամանակը*։ ***) Անճարութեան առաջ խոնարհվելով՝ մի միջոց միայն ընտրեցինք—այն է՝ քահանայացուներին, որոնց գործերն

*) Արիստակէս եպիսկոպոս հանգուցեալ Գէորգ կաթուղիկոսին բացարձակապէս մեղադրում է տգէտ քահանաների ծաւալը—արծաթասիրութեան պատճառով—մեծացնելու մէջ և որպէս զի նրա այդ ընթացքին,հետևող կամ նպաստող չհամարվի ինքը՝ «Բարձրից եկած հրամաններին ու կարգադրութիւններին դէմ գնալը» մի փոխանորդ—վարդապետի ուժերից վեր պատճառաբանութեամբ է արդարացնում։ Սրանից պարզապէս պէտք է եզրակացնել, որ Ղարաբաղում իր վարդապետ—փոխանորդ ժամանակ անարժան քահանաների թիւը ևս մեծ ծաւալ է եղել ստացած, բայց այս՝ չնորհիւ բարձրից եկած հրամանների... Եւ ինքը, ի հարկէ ոչ միայն չէ բողոքել, չէ դիմադրել. այլ այսպիսի հրամանների ու կարգադրութիւնների այնպիսի կատարող է եղել, որ արծաթասէր Գէորգ կաթուղիկոսից այդ ժամանակներում պարգևատրվել է եպիսկոպոսական բարձր աստիճան ստանալով։

**) 1876 թւից մինչև 1881 թիւը ամբողջ Ղարաբաղի թեմում եղել է 10-ից ոչ աւելի ծխական դպրոց։

***) Այդտեղ՝ Շուշում և այդ միջոցներում է լոյս տեսել «Դրեպէր»ը սրբազանի թարգմանութեամբ։

արդէն սինոդին առաջարկուած էին ժողովել, Շուշի և յանձնել թեմական դպրոցի ուսուցիչներին, որ դասաւանդեն նորանց մի քանի առարկաներ, որքան կնեբէը ժամանակը մինչև ձեռնադրութիւնը» *),—այսինքն՝ *ընծայարանները է բացել*...

Սրանից երևում է, որ իր փոխանորդութեան ժամանակվայ առաջարկված տիրացուներն ևս ընծայարան մտնելու արժանիքների տէր են եղել և որ վերջապէս 4 տարվայ ընթացքում Սեղրակեան հայր սուրբի արած միակ գործնական քայլը այն է եղել, որ անպատրաստ տիրացուներին թեմական դպրոցի ուսուցիչներին է յանձնել դասաւանդելու այնքան ժամանակ, որքան կտևէը ձեռնադրութեան հրամանները ստանալը... Ո՛ զարմանք, ուրեմն տգէտ տիրացուներին մի քանի ամսում գիտուն դարձնելու, ընծայարանի չնորհներին արժանացնելու առաջին փորձը տ. Արիստակէս վարդապետն է տվել դեռ Ղարաբաղում փոխանորդ եղած ժամանակ։ Ընծայարանի, որ այնքան արժանապէս դատափետում, վատաբանում է իր գրքի մէջ ինքը հեղինակը։

Մարդարէ չպէտք է լինել գուշակելու համար, որ մի քանի տարուց յետոյ էլ, աւելի մեծ զայրոյթով կդատափետի կոնսիստորիաներին քահանայացուների ընտրութեան մէջ միջնորդ հանդիսացնելու միտքը, եթէ, Տէր մի արասցէ, ուրիշներն ևս հետևեն Ատրախանի կոնսիստորիայի օրինակին, և եթէ գործնականութիւնը տայ իր վնասակար արդիւնքները։

*) «Բահ. Խնդ.» եր. 10 11։

Ժ

«Այդ (քահանայական) խնդրում որոշ դիրք ունենալ կարելի եղաւ միայն Թիֆլիզում, ուր մուտ գործեցինք առաջնորդական պաշտօնով 1883 թուի սկզբում» *).

Ի՞նչպէս է գտել Թիֆլիզի քահանաներին և ինչ միջոցներով է ուզեցել բարւոքել նրանց դրութիւնը։

«Տփխիս քաղաքում այժմ կան 65 քահանաներ — դրում է սրբազանն այն ժամանակի համար։ —Դորանցից Ներսիսեան դպրոցում ուսումն աւարտածներ միայն 4 հոգի են. մի երկուսն էլ անձնական աշխատասիրութիւնով փոքր ի շատէ պատրաստուած։ Մնացածները... կամ ամենևին կանոնաւոր դպրոց չեն տեսած, կամ ամենաշատը՝ Ներսիսեան դպրոցի առաջին և երկրորդ դասարանից դուրս եկած կամ դուրս արած։ Ծառայական ցուցակները ցոյց են տալիս, որ այդքան քահանաների $^2/_3$ մասը ձեռնադրուած են նախ այս և այն գիւղի անունով, ապա քանի մի տարուց յետոյ Տփխիս են փոխադրուել»... Ո՞հ, Տէր Աստուած, այսչափ էլ սարսափելի ընկած դրութիւն, այսչափ էլ բարոյական սնանկութիւն։ Ուրեմն տասը քահանայ միայն կարելի է համարել սորանց մէջ քահանայապատշաճ նիստ ու կաց ունեցող. միւսները *կատարեալ հրէշներ են*, կամ ինչպէս ժողովրդականք են անուանում՝ *թոկից փախածներ*. որոնց ոչ թէ եկեղեցի և ժողովուրդ յանձնել չէ կարելի, այլ եկեղեցու և ժողովրդի մէջ թողնելն էլ *մահացու մեղք է*»։ **)

*) «Քահ. Խնդ». եր. 11։
**) Նոյն տեղ եր. 12։

Կախեթիայի կողմն այցելած ժամանակ գտել է սրբազան առաջնորդը՝ «քահանայք (ամիսներով ժամերգութիւն չեն պաշտում... օրինակատարութիւն պատահած ժամանակն էլ բիրտ ու. տգէտ քահանան երեւում է ոչ իբրև հովիւ հոգևոր, այլ խստապահանջ մի վարձկան. նա երեխան թողնում է առանց մկրտելու, ննջեցեալը տանից հանել չի համաձայնում, մինչև իւր պահանջած վարձատրութիւնը չստանայ... անգրագէտ են նրանցից մի քանիսը, կարդալ չգիտեն»։ *)

Թիֆլիզ քաղաքի այս հրէշ քահանայական դասակարգը լաւացնելու համար կամ՝ իր իսկական խօսքերով՝ «առ ի բարձրացուցանել զստորանկեալ կոչումն եկեղեցական պաշտօնէից ի վայելուչ իւր դիրս»՝ սրբազանը որոշել էր գործադրելու յետագայ միջոցները. ա. «փոխադրել զոմանս ի նոցանէ ի գաւառս» կամ ինչպէս գրում է կաթուղիկոսին.—«զաւելորդսն և *զոչ համապատասխանսն կոչման իւրեանց ի գաւառս առաքել*... **) բ. ձեռնադրել այսուհետև զհամապատասխանողս պահանջից ժողովրդեան ըստ իւրաքանչիւր տեղւոյ. գ. փոքր ի շատէ քահանաների նիւթական վիճակը բարւոքել»։

Բողոքում ենք առաջին կետի դէմ։

Ի՞նչ ասել է «զոչ համապատասխանսն կոչման իւրեանց առաքել ի գաւառս»։

Ի՞նչ. միթէ գաւառը, գիւղը, որ հեռու են առաջ-

«Քահ. Խնդ». եր. 12, 13։
**) Նոյն տեղ եր. 34։

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
02
ԳՐԱԴԱՐԱՆ
ԳԱ

նորդի աչքից, պիտի պատժվեն տգէտ, հրէշ, թոկից փախած քահանաներ ունենալով։

Սա քահանայական դասակարգն ինչ լաւացնելու միջոց է։

Մինչ առաջնորդը միայն Թիֆլիզ քաղաքի մասին պիտի հոգայ։

Տգէտ, անարժան քահանաները որտեղ աւելի կարող են նուազ չարիք հասցնել ժողովրդին — գաւառում, ուր աւելի ազատ ասպարէզ ունին, ուր քահանայի օրինակը, դիրքն ու խօսքը աւելի ազդող, առաջնորդող նշանակութիւն ունին թէ քաղաքում, ուր բարձրագիր մարդկանց, կրթված անձերի, մամուլի և վերջապէս նոյն իսկ թեմական առաջնորդի ներկայութիւնը կարող են զօրեղ սանձեր լինել, կարող են վատ քահանայի վատ ազդեցութիւնը նուազացնել, թերևս և ուղղել։

Եւ վերջապէս ներում է միթէ ինքն իրեն տ. Արիստակէս այդպիսի վերաբերմունք դէպի գաւառը, դէպի գիւղը։

Ո՞չ, սրբազան հայր, հրէշներին պիտի կարգալոյծ անել, թոկից փախածներին վերստին թոկի տակ դընել, այլ ոչ բնաւ գաւառներ քշել։

«Մի առաջնորդ եպիսկոպոս որ և է քահանայի հրէշ, թոկից փախած, եկեղեցու և ժողովրդի մէջ թողնելը մահացու մեղք համարելուց յետոյ, պէտք է նրան ոչ թէ գիւղեր ու գաւառներ ուղարկէր, այլ պաշտօնազուրկ անէր, բայց եթէ այդ չէ արել, ոչ թէ հրէշ քահանաներին խնայելով, այլ որովհետև այդ ծանր բառերը գործադրել էր միայն իրենից առաջ եղած առաջնորդներին վիրաւորելու, այլ ոչ թէ քահանաների մէջ համապատասխան յանցաւորութիւն գտած լինելու համար *)»։

Եւ սրբազան Արիստակէս վիշտ ու տրտունջ է յայտնում, որ սինոդն իր այսպիսի դատապարտելի կարգադրութիւնը չի ընդունել։

Եւ ինչպէս կարելի էր ընդունել, քանի որ նախ՝ գիւղական, գաւառական կեանքն առաւել վատթարացնել կնշանակէր այդ. երկրորդ՝ արդէն մի սխալ եղել էր, որ նախկին առաջնորդները թոյլ էին տվել ուրիշ տեղերից քահանաներ բերել քաղաք. այժմ պէտք է կատարվէր մի նոր սխալ — քաղաքից վերստին գաւառ, բայց ոչ իրենց առաջվայ տեղերն ուղարկելով, ուր անտարակոյս նորերը կլինէին ձեռնադրված, այլ մի նոր տեղ, մի նոր եկեղեցի։

Ի՞նչ իրաւունքով, ինչ արդարութեամբ կամ մեր ընտրողական — ժողովրդական եկեղեցու որ օրէնքով առաջնորդը պիտի փաթաթէր նրանց մի ուրիշ ժողովրդի վիզը թէկուզ ժամանակաւորի անունով։

---

*) Ձակերտների մէջ գրված խօսքերը սրբազան հեղինակինն են իրեն վերագրված մեր կողմից։ Կաթուղիկոսն ու սինոդը պաշտօնապէս խիստ նկատողութիւն են անում Սեղբակեան եպիսկոպոսին, որի առթիւ սա գրում է. «Մի առաջնորդ եպիսկոպոսին ուխտը գրժող և եկեղեցու հաստատուած կարգ ու կանոնին չհպատակող անուանելուց յետոյ պէտք էր ոչ թէ խիստ նկատողութիւն, այլ պաշտօնազուրկ անել. բայց եթէ այդ չէին անում, ոչ թէ մեզ խնայելով, այլ որովհետև այդ բառերը գործադրուել էին միայն մեզ վիրաւորելու, այլ ոչ թէ համապատասխան յանցաւորութիւն գտած լինելու համար»։ «Քահ. խնդ.» եր. 39—40։

Ինչ վերաբերում է միւս միջոցներին՝ նոր տեղերի համար արժանաւորներից ձեռնադրելուն և քահանաների նիւթական վիճակը բարւոքելուն, այո, միանգամայն համակրելի են։

Եւ ի պատիւ սրբազան Արիստակէսի պէտք է ասենք, որ թեմական վերատեսչութեան պաշտօնավարութեանս ժամանակ՝ թէ Թիֆլիզ քաղաքում և թէ վիճակում միշտ լսել եմ վկայութիւն՝ որ Արիստակէս եպիսկոպոսն անողոք լինելու չափ հաստատ է եղել նոր տեղերի համար ուսեալներից ձեռնադրելու և քահանաների թիւը սահմանափակելու մէջ։

Այսօր միայն սրբազանի գրքից իմանում ենք, որ նա էլ ստիպողական հարկից ստիպուած ձեռնադրել է՝ ա. Սուխումեան շրջանի համար 2 քահանայ, մինը Գանձակի Թարգմանչաց վանքում, միւսը մասնաւոր անձի մօտ սովորած, բ. Սաչխերէթ ու Կակաբէթ գիւղերի համար մէկը Թէլաւ քաղաքում սովորած, միւսը Ներսիսեան դպրոցի 3 դասարանից ելած, գ. Թիֆլիզ քաղաքի համար 2 հոգի Ներսիսեան դպրոցի 4 դասարանից ելած և մէկը մասնաւոր մարդու մօտ ուսած *)...

ԺԱ.

Եւ այսպէս՝ մեր բարձրաստիճան հոգևորականներից «քահանայական խնդրով» 22 տարեկան հասա-

*) Քահ. խնդ. եր. 87։

կից առանձնապէս հետաքրքրվող, «քահանայական խնդիր» ասելով եկեղեցու գոյութեան խնդիր հասկացող, իսկ եկեղեցին ազգի հոգևոր—բարոյական ամբողջութեան նեցուկ և ապահովութեան խարիսխ» դաւանող *) Սեղրակեան սրբազանը Վրաստանի ու Իմերեթի կարևոր վիճակի թեմական առաջնորդութեան ժամանակ ևս չի կարողացել իր ցանկացած բարւոքումներն առաջ բերել քահանայական դասի մէջ և պատճառը՝ Մակար կաթուղիկոսն ու ս. Էջիածնի սինոդն են եղել, որ իրենց անտեղի միջամտութիւններով, իրենց անձնական անհամակրութիւններից ու հաշիւներից և թէկուզ չկամ վերաբերմունքներից դէպի Արիստակէս եպիսկոպոսը, խանգարել են, արգելք են հանդիսացել նրա բարի, օգտաւէտ ցանկութիւններին։

Ահա այս է ուզում ասած ու պաշտօնական թղթերով հաստատած լինել «Քահանայական Խնդիր» գիրքը։

Նուազարժէք ինքնապաշտպանութիւն։

Մենք համարձակութիւն ենք առնում մեզ վրայ ասելու, որ Արիստակէս եպիսկոպոսը, եթէ շատ բան չի կարողացել անել քահանայական դասի բարւոքման համար, պատճառը մեծ մասամբ իր ձեռական չոր, ժողովրդի խօսքով՝ «անջիգեար» վերաբերմունքն է եղել դէպի խնդիրը։

Կաթուղիկոսի ու սինոդի արած բոլոր վատութիւնը կայանում է և պիտի կայանար սրբազանի կողմից առաջարկված, դիցուք, 100 տիրացուներից 30ի

*) «Քահ. խնդ.» եր. 2.

բացասելու և սրանց փոխանակ սրբազանից մերժված 100-ից 30-ին քահանայացնելու մէջ, իսկ ինչ վերաբերում է քահանայի այս եկեղեցուց այն եկեղեցին փոխադրելուն, կամ Թիֆլիզից քահանային գաւառ ուղարկելուն—սրանք ոչինչ նշանակութիւն չունեցող հանգամանքներ են։

Վատ քահանան՝ ուր որ էլ լինի՝ վատ է։

Ստորադրեալը լինի յաջորդ թէ առաջնորդ, գաւառապետ թէ նահանգապետ իրաւունք չունի սպասելու, որ իր բոլոր միջնորդութիւնները յարգի ու կատարի իրենից բարձր իշխանութիւնը, կամ որ իսպառ բաւարարութիւն չտայ իրենցից բողոքաւորներին։

Ճշմարիտ է. մեր հոգևոր իշխանութիւնը իր միջամտութիւնները չափազանցացնում է և այն ամեն տեղ, այլ ոչ միայն տ. Արիստակէսի նկատմամբ, բայց պէտք է և այն խոստովանենք, որ մեր առաջնորդներն ու յաջորդներն են այդ հանգամանքը առաջ բերել իրենց կարգին իրենց իշխանութիւնն իրենց ստորադրեալների վրայ չափազանց անիրաւ գործադրելով։

Մեր սրբազան վիճակաւորները վաղուց է ինչ դաղարել են քահանաների համար սրտացաւ հայր, ի Քրիստոս եղբայր, բարեացակամ առաջնորդ լինելուց և դարձել են չոր, ձևապաշտ, անկարեկից, սէգ աստիճանաւորներ, հրամայողներ։

Նոյն իսկ սրբազան Արիստակէսի վարմունքը Սադարէջոյի քահանայ տէր Յակոբ Զարիֆեանցի հետ խիստ ընորոշ է։

Առաջնորդը պատահում է այդ գիւղում անգրագէտ, կարդալ չիմացող, բայց 16 տարի քահանայութիւն անող տէր Յակոբին։ Նա ժողովրդի ներկայութեամբ հարցաքննութեան է ենթարկում քահանային. հրապարակով անարգում—խայտառակում է նրան, արհամարհում է նրա քահանայութիւնը*), որ «ձեռնադրութեամբ և օծութեամբ եպիսկոպոսին կ'կնքուի, չնորհօք ս. Հոգւոյն»**) և վճռում է. «Դու այսուհետև չես հաստատուի մօտենալ որ և է քահանայական օրինակատարութեան. ես բոլորովին զրկում եմ քեզ այդ իրաւունքից. միայն մարդասիրաբար զթալով քեզ վերայ կկարգադրեմ, որ ընկերակիցդ Սողոմոն քահանան ամբողջ գիւղը հովուելով քեզ արդեանց մի մասը տայ ապրուստի համար»***)։

---

*) Հապա առաքելոց իշ Գ. Բարսղի ճժա սա կանոնը ուր մնաց.—«քահանայ թէև կարի անարգաց ոք իցէ, որ անարգէ և որ արհամարհէ՝ զաստուած արհամարհէ»։

**) Քննակ. կրօնագ. Ս. ք. Տէր-Սարգսեանց եր. 508.

***) «Քահ. խնդ.» եր. 13—15։ Թող ներէ մեզ մեր եկեղեցու կանոնների անունից սինոդին, կաթուղիկոսին՝ «յեկեղեցական կանոնս գմ՝ արդեօք արդելումն ձեռնադրութեան նոր ամուսնացելոց» բծախնդրօրէն հարցում անող սրբազան Արիստակէսից մենք ևս հարցում անենք. «արդեօք մեր եկեղեցական կանոնների մէջ կմ՝ մէկը, որ թոյլ տար մի եպիսկոպոսի հարցաքննութեան ենթարկելու մի ուրիշ եպիսկոպոսից արդէն հարցաքննված, արժանաւոր ճանաչված և արդէն քահանայական օծումն ստացած քահանայի»

Աւելորդ չենք համարում աւելացնելու, որ նոյն միջոցում—Սադարէջո գիւղում ուսուցչական պաշտօն վարելուս է լինում Պ. Ադ. Էլ—եան և՝ իբրև ականատես այդ անսովոր հարցաքննութեան՝ պատմում էր մեզ, որ քահանան իսկապէս բերան դիտ՝ր

Այն ինչ եթէ հայրութիւնը, եղբայրութիւնը, առաջնորդութիւնը խօսէր սրբազանի մէջ, նա առանձին կը ննէր—կխօսէր տէր Յակոբին, առիթ չէր տալ «ժողովրդականների բարեպաշտական կրօնական զգացմունքները վիրաւորուելու», ինչպէս զրում է ինքը, բարոյապէս չէր սպանի մի 16 տարի քահանայութիւն արած մարդի, որի «տգէտ, տխմար, զաւեստարանն ի բեմի ի լուր ժողովրդոցն և զբոլոր ուսումն քահանայութեան ոչ ուսեալ» լինելու պատիժը պէտք է կրէր «որ ձեռնադրեացն զնա եպիսկոպոս» և ամենաշատը, իր տեղի քահանայութիւնից ժամանակաւորապէս հեռացնելով, կուղարկէր մի վանք կամ կյանձնէր մի ուսուցչի սովորեցնելու և ապա իր պաշտօնին վերադարձնելու։

Մենք աւելի զայրոյթով կլցվէինք դէպի հանգուցեալ Մակար կաթուղիկոսի յիշատակը, դէպի սինոդի անդամները և կբազմապատկէինք մեր յարգանքները ու համակրանքները դէպի տէր Արիստակէս եպիսկոպոս, եթէ վերջինս ցոյց տար, թէ ինքն այս ու այն միջոցներն է գործ դրել իրենից առաջ և իր օրօք, թէկուզ իրենից անկախ պատճառով՝ *արդէն քահանայացած անարժաններին լաւացնելու համար*, բայց կաթուղիկոս Մակարն ու սինոդը խանդարել են։

Քաղաքից դաւառ—գիւղ քշելը միջոց չէր և արժանի էր արգելվելու։

եկեղեցական բոլոր արարողութիւնները, բայց առաջնորդի ներկայութիւնից էր թէ ինչ—մարդը բոլորովին չփոթվեց, իրեն կորցրեց և ոչինչ չկարողացաւ պատասխանել։

Եկեղեցուց եկեղեցի փոխադրելը նոյնպէս միջոց չէր։

Առաջնորդը մի համակրելի ու զովելի նորութիւն է կատարել—քահանայական դանձարան է հիմնել Թիֆլիզում—և Մակարն ու սինոդը չեն արգելել։

Արդեօք յանդիմանութեան, նկատողութեան կարժանանը, եթէ կարգադրէր ամեն տեղ քահանայացուների ընտրութիւններն անպատճառ ընդհանուր կանոնաւոր ժողովներով կատարել և՝ հակառակ ձևով, դրսէ դուրս ժողոված ստորագրութիւններով կատարված թէկուզ ամենաուսեալի և արժանաւորի խնդիրը մերժէր, բացասէր։

Արդեօք արգելքի կհանդիպէր, եթէ կոնսիստորիայի անդամներ, եկեղեցիների բարեկարգիչներ կարդէր արժանաւոր քահանաներից և սրանց միակամ ներդաշնակ գործառնութեան առաջնորդէր ինքը։

Արդեօք արգելքի կըհանդիպէր, եթէ *տիրացուները* թիսելու ընծայարանների փոխանակ, ինչպէս մի ժամանակ մօդա էր, *քահանաներին*, մանաւանդ տգէտ քահանաներին վարժեցնելու, ուսուցանելու դասընթացներ հաստատէր իր առաջնորդութեան ներքոյ։

Արգելքի կհանդիպէր, եթէ իր թեմի մէջ մի յարմարաւոր վանք—վայր ընտրէր և բոլոր նոր ձեռնադրվողներին (սրանց թւում և իր կամքին հակառակ ձեռնադրվողներին) այն վանքն ուղարկէր մի հմուտ վարդապետի կամ եպիսկոպոսի ղեկավարութեան տակ ոչ թէ մի, այլ մի քանի քառասունք քահանայական գիտելիքների ու առնելիքների մէջ վարժվելու—հրմտանալու։

Արգելքների կհանդիպէր, եթէ դոնէ ամիսը մի

անգամ առաջնորդարանում ճշմարիտ սրտացաւ հօր մի հովանու տակ ի Քրիստոս եղբայրների ժողովները սահմանէր. ուր անկեղծ սիրուց դէպի իրենց մտաւոր, բարոյական և թէ նոյն իսկ նիւթական վիճակի բարւոքումը՝ քննէին, ուսումնասիրէին, դատէին իրենց մէջ տեղի ունեցած լաւ թէ վատ դէպքերը. վարմունքները կամ սխալմունքներն ու գեղծումները։

Արդեօք նկատողութեան կարժանանար կամ իր մեծութիւնից կխոնարհվէր, աւելի իր ստորադրեալների աչքում չէր բարձրանայ, եթէ իրենից բողոքաւոր, իր դատից տժգոհ մնացած քահանաների ձեռքը ամենայն սիրով և պատրաստակամութեամբ տար կարևոր թղթեր, պատճէններ և օրինութեամբ հրաման շնորհէր ս. Էջմիածին գնալու, իրենց դատը շահելու նպատակով։

Բայց եթէ այս ամենը չանելու հետ սրբազան Արիստակէսն էլ, հետևելով միւս կուսակրօններին, անյօժարամիտ, պաղ — չասենք թշնամի — է պահել իրեն դէպի այն քահանաները, որոնք ս. Էջմիածին են գնացել բարձրագոյն իշխանութեան թոյլտուութեամբ, եկեղեցուց եկեղեցի են փոխադրվել, քաղաքից դաւառ քշող առաջնորդական կարգադրութիւնները փոխել են տվել, քահանայ են ձեռնադրվել, պարգև են ստացել, իր սահմանած պատիժներից են ազատվել ս. Էջմիածնի կարգադրութեամբ — այն ժամանակ, ի հարկէ, չէր լինի սրտակցութիւն, սիրոյ կառավարութիւն, հօր առաջնորդութիւն։

Եւ այս քինապահութեան, ոխակալութեան դիծը,

թող ներվի մեզ ընդհանուր առմամբ ասել, խիստ զարգացած է մեր կուսակրօնների մէջ։

Նրանք չեն կարողանում ներել զրկված լինելը իր դատը, իր բողոքն աւելի բարձր իշխանութեանը հասցնելու քայլը։ Այս չոր եսապաշտութեան ու նեղ հասկացողութեան արգասիք է։

Նրանք չեն կամենում ընդունել, որ դատաւորութիւնն իր աստիճաններով հէնց նրա համար է, որ զրկեալի դատն իրաւամբ ու արդարութեամբ տեսնվի։ Իշխանաւորները միշտ կարող են իրաւ ու արդար մըտածելու, օրէնքը հասկանալու մէջ տարբեր լինելուստի ոչինչ վիրաւորական, մանաւանդ թշնամանալու պատճառ չկայ, եթէ բարձր ատենատեղին, բարձր իշխանաւորը արդարութիւն, իրաւունք այլ կերպ հասկանալով, այլ վճիռ արձակի։

Բայց որովհետև մեր կուսակրօն դատաւորներին դատի արդարութիւնը չէ զբաղեցնում, այլ դատվողի անձնաւորութիւնը, այս աղագաւ և սաստիկ վիրաւորվում են նրանց յաջորդական, փոխանորդական, առաջնորդական բարձրապատութիւնները, երբ իրենց կայացրած վճռից տժգոհը բողոքում է աւելի բարձրին։

Իսկ այսպիսի անտեղի վիրաւորանքների հետևանքն է անհաշտ հալածանք, թշնամանք, արհամարհանք թէ դէպի դատաւորները, որ այլ վճիռ են կայացրել և թէ դէպի բողոքողը, որ իր վճիռը հլու հպատակութեամբ չէ ընդունել ու կատարել։

Եղան։

1893 թուի սեպտեմբերի 15ի № 1474 յայտարարութեամբ մատուցանելով Նորեկ Վեհափառ Հայրա-

պետին Երևանի թեմի եկեղեցական դպրոցների մասին զեկուցագիրս, «Կարգապահութիւն» վերնագրով գլխում գրել էի. «Կարգապահութեան վերաբերմամբ ցաւոք սրտի և ընդ նմին ամենախոնարհաբար ներողութիւն խնդրելով, հարկադրված եմ ասելու, որ շատ թոյլ է, ինչպէս մեր ընդհանուր, այնպէս և դպրոցական գործառնութեան մէջ։ Հայի աչքում հայ հոգևոր իշխանութեան դրած կարգը, կանոնը ոչինչ նշանակութիւն, ոչինչ ուժ չ'ունի, և այս՝ գլխաւորապէս — ըստ իս — այն պարզ պատճառով, որ իր դրած կարգ ու կանոնը նոյն իսկ հոգևոր իշխանութեան համար մեռած տառ է եղել ցայսօր։ Հայոց Հայրապետի դրած կանոնները միայն հրատարակվում են, բայց չեն պահվում, չեն գործադրվում... Զմտնելով պատճառների ուսումնասիրութեան մէջ, կասենք, որ կարգապահութիւն ասելով, մեզանում իւրաքանչիւր պաշտօնեայ հասկանում է իր ստորադրեալի հնազանդութիւնն իր հրամանին, բայց իր հնազանդութիւնը դէպի իրենից բարձր իշխանութիւնը ընաւ հաշուի չի կամենում առնել»։

Մեր առաջնորդները իրենք ազատ քննում, դատում, այս ոչինչ, դեռ ծաղրում, հեգնում և ամենևին բանի տեղ չեն դնում սինոդի հրամանները, հայրապետական կոնդակները, բայց պահանջում են, որ իրենց ստորադրեալ քահանաները սրբութեամբ պաշտեն իրենց առաջնորդական հրամանները։

Մեր առաջնորդները հէնց քահանաների, ժողովրդի ներկայութեամբ թոյլ են տալիս իրենց՝ հայոց եկեղեցու ծայրագոյն իշխանին «փռնչի», «կաշառակեր»,

«խաչագող» և այլն անվայել անուններով մկրտելու, բայց սարսափելի հալածանք են սկսում դէպի իրենց այն ստորադրեալը, որ թոյլ է տալիս իրեն, ոչ թէ այնպիսի գռեհիկ խօսքեր գործ ածելու, այլ աննպաստ կարծիքներ յայտնելու իրենց անձնական արժանիքների, ուղղութեան ու գործառնութիւնների մասին։

Մեր առաջնորդները, կոնսիստորիաները արհամարհելով յաջորդներին, ցանկացած ժամանակ ուղղակի թղթեր են գրում գործակալներին, կամ արհամարհելով գործակալներին, ուղղակի յարաբերութեան մէջ են մտնում քահանաների հետ, բայց երբ յաջորդները, գործակալները, քահանաներն էլ օրինակ առնելով իրենց բարձր իշխանութիւնից, ուղղակի յարաբերութեան մէջ են մտնում բարձրագոյն իշխանութեան հետ, առաջնորդները տակն ու վրայ են լինում, ուզում են աշխարհը քանդել և իրենց գործունէութեան բոլոր անյաջողութիւնը այսպիսի անկարգապահութեան վերագրել։

Համեմատաբար կարգապահ ճանաչված Սրբիստակէս եպիսկոպոսը, որ այնքան վստահութեամբ գրում է. «պարծենալով կարող ենք ասել, որ եկեղեցական կարգապահութեան ու հպատակութեան կողմից երբէք չենք թերացել». *) - հէնց պաշտօնավարութեան առաջին իսկ քայլերում մեղանչում է կարգապահութեան դէմ։

Նա Ղարաբաղի վիճակաւոր առաջնորդ Սարգիս արքեպիսկոպոս Ջալալեանցի հրամանով գնում է այ-

*) «Քահ խնդ.» եր. 39։

ցելութիւն Զաքու գիւղերին, իսկ իր այցելութեան հաշիւը ուղարկում է ոչ թէ թեմի առաջնորդութիւնը իրեն՝ իբրև փոխանորդի յանձնած և կաթուղիկոսական տեղապահութեամբ ս. Էջմիածին գտնված նոյն Սարգիս արքեպիսկոպոսին, այլ սինոդին։

Այսպէս և Տաթևից իր յայտարարութիւններն ուղղել է սինոդ, այլ ոչ Երևանի փոխ—թեմակալին, որ սովորաբար առաջնորդական պատիւ է վայելում այն թեմի մէջ։

Թիֆլիզի առաջնորդ ժամանակ՝ սինոդը քանիցս հեռագրով ս. Էջմիածին հրաւիրեց նրան մի կարևոր խնդրի մասին խորհրդակցելու համար.—բայց նա տեղից չշարժվեց։

Նա առանց լուծումն ստանալու քահանաները է ձեռնադրում, և երբ ի զգուշութիւն են հրաւիրում, առանձին մի անձնական հաշիւների է վերագրում։

Եւ վերջապէս դառնալով անկարգապահութեան առթիւ սրբազանի յայտնած դժգոհութիւններին, այս կասենք, որ նա դրսից եկած նոր անծանօթ մարդ չէր. նա քաջատեղեակ պիտի լինէր ս. Էջմիածնին և նրա աւանդական գործառնութեանն առհասարակ։

Ուստի և պահանջելի ու սպասելի էր նրանից, որ իր անձնական ու պաշտօնական արժանաւորութիւնների շնորհիւ և իրաւունքների սահմանում եռանդով, ջիղերով, աշխատութեամբ կպչէր եկեղեցու և ժողովրդի սպասաւորութեանը, մանաւանդ սրանց թշուառութիւնը, ընկած, ողորմելի վիճակն իր աչքերով տեսնելուց, իր ձեռքերով շօշափելուց յետոյ, այլ ոչ բնաւ մի տեղ՝ «կեցութեան դժուարին պայմանները», մի

այլ տեղ կաթուղիկոսի ու սինոդականների վարմունքները պատճառ բռնէր ու թողնէր հեռանար ասպարէզից։

Պահանջելի ու սպասելի էր տ. Արիստակէսից, որ ոչ թէ հոգևոր իշխանութիւնից վշտանալուց և այն էլ երբեմն զգար իրեն հարկադրված վճարելու իր առաջնորդական պարտքերը դէպի իր հօտը, այլ առանց արտաքին խթանների, ինքնիրեն դրված լինէր իր առաջնորդական անվերջ պարտքերը դէպի իր բազմակարօտ հօտը մշտապէս և անդադրում հատուցանելու գործունէութեան մէջ։

Կեանքը մեզ ցոյց է տալի, որ ոչ մի պատճառ չէ կարող արգելք լինել որդեսէր ծնողին իր զաւակին կորստից ազատելու համար ճիգ ու ջանք գործ դնելու, եթէ սրանով իր կեանքն անգամ կորստեան ենթարկելուս լինէր։

Ահա այսպիսի մի ծնողի, հովի, առաջնորդի հոգով աշխատելու, անձնադիր քրտնելու, սրտացաւօրէն վաստակելու ապացոյցներն ու փաստերը չկան Արիստակէս եպիսկոպոսի կողմից «Քահանայական Խնդրի» մէջ քահանայական դասակարգը բարւոքելու համար գործադրված։ Ուստի և մեր աչքում ուրիշի թերութիւններով իր պաշտօնէութեան անարդիւնաւորութիւնն արդարացնելը թոյլ և անյարմար ինքնապաշտպանութիւն է։

Դիմենք սինոդի անդամ եղած ժամանակի գործունէութեանը։

ԺԲ.

Սինոդի անդամ Արիստակէս եպիսկոպոսը սինոդին ներկայացնում է մի ընդարձակ, բարեխղճօրէն կազմած զեկուցում այլ և այլ թեմերից առաջարկված տիրացուների, քահանայացուների մասին և այս զեկուցման հետ առաջարկում է իր դիտողութիւնները։

Սինոդականներն այսպէս թէ այնպէս ընդունում են, հաւանում են և քանի մի փոփոխութեամբ վճռում են համաձայն զեկուցողի դիտողութիւնների։

Սրա հետևանքն է լինում սինոդի՝ 1892 թ. յունիսի 17ի այն շրջաբերական կարգադրութիւնը, որով տնօրինվում էր.

Ա. Քաղաքներում և 100 տանից ոչ պակաս բնակիչ ունեցող գիւղերի համար ընտրել քահանայացու միայն թեմական հոգևոր դպրոցներ և ճեմարան աւարտածներից։

Բ. Այսպիսիներին փոքր ի շատէ նիւթական ապահովութիւն տված լինելու համար 150 տուն ունեցող գիւղերին տալ մի քահանայ։

Գ. 250—300 տուն ունեցող գիւղերին 2 քահանայ։

Դ. 100ից մինչև 60 տուն ունեցող գիւղերի համար ընտրել հոգևոր դպրոցների 4—5 դասարանից ելածներից, եթէ լինին, իսկ եթէ ոչ՝ ընտրել այնպիսիներից, *որոնք ինքնակրթութեամբ ձեռք են բերած քահանայապատշաճ հմտութիւն, որպիսիներին որոշել զգուշաւոր քննութեամբ։*

Ե. 50 տանից պակաս բնակիչ ունեցող գիւղերի համար ընտրել, եթէ լինին վերոյիշեալներից, եթէ ոչ՝ հարցաքննութեան ենթարկելով*)։

Այսպիսի գիւղերի համար Արիստակէս եպիսկոպոսն իր զեկուցման մէջ առաջարկել էր «*ձեռնադրել զերեալս յերկդասեան ծխական եկեղեցական դպրոցաց մերոց*», իսկ այսպիսի վկայականներ էլ չունեցողներին՝ ենթարկել քննութեան ոչ թէ վիճակային ատեաններում, այլ Էջմիածնի ճեմարանում՝ «առաջի տեսչի և ուսուցչական խմբի, որք և տայցեն զգրաւոր վկայութիւն զնոցանէ»**)։

Այս կարգադրութիւնը Արիստակէս եպիսկոպոսն անվանում է և ընդունում—«անյպիսի *հիմնաւոր* կարգադրութիւն, որ միանգամից պիտի վերջ դնէր տիրող անմխիթար դրութեան և որ շուտով պիտի տար հիանալի հետևանքներ» *)։

Մեզանում եթէ հրատարակվում են այլ և այլ հրահանգներ, կանոններ ու կարգադրութիւններ, բայց գործառնութեան մէջ մնում են մեռած տառ, պատճառը հրատարակողների պահելու, կատարելու ցանկութիւն չունենալը չէ միայն, այլ և՝ հրատարակված կանոնների ու կարգադրութիւնների խակութիւնը։ Սմեն մի կարգադրութիւն ու հրահանգութիւն, երբ չի լինի արդիւնք կեանքի ուսումնասիրութեան, երբ չի լինի համապատասխանող ժամանակի պահանջներին, կմնայ անգործադրելի, և հէնց առաջինը՝ ինքը գիւ-

---

*) «Քահ. Խնդ». եր. 150—151։

**) Նոյն տեղ եր. 145—146։

րութեամբ վաւերացնողը կլինի և առաջին քանդողը։

Արիստակէս եպիսկոպոսի առաջարկած և սինոդի վաւերացրած կարգադրութիւնը չէր կարող գործնական կեանքի մէջ աչքի ընկնող արդիւնք տալ և գործադրվել, քանի որ այն թեթև մտածած ու թեթև կերպով աչխարհ հանած և, մեծ մասամբ, հին դրութիւնը հաստատող մի կարգադրութիւն էր։

Առաջինը՝ ծիծաղելի չէ՞ արդեօք քահանայի դիտութիւնը համեմատութեան մէջ դնել նրա նիւթական ապահովութեան, նրա ծխի քանակութեան ու ընակութեան տեղի հետ։

Եւ սա համարվում է *հիմնաւոր* կարգադրութիւն։

Ուսուցիչների դիտութեան աստիճանաւորութիւնը հասկանալի բան է, քանի որ դպրոցները իրենց ծրագրներով տարբեր ծաւալ են աւանդում դիտութիւնների. պարզ է, որ և սրանցում դասաւանդող ուսուցիչների դիտութիւնը պէտք է համեմատութեան մէջ դրված լինի և դպրոցի ծրագրի հետ. բայց աստիճանաւորութիւն սահմանել քահանաների դիտելիքների մէջ՝ մեզ միանգամայն անհասկանալի է թւում։

Երբ մէկը ձեռնադրվում է քահանայ, պէտք է դիտենայ քահանայական դիտելիք այնքան, որքան անհրաժեշտ է քահանայ մարդուն։

Ցգէտը, թերուսը չպիտի լինի քահանայ — վերջացաւ. հիմնաւորը սա է։

«Դու զգիտութիւն մերժեցեր — ասում է Աստուած — մերժեցից և ես զքեզ, զի մի քահանայասցիս ինձ» *)։

*) Ովսէ Դ. 6.

Ինչպէս բժիշկ լինելու համար զոյութիւն ունի մի որոշ դասընթաց, քանի որ մարդու կազմութիւնը մի և նոյնն է ամեն տեղ գիւղում թէ քաղաքում, այսպէս պիտի և մի որոշ դասընթաց լինի քահանաների համար, քանի որ նոյն ս. Դիրքն է կարդացվում, նոյն արարողութիւններն են կատարվում, նոյն տօնացոյցը, նոյն Մաշտոցն է գործադրվում, նոյն քրիստոնէական դաղափարներն են քարոզվելու ամեն տեղ և ամեն օր գիւղում թէ քաղաքում։

Այլ բան, և արդարև հիմնաւոր բան կլինէր, եթէ սինոդը սահմանէր քահանայական դիտելիքների համար մի յատուկ, որոշ ծրագիր, եթէ այս ծրագիրը տար ինչպէս թեմական դպրոցներին կրօնական առարկաները նրանով անցնելու համար, այնպէս և անպայման պարտաւորական հրատարակէր ամեն մի քահանայ դարձողի համար անխտիր։ Այնպէս որ ոչ մի եկեղեցու ժողովուրդ իրաւունք չունենար ընտրելու քահանայացու նրանցից, որոնք նախապէս որոշ այն ծրագրով պատրաստված, քննութիւն տված և վկայական ստացած չէին լինի։

Ապա թէ ոչ ինչ ասել է ծխական դպրոց աւարտող, թերուս կամ ճեմարանաւարտ քահանայացու, կամ վերջապէս շեշտում ենք ինչ տրամաբանութիւն է կապել քահանայի դիտութեան, արժանաւորութեան չափը նրա ունեցած ծխի կամ ստացած արդիւնքի հետ, այլ ոչ իր կոչման ու պաշտօնի պահանջմունքների հետ։

Երկրորդ՝ ինչ ասել է *զգուշաւոր քննութիւն*։

Սա ոչինչ նորութիւն չրերող և հին կարգը վերս-

տին հաստատող մի լոկ խօսք է։

Իւրաքանչիւր մի կոնսիստորիա զգուշաւոր է համարում իր հասկացողութեամբ ու հայեացքներով այն քննութիւնը, որ բաւարար համարելուց յետոյ, առաջարկում է տիրացուին ձեռնադրելու։

Բաւական է, որ Արիստակէս եպիսկոպոսը ու սինոդը թերուսներին ու ոչ մի տեղ ուսում չառածներին ընդունում են թեկնածուներ քահանայութեան համար, *չտալով որոշ, պարզ ծրագիր քահանայական գիտելիքների համար ի հրահանգութիւն հարցաքննողների*, այլ բաւականանում են «զգուշաւոր» խօսքով։

Սրանով վերահաստատվում է նախկին դրութիւնը։ Էլ ինչի՞ հիմնաւոր կարգադրութիւնն է այս։

Արիստակէս եպիսկոպոսը իր զեկուցման մէջ անում է մի ճշմարիտ ու խելացի առաջարկութիւն— այն է՝ որ տիրացուները չքննվեն կոնսիստորիայում, ափսո՞ս, որ, մեր կարծիքով, սխալվում է քննութեան տեղը *միայն* ս. Էջմիածնի ճեմարանը նշանակելով։

Սա չէր կարող գործնականութիւն գտնել, քանի որ մի կողմից ահագին դժուարութիւններ պիտի պատճառէր հեռաւոր քահանայացուներին, միւս կողմից զուրկ էր օրինական հիմունքից։

Օրէնքով թեմական առաջնորդներին է վերապահած իրենց թեմի տիրացուներին հարցաքննելու իրաւունքը։

Ինչպէ՞ս է Սեղրակեան սրբազանը սինոդի անդամ դառնալով, այնքան դիւրութեամբ զանց առնում առաջնորդական իրաւունքները։

Չէ՞ որ կարող էին գտնվել իրեն նման շատ ա-

ռաջնորդներ, որոնք քէֆները տված ժամանակ կմտածէին վարվելու օրէնքի իրենց տված իրաւունքներով, որպէս զի կարողութեան չափ հատուցած լինէին իրենց պարտքը դէպի իրենց հօտը։

Այն ժամանակ ո՞ւր կմնար սրբազանի ու սինոդի հրամանը։

Այո՛, տիրացուների հարցաքննութիւնը կոնսիստորիայից հանելը հաւասար է մատը հիւանդ տեղի վրայ դնելուն. բայց պէտք է մի այնպիսի տեղ ցոյց տար, որ թէ նպատակայարմար լինէր և թէ առաջնորդական իրաւունքներին չդիպչէր. այդ տեղերը՝ մեր կարծիքով՝ իւրաքանչիւր վիճակի թեմական դպրոցներն են, որոնց վերատեսուչներն են իրենք թեմական առաջնորդները։

Սրանց նախագահութեամբ ուսուցիչները մի անգամ արդէն սահմանած ծրագրով կքննէին տիրացուներին, քահանայացուներին և կտային իրենց վճիռը։

Երրորդ՝ արդեօք ուսումնասիրվա՞ծ է թէ քահանաները 100 ծխից տարեկան որքան եկամուտ են ստանում քաղաքներում, որքան աւաններում և որքան գիւղերում։

Սրա հետ միասին արդեօք ի մօտոյ հաշի՞ առնվա՞ծ են թէ նիւթական ապահովութիւն ասելով տարեկան որքան ռուբլի եկամուտ պիտի ընդունել իւրաքանչիւր տեղի քահանայի համար։

Թողնենք Թիֆլիզը, Բաքու, Բաթում քաղաքները իրենց արտակարգ պայմաններով։ Վերցնենք Երևանը, որ Կովկասի հայաշատ լաւ ու միջին դրութիւն ներկայացնող քաղաքներից է։

Կարծում եմ, որ եթէ ծխագլուխ տարեկան 3 ռուբլի եկամուտ հաշուելով, հարիւր տանը տարեկան 300 ռուբլի դցելու լինիմ, Երևանի քահանաները կբողոքեն, պնդելով, որ այդքան եկամուտ Երևանում չկայ, իսկ Ալէքսանդրապոլ, Ախալցխա, Ախալքալաք, Գանձակ, Նախիջևան և այլն՝ եկամուտն աւելի ևս նուազ կլինի։

Հետևապէս սինոդի կարգադրութեամբ ու կարծիքով 150 տանը մի քահանայ տալով կամ տարեկան 450 ռ. եկամուտ յատկացնելով, քահանայի, այն էլ ուսումնական քահանայի նիւթականը դրվում էր ապահով վիճակի մէջ։

Բայց թէ տարեկան 450 ռուբլով կարելի է արդեօք Երևանում մարդավարի ապրել—տան ու ծառայի վարձ տալ, ընտանիք պահել, որդիք կրթել—այդ դժուար կլինի հասկանալի կուսակրօն հայրերին, իսկ գիւղական 150 տունը հազիւ քահանային 150—200 ռ. տայ։

Դրսից հրաւիրված ոչ հող, ոչ տուն ունեցող, թէկուզ ոչ «շատ ուսեալ», այլ հէնց միջնակարգ դպրոց աւարտող մի անձը կարող է արդեօք 150—200 ռ. բաւականանալ։

Այլ բան են տեղացիները, որոնք իրենց գիւղական եկամուտներով արդէն ապրում են, իսկ քահանայական էն պակաս 80—90ռ. աւելանալով՝ իրենց հարուստ են զգում, չ՚ունենալով կեանքի յարմարութեան մասին այլ գաղափար, քան որ ունի իրեն նման գիւղացին։

Բայց կարող է հէնց 150—200ռ. տարեկան եկամուտով բաւականանալ քաղաքում միջնակարգ ուսում առած մի անձը գիւղը վերաբնակելով։

Այն էլ թղթի վրայ ասում ենք 150—200 ռ. բայց իրօք, որքան մենք ծանօթ ենք, այդքան էլ ամենևին չկայ։

Արիստակէս սրբազանը թերևս աչքի տակ է ունեցել և այն, որ միջնակարգ կրթութիւն առած անձը կարող էր և ուսուցչութեամբ պարապել։ Այժմ մեզ համար այդ չկայ, իսկ գիւղական տարրական դպրոցների թէ թիւն աննշան է և թէ տված վարձը չնչին՝ 40—50 ռ. տարեկան։

Սակայն մեր դպրոցներ ունեցած ժամանակներում էլ մենք հարկադրված էինք Դ. կարգի, այսինքն մեր միջնակարգ դպրոցներում ուսում առած և ապա քննութիւն տված և ուսուցչական ցենզ ստացածների ձեռքը ժողովել մի դասեան դպրոցի բոլոր դասերը, որպէս զի հնարաւոր լինէր այնքան ռոճիկ կազմելու, որ քիչ շատ լրացնէր մեծ դժուարութեամբ գիւղը գնացող ուսուցչի պահանջը. այսպիսով քահանան դուրս էր մնում։

Այս ամենից պարզ է, որ 100—150 ծուխը շատ հեռու է քահանայի համար նիւթական բաւարար ապահովութիւն համարվելուց ինչպէս քաղաքներում, այնպէս և գիւղերում։

Եւ այսպէս՝ սրբազան Արիստակէսի առաջարկած միջոցները կամ սինոդի արած կարգադրութիւնները բնաւ հեռու էին «հիմնաւոր» կարգադրութիւն լինելուց, քանի որ քահանայական դիտելիքների համար որոշ ծրագիր չէր տրված, այլ պահված էր կոնսիս-

տորիաներում հարցաքննվելու հին ձևը, մի «զգուշաւոր» խօսք աւելացնելով, քանի որ թերուսներին և մասնաւոր կերպով, անծրագիր պատրաստվածներին զարձեալ դիւրութիւններ էին տրված քահանայ դառնալու, քանի որ 100—150 տունը ոչ մի տեղ նիւթական ապահովութիւն չէր կարող համարվիլ և՝ վերջապէս՝ քանի որ քահանայի գիտութեան չափը կապած էր ոչ թէ քահանայի կոչման, պաշտօնի և պարտաւորութիւնների հետ, այլ նրա բնական տեղի, ունեցած ծխի քանակութեան և ստացած տարեկան արդիւնքների հետ։

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ ԱԶ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ

Ժ.Դ.

Գրքի մէջ ամբողջովին արտատպված են «Արարատ»ից Արշէն Երէցի քարոզը և «Մշակ»ից Արիստակէս եպիսկոպոսի «Ո՞վ հաւատաց»ը։

Արշէն Երէց իր քարոզում հանդէս է դնում մի դրութիւն, որ այսօր էլ կայ և տիրապետում է գիւղերում—այն է՝ որ գիւղում չկան ուսեալ գիւղացիներ, որոնցից ընտրէր գիւղացին իր քահանայացուն։ Իսկ դնալ ուսեալ դուրսեցուն խնդրել—առանց կարողանալու նրա նիւթական պահանջներին գոհացումն տալ—համարձակ է մերժումն ստանալուն։

Արշէն Երէց այս խօսքերով, կարծես, սինոդին, մեր քահանայական խնդրի բարւոքումով ոգևորվածներին, ուզում է հասկացնել, որ թղթի վրայ կարգադրութիւն-

ներ անելուց առաջ անհրաժեշտ է ժողովրդի կենցաղավարութեան պայմանները հետազօտել։

Արշէն Երէցի յարուցած խնդիրները շատ աւելի դրական և արժանի էին լուրջ ուսումնասիրութեան, քան թէ «Ո՞վ հաւատաց» հեղնութեան։

Մենք, որ Արիստակէս սրբազանից ոչ նուազ ցանկացող ենք քահանայական դասի բարւոքման, արդէն ցոյց տվինք, որ իր՝ սրբազանի լոկ բարի ցանկութիւնից առաջացած այն կարգադրութիւնները, որ սինոդը հրատարակեց իբր ուսեալ քահանայացուներ տալու մասին, արտաքուստ միայն փայլուն, բայց իրօք՝ է որ մի խակ, է որ աւելի հին դրութիւնը հաստատող և է որ անգործնական միջոցներ էին. ուստի պիտի մնային և՝ անգործադրելի, ամուլ, անարդիւնք, ինչպէս և մնացին։

Այժմ էլ գալիս ենք յայտնելու, որ, մեզ թւում է, հասարակական խնդիրների լուծման բարւոքումով անկեղծ գրաղվողները պարտաւոր են իրենց հակառակորդներին պատրաստակամութեամբ և պաղարիւնութեամբ լսել, կշռադատել և ըստ այնմ վճիռներ արձակել, այլ ոչ բնաւ բարկանալ, թոյլ տալ իրենց կասկածներով վերաբերվել դէպի յայտնված մտքերի շարժառիթները, կամ շիրմաներ ենթադրել, շիրմաների տակը մտնել, հեղնել Արշէն Երէցի կամ իրենց դէմ յարձակողների դատողութիւնները և սրանց տակ ինչ որ թաղնված բաներ որոնել։

Այս ձևի վերաբերմունքը կասկածելի են դարձնում քննադատի սիրոյ անկեղծութիւնը դէպի յարուցված խնդիրը, և՝ որ գլխաւորն է՝ արգելք են դնում

խնդրի ցանկալի կերպով ուսումնասիրվելուն։

Արշէն Երէցի և Սեդրակեան եպիսկոպոսի բանակռւի վերաբերութեամբ, չմտնելով մանրամասնութեան մէջ, մի աչքի ընկնող կէտի վրայ կուզէինք մատնացոյց անել։

Մեր կարծիքով, Արիստակէս եպիսկոպոս արդար չէր իր քննադատութիւնը «Ով հաւատաց» վերտառելու և ոչ իրաւունք էր ստորագծելու Արշէն Երէցի յետադայ խօսքերը... «տգէտ ժողովրդին ուսեալ քահանայ չի կպիր»։

Ասում ենք իրաւացի չէր և պնդում ենք։

Նա իրաւացի չէր ոչ թէ վէճի նիւթ դարձած խնդրի տեսական, այլ իր՝ սրբազանի՝ անձով գործնականութեան մէջ ցոյց տված կողմից։

Արիստակէս եպիսկոպոս չի հաւատում Արշէն Երէցի վկայութեանը թէ Հայրիկ ընդդէմ էր, չէր կամենում ձեռնադրել գիւղացիների բերած տիրացուին նրա թերուս, անպատրաստ լինելու պատճառով, լոյս հանելով ինչ որ մութ գրակցութիւններ և մամուլի մէջ բարձրագոչ կանգնում է պաշտպան գիւղերին ևս ուսեալ քահանայացուներ տալու խնդրին։

Բայց թող ների մեզ, որ մենք էլ չենք հաւատում իր խօսքերի անկեղծութեանը, քանի որ նա՝ իբրև Թիֆլիզի առաջնորդ, տգէտ, իրենց կոչման անհամապատասխան քահանաներին դաւառ ու գիւղ էր ուղում քշել, որով պարզապէս ցոյց էր տալի, որ այդպիսիների տեղը դաւառն է, գիւղն է համարում և ոչ երբէք քաղաքը. ուրեմն և գրանով ոչ միայն հաստատում էր, որ գիւղացուն «շատ ուսեալ քահանայ չի

կպիր» այլ մի քանի քայլ էլ աւելին էր գնում, իսկ իբրև սինոդի անդամ իր բարեփոխիչ կարգադրութիւններով տալիս էր գիւղացուն ոչ թէ *շատ ուսեալ*, այլ՝ նայած ծխի թուին՝ թերուս, թէկուզ ծխական ողորմելի դպրոց աւարտած և մինչև իսկ առ ոտս մասնաւոր անձանց ուսածներին «զգուշաւոր» փաթեթի մէջ քօղարկած։

Բաւական է, որ Սեդրակեան սրբազանը արժանաւոր քահանայացու է համարում Աղբիլիսայի գիւղի ծխական *) էն խղճուկներից խղճուկ դպրոցից աւարտածին։

«Ով հաւատաց»ի սրբազան հեղինակը անշուշտ ուրիշ շարժառիթներից պիտի դրդված լինէր իր դրչին այնպիսի զայրացկոտ շարժումներ տալու համար, քան թէ Արշէն Երէցի քարոզի մէջ հանդէս դրված Վեհափառ Հայրիկի կողմից մերժելու չափ անուս, անդրադէտ ճանաչված տիրացուն, քանի որ Արիստակէս եպիսկոպոս գիւղական ծխական դպրոցի **) դասընթացը բաւարար է համարում գիւղական արժանաւոր քահանայ լինելու համար, իսկ Արշէն Երէցի ակնարկած քահանայացուն էլ՝ «գիւղական ծխական դպրոցէն ելած ծաղիկն» էր ***)։

Մենք այնքան նշանակութիւն չենք տալիս Հայրիկի կամ այս ու այն սինոդականի անունը չահագործող մութ մարդկանց նամակագրութիւններին, որ

---

*) «Քահ. Խնդ.» եր. 123, 147։

**) Նոյն տեղ եր. 145։

***) Նոյն տեղ եր. 162։

չենք էլ կամենում հետաքրքրվել իմանալու, թէ արդեօք չկան և չեն եղել մութ մարդիկ, որոնք շահագործած լինէին սրբազան Արիստակէսի անունը նամակներով կամ այլ եղանակներով։

ԺԴ.

Կամ քահանայական դասակարգը մոգական գաւազանով արագ բարեկարգված տեսնելու բուռն ցանկութիւնից է, կամ մեր միջնակարգ կրթութեան տէր երիտասարդների վրայ չափազանց լաւ գաղափար ունենալուց է, որ Արիստակէս եպիսկոպոսն այնքան վստահութեամբ՝ «սուտ, անբարեմտութեամբ յօրինուած, անարժէք» է անուանում այն առարկութիւնը թէ ճեմարանում և թէ թեմական դպրոցներում աւարտածները չեն ցանկանում քահանայական պաշտօնով գիւղերը գնալ, հաստատելով այս նրանով, որ նրանք «իբրև ուսուցիչներ ուրախութեամբ գնում էին գիւղերն և յօժարութեամբ տանում գիւղական ուսուցչի դրութեան հետ կապուած բոլոր դժուարութիւնները *)։

Թող նրանք մեզ սրբազանը, որ մենք հակառակը դանք ասելու։

---

*) «Քահ. Խնդ.» եր. 212։

Մենք, որ՝ վեց տարի թեմական վերատեսչի պաշտօն կատարելով Երևանի և Թիֆլիզի ընդարձակ թեմերում, միջոց ենք ունեցել շատ մօտ ծանօթանալու գիւղը դնացող ուսուցիչների հետ։

Ճեմարանաւարտների մասին չխօսենք. սրանցից գիւղը՝ միադասեան դպրոց ուսուցչութեամբ գնացողներին խիստ բացառական երևոյթների շարքը դասելու է։

Միջնակարգ կրթութիւն ստացած, Դ. կարգի ուսուցիչները, այո, գնում էին գիւղ, *երբ քաղաքներում պաշտօն չէին կարողանում կամ չէին սպասում ստանալ։*

Հազւադիւտ էր, որ դպրոցական տարին բոլորելուց յետոյ Դ. կարգի ուսուցիչը, մանաւանդ երբ քիչ շատ աչքաբաց, ժիր, աշխոյժներից էր, ցանկար կրկին մնալու նոյն գիւղում, այլ ուղղակի թողնում հեռանում էր քաղաքներում պաշտօն գտնելու յուսով։

Սեպտեմբերին՝ քաղաքներում պաշտօն չգտնողները՝ դարձեալ ստիպված էին լինում գիւղ գնալու։

Մի և նոյն ուսուցիչը մի և նոյն գիւղում երկու կամ ամենաշատը 3 տարուց աւելի չէր մնում, և այսպիսիները ևս շատ սակաւ էին։

Եւ մենք ոչ միայն բանաւոր, այլ և գրաւոր նկատողութիւններ ենք ստացել այսպիսի գիւղական ուսուցիչներից. «կարգադրեցէք, որ քաղաքների տարուկ դպրոցների պաշտօններն ամուր գրկած ուսուցիչներն ևս գան գիւղերը գոնէ հերթով։ Մենք էլ ուզում ենք շրջանի մէջ մտնել, կեանք տեսնել, մարդկանց հետ շփվել, գրաղարաններից օգտվել, զարգանալ, ապրել», գրում էին նրանք։

Ընդէր մի վարդապետ մարդու համար «փոստային հաղորդակցութեան խնդիրը» Տաթեւի հռչակաւոր վանահայրութեան ու վիճակի յաջորդութեան պաշտօնները ձգել փախչելու չափ զօրաւոր է, իսկ քաղաքներում ուսած երիտասարդ աշխարհականի համար ոչ։

Բացի սրանից՝ ուսուցիչները գնում էին գիւղ նախ՝ այն յուսով, որ եկող կամ միւս տարին յաջողեցնեն քաղաք փոխադրվելու իրենց նպատակը ուրեմն այս մտքով գիւղը գնացողները գիւղերում ժամանակաւոր հիւրեր էին, փափաք և իղձ ունենալով ամեն յարմար առթից օգտվելով, քաղաք ձգելու իրենց։

Երկրորդ՝ ուսուցիչը միայնակ մարդ՝ գիւղում ստանում էր սենեակ, վառելիք, ծառայ և առ նուազն 335 ր. ռոճիկ (երկրորդ կոպարով), որ գիւղական քահանան երազում էլ չի տեսնիլ։

Խօսքս բացառութիւնների մասին չէ, և ոչ էլ նրանց մասին, որոնք է որ բնաւորութեամբ խեղճ, անճար լինելով, ստիպված էին գիւղերում մնալու, է որ հողով, կալուածով կամ այլ տնային կապերով կապված լինելով գիւղի հետ՝ հետամուտ էին լինում և ուսուցչական պաշտօնների։

Եւ այսպէս — կարծում ենք — հարկադրված ու անսիրտ կերպով գիւղն ուսուցիչ գնալը՝ բնաւ չի կարելի գիւղ գնալ համարել։

Եւ սա շատ հասկանալի է։

Մեր դպրոցներից աւարտածները գիւղում իրենց պարապ և խորդ են զգում։

Պարապ են զգում և այն քահանաները, որոնք

միջնակարգ դպրոց աւարտելուց յետոյ կամ գիւղական ժողովրդին ծառայելու իդէալական կարճատև միտումներից մղված, կամ այլ տեղ պաշտօն գտնելու յոյսից զրկված, կամ այլ և այլ բարձրաստիճանների շլացնող խոստումներից խաբված՝ համաձայնել են գիւղերում քահանայ ձեռնադրվելուն։

Ուսումնասիրեցէք սրանց վիճակը, սրանց գործունէութիւնը։

Սրանց թիւը Վրաստանի և Իմերեթի թեմում առաւել շատ է։

Տեսէք թէ սրանցից քանի՞ տոկոսը գոհ է իր վիճակից, և ժողովրդի քանի՞ տոկոսը գոհ է նրանցից։

Արդեօք կա՞յ այսօր գոնէ մի միջնակարգ կրթութիւն ունեցող գիւղական քահանայ, որ իշխանութեանը խնդիր տված չլինի, կամ իր ծանօթ - բարեկամներին դիմած չլինի կամ մտածելուս, ձգտելուս չլինի քաղաք փոխադրվելու մասին։

Հէնց Արիստակէս եպիսկոպոսի ձեռնադրած և «Քահանայական Խնդիր» գրքի մէջ անունէ անուն յիշատակված այդպիսի քահանաներից այսօր քանի՞սն են մնացել այն եկեղեցիներում, որոնց վրայ ձեռնադրվել են, և շատ սակաւ մնացածներից էլ քանի՞սը ձգտում չունեն քաղաքներ փոխադրվելու։

Իսկ թէ այսպիսի արհեստական ու խաբուսիկ պայմաններով գիւղը գնացած և ապա զղջալով արածի վրայ քաղաքներ ձգտող ուսեալ քահանայացունները ինչպէս են հիմն ի վեր տապալում քահանայի՝ ձեռնադրութեամբ իրենց եկեղեցու, ժողովրդի հետ ցմահ մնալու պայմանը - խորհուրդը և սրանով հրպիսի մեծ

հարուած են տալի եկեղեցու ընտրական վեհ սկզբունքներին և որքան նսեմացնում են քահանայի պատիւը իւղոտ պատառների ստորադնելով... թողնում ենք ընթերցողներին դատելու...

Միթէ այս խնդիրները ոչինչ արժէքաւոր չեն երևում մեր սրբազանների համար...

Արդ երբ այդպիսի հարցերի բազմակողմանի ու լուրջ ուսումնասիրութիւններ չկան «Քահանայական Խնդրի» մէջ, ինչ իրաւունքով հեղինակը գալիս է և՝ «անարժէք, սուտ, անբարեմտութեամբ յօրինած» առարկութիւններ է անուանում այն իրաւացի պատճառաբանութիւնը, թէ ճեմարան ու միջնակարգ դպրոց աւարտողները դիւղը չեն գնում։

Այո, չեն գնում և չեն գնալ. իսկ նրանք, որոնք գնացել են և զղջացել են, կամ գնացել ու տեղափոխվել են, կամ վերջապէս մտածում, աշխատում են տեղափոխվելու՝ նոյնպէս ապացոյցներ են և պերճախօս ապացոյցներ, որ այդ առարկութիւնը խիստ «արժէքաւոր, ճշմարիտ ու բարեմտութեամբ» ասված է և որ դիւղերն այսօր չեն կարողանում նիւթապէս ու բարոյապէս զոհացումն տալ մեր արդեան միջնակարգ ուսման տէր քահանաներին։

Եւ չեն կարող այնքան ժամանակ, մինչև որ չբարեփոխէք պայմանները, սրբազան տէր, նախ՝ նրանով, որ դպրոցական ծրագրի մէջ մտցնէք այնպիսի գիտութիւններ, որոնք մղեն նորաւարտին դէպի գիւղական պարապմունքները, և երկրորդ նրանով, որ գիւղական քահանայի վիճակն ապահովէք մեր դպրոցների մէջ նրանց զաւակներին ձրի ընդունելով, ձեր իշխանութեան ներքոյ եղած թոշակաւորները նրանց որդիներից ընտրելով, քաղաքների եկեղեցիների ու վանքերի հարուստ եկամուտներից նրանց յատուկ նպաստներ տալով և այլն և այլն։

ԺԵ.

«Քահանաների վիճակի ապահովութիւն և նրանց ընտրութեան նկատմամբ եկեղեցական օրէնքի պահանութիւն – ահա երկու գլխաւոր պայմաններն եկեղեցուն արժանաւոր պաշտօնեաներ տալու համար և երկուսն էլ հաստատուն հողի վրայ էին դրված սինոդի վերը յիշուած կարգադրութեամբ» *) գրում է սրբազան հեղինակը։

Որ 100 – 150 ծուխը քահանայի համար շատ հեռու է վիճակի ապահովութիւն լինելուց - մենք ցոյց տվինք վերը. այժմ դանք ընտրութեանը։

Մեր եկեղեցական օրէնքը եկեղեցու բովանդակ ծխին է տալի քահանայացուի, այլ ոչ քահանայի ընտրութիւնը։

Քահանայի ընտրութիւն չկայ մեր եկեղեցական օրէնքով – չկայ և քահանայի կարգումն հոգևոր իշխանութեան ձեռքով։

Ձեռնադրութիւնը կրօնական արարողութիւն է, որ

---

*) Քահ. Խնդ. եր. 151

ներքին կերպով՝ հոգոյն սրբոյ շնորհաց արժանացնելու հետ՝ հաստատում է ընտրողի և ընտրվողի համաձայնութիւնը — դաշը ցմահ անեղծ պահելու պայմանով **)։

Այս հանդամանքում ենթադրվում է երկու հիմնական հասկացողութիւն — որ եկեղեցին հարսն է և Յիսուս սրա փեսան։

Եկեղեցու մարմնացումն աշխարհի մէջ ժողովուրդը, բանաւոր հօտն է, իսկ Յիսուսի գաղափարների պաշտօնեան ու կենդանի աշխարհի համար Նրա կողմից առնելիքների կատարողը՝ քահանան։

Հարսն արդէն քրիստոնէական կրօնի վարդապետութեամբ այնքան հասունացած է, որ իր փեսայի ընտրութիւնն ինքը պիտի կատարի։ Քանի կենդանի է հարսը և կենդանի է սրա հաւանած ու ընտրած փեսան՝ պիտի միմեանց համար լինեն։

Մի քահանայի առնել իր եկեղեցուց տանել մի այլ եկեղեցի՝ նոյնն է, ինչ որ մի փեսայի առնել իր հարսից և տանել տալ այլ հարսի։

---

*) Այսպէս և հնումը՝ եպիսկոպոսացուներն ընտրվել են թեմից ու ձեռնադրութեամբ և օծումով ստացել են եպիսկոպոսական աստիճան ցմահ իրեն ընտրող թեմի առաջնորդը մնալով։ Այսպէս և հայոց հայրապետը ընտրվում է ազգից ու ձեռնադրութեամբ և օծումով ստանում է կաթուղիկոսական աստիճան մնալով ցմահ հայրապետ ազգի։ Այսօր ամենայն հայոց հայրապետի վերաբերմամբ ընտրութեան և օծման այս կարգը մնացած է ամուր և անփոփոխ։ Քահանաների վերաբերմամբ արդէն նկատվում են երերումներ, զարտուղութիւններ, իսկ եպիսկոպոսների մասին ժողովրդի ընտրութիւնը վերացել է և հայրապետի ձեռնադրութեամբ ու օծմամբ ստանում են նրանք եպիսկոպոսական աստիճան, այլ ոչ թեմ, պաշտօն։

Սա քրիստոնէական եկեղեցու անարատութեան զգացումները տրորել, քրիստոնէական եկեղեցու հասունութեան, ազատ ու մաքուր կապերը խառնակել, աղարտել կնշանակի։

Այսպէս ուրեմն քահանայի ընտրութիւն չկայ և քահանայի կարգումն չկայ. այս երկուսն էլ նորամուծութիւն է, որ քահանային իր ներքին ու վսեմ կոչումներից խսպառ հեռացնելով՝ դարձնում է չոր պաշտօնակատար — արարողութիւն կատարող և որ այսպիսով ջնջում է ընտրողի և ընտրվողի, հարսի ու փեսայի, զաւակի ու ծնողի մտերմական սրտագին, հոգեկան կապերը։

Նշանակովի, կարգովի քահանաները չեն լինիլ հօտի տէր հովիւներ, այլ վարձկաններ, չեն լինիլ պահող - պահպանողներ, այլ միայն խուզողներ։

Եւ ժողովուրդը դատապարտելի անտարբերութեամբ տանում է իր իրաւունքների այդ աստիճան ոտքի կոխան դարձնելը, իր նուիրական զգացմունքների հետ այդպիսի ապօրինութեամբ խաղալը...

Քահանաներ կարգելու, արձակելու այս նոր ճանապարհը ամենաուր հոգևորականին — քահանային տանում հպատակեցնում է կղերականի շահերին...

Ժամանակ է ժողովրդին, առաքելական ազատ հանրական եկեղեցու դաւակներին դարձնելու և իրենց իրաւունքների տէրը դառնալու։

Դառնանք քահանայացուի ընտրութեանը, որի մասին ասացինք, որ մեր եկեղեցական օրէնքները եկեղեցու բովանդակ ծխին են տալի, այլ ոչ թէ նրա մի մասին։

Ըդ մեր գիւղերում քանի՞ միջնակարգ կրթութեան տէր անձինք կան գիւղական հասարակութեան անդամներ, գիւղում մնացող գործողներ, որոնց միջից ծուխը, հասարակութիւնը կարողանայ ընտրութիւն անել։

Ընտրութիւն անուանվում է այն գործողութիւնը, որ ընտրողն իր անձնական համոզումով, իր խղճի վկայութեամբ տալիս է իր ձայնը, առանց որ և իցէ կողմնակի ճնշման ու ազդման։

Գիւղացին ինչպէս կարողանայ միջնակարգ կրթութիւն ունեցողներից վարքով, բարքով, նիստ ու կացով լաւին ընտրել, երբ այդպիսիները չկան իրենց մէջ, իրենց գիւղում։

Նա պէտք է դրսից հրաւիրի։

Դրսից հրաւիրածը կլինի անծանօթ, որի ընտրութիւնը, եթէ յաջողի էլ, չի կարող համարվել ծխի, հասարակութեան ընտրութիւն, այլ կլինի առաջարկող անձինքների, միջնորդների ընտրութիւն, թէկուզ այդ առաջարկողը—միջնորդը լինի այնպիսի վստահելին, որպիսին է ինքը թեմական առաջնորդը կամ սրա կոնսիստորիան։

Ախր, մենք չենք կարողանում ըմբռնել, թէ ինչպէս պիտի մի գիւղական հասարակութիւն իր մէջ չեղած, իր հետ լուծ չքաշած, կեանքի չարն ու բարին իր հետ չբաժանած անծանօթ գործողների միջից քահանայացու ընտրի, որ այս ընտրութիւնը ընդ նմին և կանոնաւոր լինի թէ էութեան և թէ ձևի կողմից, և թէ գիտակցական։

Կարելի՞ է միթէ ծխի, հասարակութեան օրինաւոր ընտրութիւն համարել այն ընտրութիւնը, որ ծուխը, հասարակութիւնը թղթի վրայ կկայացնի հաւատալով, այս կամ այն հիմնարկութեանը կամ անձին ու նրա յուցումներին։

«Ընտրութեան նկատմամբ եկեղեցական օրէնքի պահպանութիւն» և «հայ գիւղացիներն ընդունակ են շատ շուտով *ըմբռնելու օգտակար խորհուրդ եւ հետևելու նրան*» *) դարձուածները ոչ միայն չեն հաշվում իրար հետ, այլ և լայն ճանապարհ են բաց անում ժողովրդական ընտրութեան նկատմամբ հետզհետէ շեղումներ, սղումներ, սահմանափակումներ ու ցուցմունքներ և վերջ ի վերջոյ «կարգումներ» առաջ բերելու։

Եւ ովքեր պիտի լինին հայ գիւղացիներին օգտակար խորհուրդներ տվողները։

Քիչ շատ պաշար, շնորհ ունեցող վարդապետները դեռ երիտասարդ հասակներից ոչինչ բարոյական մխիթարութիւն չգտնելով գիւղացիների մէջ, փախչում են նրանցից այլ և այլ պատրուակներով։

Քաղաքների մէջ ամեն յարմարութիւնների վրայ հանգչած սրբազան առաջնորդները իրենց կոչման անհամապատասխան հոգևոր գործիչներին գաւառ ու գիւղ են քշում։

Սինոդը խեղճ գիւղերին ծխական ողորմելի դրպրոց աւարտողներին բաւական արժանաւոր քահանայացու է հրատարակում տ. Սեդրակեանի առաջարկութեամբ։

---

*) «Քահ. Խնդ.» եր, 204։

Սրանք պէտք է լինին թշուառ հայ գիւղացիներին օգտակար խորհուրդներ տվողները...

Մեր համոզմունքով, ժողովրդի, թէկուզ գիւղացու ազատ ընտրութեան իրաւունքները այլ և այլ հոգաբարձուների, խորհրդատուների ու միջնորդների ենամակալութեան տակ դնելը միշտ վնասակար է։

Սա շատ աւելի զգուշանալու և վտանգաւոր հանգամանք է, քան մի քանի տասնեակ տգէտ քահանաների աւելանալը կամ ձեռնադրելը։

Մեր եկեղեցու թերևս հաստատութեան օրից ձեռնադրվել են անգրագէտ, անուսում տիրացուներ և սակայն, ի զարմանս մեր ամենի, մեր եկեղեցին ջրի ու սրի, հրի ու փոթորկի միջից անցնելով, պահել է իր գոյութիւնը և այս՝ չնորհիւ այն հանգամանքի, որ հովիւները ժողովրդից ընտրված լինելով, ժողովրդի հետ, ժողվրդից անբաժան են եղել, ժողովրդին ծանօթ — մօտ են եղել։ Բայց թէ արդեօք կանգուն կլինէր մեր եկեղեցին իր առաքելական գոյնով, հոգով, եթէ հովիւները նշանակովի վարձկաններ լինէին— մի շատ մեծ հարց է։

Բայց եթէ՝ «ընտրութեան նկատմամբ եկեղեցական օրէնքի պահպանութիւն» ասելով Արիստակէս եպիսկոպոսը հասկանում է ծխականների կողմից առաջարկված քահանայացուներից, այլ ոչ քահանաներից հոգևոր իշխանութեան կայացրած ընտրութիւնը, որ ընտրութիւն չէ, այլ արդէն կատարված ընտրութեան վաւերացումն կամ մերժումն, նայած ընտրվածի քահանայական դիտելիքների մէջ ունեցած հմտութեանը թէ խակութեանը, այն ժամանակ կասենք, որ

անիրագործելի է սրբազանի յոյսերն ու ակնկալութիւնները։

Կղերականութեան դիմող կուսակրօնի ձեռքից որչափ կախված կլինին ամուսնաւոր հոգևորականի վիճակի բարւոքելու հանգամանքները, այնչափ դժուար կլինի ցանկալի վախճանի սպասելը։

Այո, կուսակրօն մեր հոգևորականութիւնը իսկապէս կաշխատի տալ ազգին ու եկեղեցուն արժանաւոր քահանաներ միայն այն ժամանակ, երբ ինքը տոգորված կլինի առաքելական եկեղեցու հոգով, երբ իր բոլոր գործողութիւններն ու մտածողութիւնները կլինեն թելադրվված ժողովրդական - համայնական զգացումներից։

Եւ այս կլինի նոյն իսկ մեր օրերում, եթէ վերադարձնեն ժողովրդին վիճակաւորների ու եպիսկոպոսացուների ընտրութիւնը։

Պետութեան մեզ տված մեր եկեղեցական կանոնադրութիւնը հաստատված է մեր նախնական եկեղեցու կանոնների հոգուն համեմատ։ Ցիշեալ կանոնադրութեան 907 յօդուածը (հրատ. 1857 թ.) մեր եկեղեցու կառավարութիւնը տալիս է հոգևորականութեանը նոյն եկեղեցու օրէնքների և աստիճանակարգութեան համաձայն։

Բարձրագոյն հաստատված այս կանոնադրութեան մէջ եկեղեցական այլ և այլ պաշտօնեաների ընտրութեան եղանակի մասին ոչինչ յիշատակութիւն չկայ, բացի հայրապետի ընտրութիւնից, այլ կան որոշ ցուցումներ սրբազնագործ պաշտօնեաների, քահանաների, վարդապետների, վանականների, առաջնորդների կարգման ու հաստատման։

8

տատութեան մասին։ Սրանից պարզապէս պէտք է եզրակացնել, որ այդ պաշտօնեաների ընտրութիւնը (ինչպէս այսօր քահանայինը) մնում է այնպէս, ինչպէս պահանջում են մեր եկեղեցու հին օրէնքները—կանոնները։

Ինչպէս այսօր հոգևոր իշխանութեանն է մնում ընտրված քահանայացուներից արժանաւորագունին ձեռնադրելը, այսպէս պիտի լինի և ընտրված փոխանորդներից արժանաւորագունին կարգելը, ընտրված առաջնորդացուներից արժանաւորագոյններին Բարձրագոյն հաստատութեան ներկայացնելը։

Հիմնական ու էական հանգամանքն այն է, որ տէրութիւնը ճանաչել է մեր հին եկեղեցու կանոնները և որ իր մեզ տված կարգադրութիւնների հիմն է ընդունել հինը. այս պարագան ցոյց է տալի, որ մենք ի զուր ենք շեղվել մեր հնաւանդ կանոններից առաջնորդների, եպիսկոպոսացուների ընտրութեան վերաբերութեամբ։

Այլապէս չի կարելի սպասել բաւարար արդիւնք յարուցված խնդրի մասին այն տեղից, ուր իշխանաւորը՝ կուսակրօն հոգևորականը՝ թոթափված իր վրայից ժողովրդից ընտրվելու, ժողովրդից կախումն ունենալու, ժողովրդի առաջ հաշուետու լինելու պայմանները՝ բռնած կլինի անկախ կեանք ու վիճակ ստեղծելու, եկեղեցին իրեն ծառայացնելու համար, իսկ ամուսնաւոր հոգևորականը կմնայ ժողովրդից ընտրվելու պայմաններում։

Սա անբնական կացութիւն է։

Լաւ և արժանաւոր քահանան իրրև ժողովրդից

ընտրված, իրրև առաքելական եկեղեցու հոգին իրացրած պաշտօնեայ չի կարող խորին ակնածութեամբ վերաբերվելով հանդերձ դէպի եպիսկոպոս առաջնորդի բարձր աստիճանը, անտարբեր նայել և չբողոքել նրա կղերական ընթացքի դէմ, նրա ազգային եկեղեցուն խորդ ձգտումների դէմ։

Այսպիսի հակասական հանգամանքներն ի դերև կհանեն ամեն տեսակ կարգադրութիւն յօգուտ և յանուն քահանայական դասի բարւոքման։

Առաջ պէտք է կուսան և ամուսնաւոր հոգևորականների առաջ դալու պայմանները միանմանացնել, նրանց ձգտումները ներդաշնակել, նրանց գործունէութեան ընթացքը համանմանացնել և ապա թէ ցանկալի արդիւնք սպասել։

Այլապէս կուսան հոգևորականութիւնը չի բարւոքիլ ամուսնաւոր հոգևորականների վիճակը։

Այս կետում, մեզ թւում են շատ ուղիղ Մուշեղ վարդապետի «Կրօնքի հիւծախտը» վերնագրով աշխատութեան մէջ տեղ դտած խօսքերը, որ ահա առաջ ենք բերում այստեղ, առնելով «Արևելք»ի 1900 թ. 4176 համարից.

«Այսօր այլ ևս գաղտնիք մնացած չէ այն իրողութիւնը, թէ կուսակրօնութիւնը մարմնասէրներու ծայրայեղութենէն ծնած ուրիշ ծայրայեղութիւն մն է, իբր մարմնացումը սկզբունքի այն հայեցողականներուն, որոնք մարմինը պիղծ համարելով և նիւթը՝ իբր չարիքներու աղբիւր, զերագոյն առաքինութիւնը կդտնէին ժուժկալութիւններու չափազանցութեան մէջ։ Կուսակրօնութեան ծագումը ցոյց կտայ մեզի թէ կու-

սակրօնները՝ քաշուած անապատներու խորերը և նը-զովքով արդելուած իրենց խորշերէն դուրս ելլել, այդ կեանքին կպատրաստուէին աչքի առջև ունենալով *ոչ թէ քրիստոնէական ընտանեկան բարոյականին հոգը, այլ մանաւանդ իրենց անձին եւ սոսկ իրենց անձին սխալ ըմբռնուած փրկութիւնը:*

«Անձնասէրներու սոյն կազմակերպութեան մէջ չենք կրնար ըմբռնել թէ ինչ աւելի արժանիք կրնանք գտնել, քան այն մարդերուն մէջ, որոնք շուկան վաճառականութեամբ զբաղած ատեններին՝ իրենց օգուտը կմտածեն առանց օգտակարութիւն մը կարենալ ունենալու իրենց նմաններուն։

«Կուսակրօններուն կանուխի այդ *անձնասիրութիւնը՝ ցարդ կտեսնուի ամենուս վրայ և կուսակրօնութիւնը իր անապատականի խցիկներէն զանի միայն դուրս ելնաւ հետը:* Ու աւելի այսօր թերևս երբ *եկեղեցականութեան խորդ զաւակը – կուսակրօնը* ապարէզի մը դլուխ անցած, եթէ ոչ կամաւ, զէթ ակամայ դայթակղութիւն կներշնչէ միտքերու այս ու այն կուսակրօնին զեղծ ու մեղծ վարմունքովը... Եւ կուսակրօնութեան անցեալն ու ներկան, հինն ու նորը ընաւ տարբերութիւն չունին իրարմէ, ինչպէս հին ու նոր վարիսեցութիւնը։

«Հիմայ որ դրութեան մը ծաղումը մատնանիշ կընենք պատմութեան վրայ յենլով, սոսկ անհատական կարծիք մը կրծնի իմ մէջ ենթադրելու համար թէ *մի զուցէ կուսակրօնին դիրքը դեռ ժամանակի մը համար պահելու սկզբունքը թելադրած ըլլայ մեզի ջանալու, որ քահանան չը տիրանայ իր արժանաւորութեանը։*

Ահա թէ որպիսի աւելի լուրջ հիմունքների, ու հայեացքների վրայ բացատրված և ուսումնասիրված էինք սպասում տեսնել՝ «Դրեպէր»ի թարգման Արիստակէս եպիսկոպոսի «Քահանայական Խնդիր»ը։

Ժ.Զ.

Ո՛չ, սրբազան տէր, միմիայն բարի ցանկութիւնը և թեթև կերպով մտածված ու արված կարգադրութիւնները և զրքի մէջ յայտնված լայն դաղափարները, սրանց հետ միասին ձեր կարդակից բոլոր եղբայրների արարքների ու գործողութիւնների *ամբողջական անուն—ազգանուններով* մերկացումները չեն բաւուքիւ քահանայական դասակարդը։

Աւելի լուրջ միջոցներ ու գործօններ են պէտք։

Թոյլ տվեցէք նկատելու որ քահանայական դասակարդը բաւուքելու *ցանկութիւն* դուք դեռ 22 տարեկան հասակից ունեցել էք, բայց ինչ էք արել ձեր ձեռքի տակ գտնված ընդարձակ միջոցներով։

Դուք, սրբազան տէր, ձեր այս վերջին դրքով դալիս էք ուրիշներին մեղադրելու հետ միատեղ մեզ հիասթափեցնելու ձեր *գործունէութեան* վերաբերութեամբ։

Մեզ, որ ձեզանով ոգևորվածներից մէկն էինք, որ սիրում էինք հաւատալ ու ճանաչել ձեզ հաւատքը գործերով արդարացնող, խրատները անձի օրինակով

կենդանացնող, աւետարանական մարդասիրութեան գաղափարները հայ ազգի էն իսկական կարօտաւորների մէջ բաշխող մի մեծ հոգևորական։

Այն ինչ այսօր մենք ձեզ ձեր ձեռքով կազմած նկարագրութեան մէջ տեսնում ենք լոկ բառերով ժողովրդասէր, իսկ գործերով՝ միմիայն ուրիշներին մեղադրող և իր կողմից իր եկեղեցու ու ժողովրդի համար «շատ էլ ջան ու հոգի» չդնող եպիսկոպոսներից։

Դիմենք մեր հոգին ճնշելու չափ այս ծանր եզրակացութիւնը մեզ ներշնչող տողերին։

Դուք՝ իբրև յաջորդ, փոխանորդ, առաջնորդ՝ մտել էք ժողովրդի մէջ, ձեր աչքերով տեսել էք, ձեր ձեռքերով շօշափել էք մանաւանդ հայ գիւղացու ողորմելի վիճակը և սրտի մորմոք առաջ բերելու, մարդի հոգի դղրդելու, մազերը ցցելու չափ կենդանի նկարագրելով այդ ամենը, վերջացնում էք ձեր խօսքն այսպէս. «Մէկ խօսքով հայ գիւղական ժողովուրդն այսօր թէ նիւթապէս և թէ բարոյապէս քայքայվելու վտանգաւոր դրութեան է հասել և մահացու մեղք է տեսնել նորան այդ դրութեան մէջ և անտարբեր մնալ, պէտք է օգնել նորան։ Բայց ինչով օգնել» *)։

Ահա թէ ձեր հարցին Դուք իբրև գործիչ հոգևորական ինչով էք պատասխանում ձեր դրքով։

Ա. Իբրև առաջնորդական երիտասարդ թարմ փոխանորդ՝ «կեցութեան դժուարին պայմաններ»ից ստիպված «անաւոդջութիւն» պատճառաբանելով, գիւղական ժողովուրդը թողնելով ու հեռանալով։

*) Քահ. Խնդ. եր. 200

Բ. Իբրև պատմական Տաթեւի վանահայր ու յաջորդ՝ «պոստային հաղորդակցութեան ու մտաւորական կանոնաւոր պարապմունքի յարմարութիւնների» զրկանքներ պատրվակելով՝ խաչերն անտէր անտիրական, հարուստ կալուածներն անխնամ թողնելով և ժողովրդի մէջ գործելում ոչինչ «բարոյական մխիթարութիւն» չզգալով, նրանցից փախչելով։

Գ. Իբրև Ղարաբաղի առաջնորդական փոխանորդ՝ «Բարձրից եկած հրամաններին» (*ազէտ քահանաների ծաւալը ընդարձակելու հրամաններին*) ոչ միայն չդիմադրելով, այլ և նրանց գործադրելով։

Դ. Իբրև Թիֆլիզի թեմական առաջնորդ՝ Թիֆլիզ քաղաքի «հրէշ, թոկից փախած, իրենց կոչման չհամապատասխանող» քահանաներին գաւառները քշելով կամ *երբեմն* մեր եկեղեցու նախնաւանդ կանոններով վարվելով, որպէս զի հատուցված լինի առաջնորդական պարտքը դէպի հօտը և կամ վերջապէս՝ «ամենայն հայոց (Մակար) կաթուղիկոսի Թիֆլիզում անձամբ արած մի քանի ապօրինի կարգադրութիւնները» պատրուակ առնելով՝ առաջնորդութիւնից հրաժարվելով։

Եւ Ե. իբրև սինոդի անդամ քահանայի արժանաւորութեան ու գիտութեան չափը ոչ թէ քահանայի կոչման, պաշտօնի, այլ նրա ստացած եկամուտների հետ կապելու կարգադրութիւն անելով։

Թող նների սրբազան Արիստակէս մեզ ասելու, որ եթէ մէկը մեր ներկայութեամբ այսպիսի գոյներով նկարագրէր Սեղբակեան եպիսկոպոսի ազգին մատուցած գործունէութիւնը, մեր բոլոր ուժով կհակառակէինք, բայց այսօր, երբ այս նկարագիրն ինքն է իր

ձեռքով տալի իր գրքի մէջ, չենք կարողանում խորապէս չվշտանալ։

Բառերով սրտացաւութիւնը, աւետարանական և այլ հանճարաւոր մատենագրների վկայաբանութիւններով զարդարված յորդորականներն ու խրատները և ուրիշների կատարած գեղծումների մերկացումները երբ չեն եղել հոգևորականի շուքն ու սքողանքը, հոգեկան մեծ հրճուանքն ու պարծանքը։

Շատ ճիշտ է «Արևելք» լրագրի գիտողութիւնը. «Մեր եպիսկոպոսներն ու առաջնորդները աղեկ կհրահանգեն ժողովուրդը և իրենց ստորադաս պաշտօնեաները, իսկ երբ խնդիրն իրենց վրայ է՝ այդ կտաբբերի։ Նախ՝ որ ստամոքսի հիւանդութիւն կայ, երկրորդ՝ կլիմայի անյարմարութիւն»։

«Քահանայական Խնդիրը» արդարև արժէքաւոր աշխատութիւն է «խոշոր մերկացումներ»ի տեսակէտից, ինչպէս շեշտել էր «Մշակ»ի բանասիրականներում պ. Լէօ, և՝ մեր կարծիքով՝ այդ արժէքն աւելի մեծանում է նրանով, որ ուրիշների գեղծումները քահանայական խնդրի վերաբերմամբ, առանձին իմն խնամքով մերկացնելու հետ միաժամանակ՝ բաւականապէս մերկացնում է զերապատիւ հեղինակը և իր չոր, անջիգեաը գործունէութիւնը։

Լինի այս մերկացումը կամայ թէ ակամայ—մի և նոյնն է. գիրքն այս կէտից խիստ արժէքաւոր է մնում։

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
C.C.P.A. Публичная Библиотека
7/XI-1922
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆ

ՀՀ Ազգային գրադարան
NL0162722

2784